



ISSN 1829-4219

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ
ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

№ 86 2015



- ԴԻՊԼՈՄՆԵՐ ՍՏԱՑԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆԱՎԱՐՏ ԴԱՏԱԽԱԶԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ
- ԼԴՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ 90 ԱՄՅԱԿԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՅՑԸ ԼԴՀ
- ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ ԵԼՈՒՅԹԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎՈՒՄ
- ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾՈՎ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՄԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՄԵԽԱՆԻՋՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



Հիմնադիր և հրատարակիչ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅՈՒՆ

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

№ 86 2015

ՀՀ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ
ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1997 ԹՎԱԿԱՆԻՑ

Էմիլ Բաբայան ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ, Հայաստանի ամերիկյան համալսարանի իրավագիտության ֆակուլտետի ավագ դասախոս, (խորհրդի նախագահ)

Թամարա Շաքարյան ՀՀ գլխավոր դատախազության իրավական ապահովման և եվրաինտեգրման բաժնի պետ, իրավ. գիտ. թեկնածու, ՀՀ կառավարման ակադեմիայի իրավագիտության ամբիոնի դասախոս, (գլխավոր խմբագիր)

Դավիթ Մելքոնյան ՀՀ գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման վարչության պետ, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ

Մհեր Հակոբյան ՀՀ գլխավոր դատախազության իրավական ապահովման և եվրաինտեգրման բաժնի դատախազ, իրավ. գիտ. թեկնածու

Գևորգ Դանիելյան ՀՀ սահմանադրական դատարանի խորհրդական, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Վահրամ Շահինյան ՀՀ հատուկ քննչական ծառայության պետ, իրավ. գիտ. թեկնածու (համաձայնությամբ)

Հովհաննես Սյրեփանյան ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պետաիրավական հետազոտությունների բաժնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Գառնիկ Սաֆարյան ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Արման Թաթոյան ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (համաձայնությամբ)

Ռուբեն Մելիքյան Արդարադատության ակադեմիայի ռեկտոր, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (համաձայնությամբ)

Գլխավոր խմբագիր՝ Թ. ՇԱՔԱՐՅԱՆ

Հանդեսը ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈՀ) կողմից ընդգրկված է թեկնածուական (1999թ.) և դոկտորական (2002թ.)ատենախոսությունների հիմնադրույթների հրապարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

Խմբագրության հասցեն.
0010 ք. Երևան, Վ. Սարգսյան 5
Հեռախոս՝ 511 530, ֆաքս՝ 585 152
Էլ. հասցե՝ orinakanutyun@prosecutor.am
www.prosecutor.am
ISSN 1829-4219

© Համակարգչային շարվածքը,
ոճը, տառաձևերը և էջադրումը՝
«ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ»

Հանձնված է արտադրության՝ 18.01.2015թ.
Ֆորմատ՝ 60x84 1/8
Տպաքանակը՝ 500
Ծավալը՝ 4,5 պայմ. մամուլ
Գրանցման վկայական՝ N 688

Տպագրված է «Աստղիկ Գրատուն»
հրատարակչության տպարանում
Երևան, Գ. Քոչարի 21

© «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ», 2015 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

Դիպլոմներ ստացան Արդարադատության ակադեմիայի առաջին շրջանավարտ դատախազի թեկնածուները3

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ

ՀՀ գլխավոր դատախազի հրամանով5
ՀՀ գլխավոր դատախազի շնորհավորական ուղերձը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատախազության 90 ամյակի կապակցությամբ5
ԼՂՀ դատախազության 90 ամյա հոբելյանի կապակցությամբ ԼՂՀ դատախազության մի խումբ աշխատակիցներ ՀՀ գլխավոր դատախազ Գևորգ Կոստանյանի հրամաններով խրախուսվել են6

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ՀՀ գլխավոր դատախազի ցուցումով Մարտի 1-ի տասը զոհերի գործերը կքննվեն առանձին վարույթներով7

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ

Մարդու իրավունքների եվրոպական չափանիշները և եվրոպական դատարանում կառավարության լիազոր ներկայացուցչի դերը մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանության ապահովման հարցում խորագրով միջազգային համաժողով 8
ՀՀ գլխավոր դատախազ, ՄԻԵԴ-ում ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցիչ Գ. Կոստանյանի ելույթը միջազգային համաժողովում9

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Գ. Կոստանյանը հանդիպել է Վ. Շորմի հետ12
Գ. Կոստանյանը հանդիպել է Գ. Մատյուշկինի հետ.....12

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Սամվել Յուզբաշյան, Արամ Վարդևանյան Որոշ խնդիրներ քրեական գործով վարույթը կասեցնելու մասին որոշման բողոքարկման մեխանիզմների վերաբերյալ13

ԿՐԻՄԻՆԱԼՈԳԻԱ

Երեմիա Ասատրյան, Արամ Սիրեկանյան Սեռական բնույթի հանցագործությունների վիկտիմիզացիայի և վիկտիմայնության առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում19

ԻՐԱՎԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Արեվիատ Հովհաննիսյան Բնական իրավունքի հայեցակարգն ըստ հին Հունաստանի իմաստասերների28

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Մարինե Գյուրջյան Մարդու իրավունքների եվրոպական դատարանին ուղղված դիմումների բովանդակությանն ու ձևին ներկայացվող պահանջները34

МЕЖДУНАРОДНОЕ ПРАВО

Еремян Лилит Принцип защиты природной среды в рамках международного гуманитарного права41

ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ

Արմեն Հարությունյան Կատարողական վարույթում իրավահարաբերությունների բնույթը և դրանց զարգացման արդի միտումները49

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Տիգրան Ղազարյան Անչափահասների նկատմամբ նշանակվող ազատազրկման հետ կապված պատժատեսակները58

ԴԻՊԼՈՄՆԵՐ ՍՏԱՋԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆԱՎԱՐՏ ԴԱՏԱԽԱՁԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ



2014 թվականի դեկտեմբերի 19-ին Արդարադատության ակադեմիայում տեղի ունեցավ հանդիսավոր միջոցառում՝ նվիրված Արդարադատության ակադեմիայի առաջին ունկնդիրների մասնագիտական պատրաստման դասընթացի ավարտին: Դիպլոմները շրջանավարտներին հանձնեց ակադեմիայի ռեկտոր Ռուբեն Մելիքյանը:

Հանդիսությանը ներկա էին դատախազության, դատական իշխանության, արդարադատության նախարարության, ՀՀ փաստաբանների պալատի ներկայացուցիչներ, Ազգային ժողովի պատգամավորներ, Ակադեմիայի դասախոսներ և այլ հյուրեր:

Արդարադատության ակադեմիայում մասնագիտական պատրաստում է անցել դատախազների թեկնածուությունների ցուցակում ընդգրկված տասնհինգ ունկնդիր, որոնցից ուսուցումը հաջողությամբ ավար-

տել է տասնմեկը: Դատախազների թեկնածուությունների ցուցակում ընդգրկված անձինք Արդարադատության ակադեմիայում ութ ու կես ամիս տևողությամբ (2014 թվականի մարտի 17-ից նոյեմբերի 28-ը) ուսուցում են անցել Արդարադատության ակադեմիայի կողմից մշակված՝ «Դատախազների թեկնածուությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման» ուսուցման ծրագրի հիման վրա՝ ստանալով գիտելիքներ և հմտություններ ընդհանուր մասնագիտական, հատուկ մասնագիտական և հարակից մասնագիտական ոլորտներում: Նրանք ուսումնասիրել են ընդհանուր թվով 30 մասնագիտական դասընթացներ: Հագեցած կրթական ծրագրում ներառվել է նաև ավելի քան երեք ամիս տևողությամբ փորձաշրջանը:

Շնորհավորելով ունկնդիրներին՝ Ար-

● ՕՐԻՆԱԿԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ № 86 2015



դարադատության ակադեմիայի ռեկտոր Ռուբեն Մելիքյանը նշեց, որ ունկնդիրները մասնագիտական պատրաստման շրջանակում 30 քննություն են հանձնել, անցել բավական դժվար ճանապարհ, իսկ դժվարություններով ձեռքբերածն ավելի արժեքավոր է լինում:

«Վախճանը դատախազի տեղակալ Էմիլ Բաբայանը, ով ղեկավարում է Ակադեմիայի կառավարման խորհուրդը, առանձնահատուկ ընդգծեց ապագա դատավորների և դատախազների՝ պետության անունից մարդկանց ճակատագրեր որոշելու կարևորագույն առաքելությունը, ինչը դառնալու է նրանց ամենօրյա գործունեության բաղկացուցիչ մասը:



Արդարադատության ակադեմիայի շրջանավարտներն իրենց խոսքում վստահեցրին, որ ակադեմիայում ձեռք բերած գիտելիքները և հմտությունները թույլ կտան արդյունավետ իրականացնել իրենց լիազորությունները՝ բարձր պահելով դատախազության հեղինակությունը:



ՀՀ ՉԼՍԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉԻ ՀՐԱՄԱՆՆԵՐՈՎ



ՀՀ դատախազությունում երկարամյա անբասիր աշխատանքի և հանցավորության դեմ պայքարի գործում ներդրված ավանդի համար ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ **Հրայր Բադալյանը**, ՀՀ գլխավոր դատախազի հրամանով պարգևատրվել է հուշանվերով:

ՀՀ ՉԼՍԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ 90 ԱՄՅԱԿԻ ԿԱՊԱԿՅՈՒԹՅԱՄԲ

ԼՂՀ գլխավոր դատախազ, արդարադատության երրորդ դասի պետական խորհրդական
Ա. ՄՈՍԻՅԱՆԻՆ

Հարգելի Արթուր Արմենի

Ընդունեք իմ շնորհավորանքներն ու լավագույն բարեմաղթանքները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Դատախազության 90 ամյակի կապակցությամբ:

ԼՂՀ դատախազությունը օրենքի գերակայության սպասողման, օրինականության պահպանման և ամրապնդման, ինչպես նաև պետության և քաղաքացիների շահերի պաշտպանության ամբողջական համակարգ է:

Պետության արդարադատության համակարգի կայացման կարևորագույն այս օղակն իր անցած դժվարին ճանապարհով ու ինդիքների արդյունավետ լուծմամբ սպասցուցել է, որ սկզբունքային և անվերապահ աշխատանքի շնորհիվ է միայն հնարավոր ամուր պահել պետության հիմքերից մեկը՝ իրավապահ համակարգը:

Կրկին շնորհավորելով մասնագիտական փորձի առթիվ մաղթում եմ Ձեզ նոր ձեռքբերումներ դատախազական դժվարին ծառայության մեջ, առողջություն և հաջողություն Ձեզ և Ձեր ընտանիքներին:

Լավագույն ցանկություններով՝ **Գ. ԿՈՍՏԱՆՅԱՆ**

**ԼՂՀ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ 90 ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԻ ԿԱՊԱԿՅՈՒԹՅԱՄԲ
ԼՂՀ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ ՄԻ ԽՈՒՄԲ ԱՇԽԱՏԱԿԻՅՆԵՐ
ՀՀ ՉԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉ ԳԵՎՈՐԳ ԿՈՍՏԱՆՅԱՆԻ
ՀՐԱՄԱՆՆԵՐՈՎ ԽՐԱԽՈՒՍՎԵԼ ԵՆ**

Հուշանվերներով պարգևատրվել են՝

**Արթուր Մոսինյանը
Արշավիր Ղարամյանը
Լորենտա Բարսեղյանը**

ԼՂՀ գլխավոր դատախազ,
ԼՂՀ նախկին գլխավոր դատախազ,
ԼՂՀ գլխավոր գլխավոր դատախազության մարդու
դեմ ուղղված և ընդհանուր բնույթի
հանցագործությունների գործերով բաժնի պետ,
Շուշիի շրջանի դատախազ,
Ստեփանակերտ քաղաքի դատախազի տեղակալ,
Քաշաթաղի շրջանի դատախազ:

**Վահրամ Ղահրամանյանը
Միեր Մանգասարյանը
Միեր Աղաջանյանը**

Շնորհակալություն է հայտարարվել՝

Արսեն Բարսեղյանին

ԼՂՀ գլխավոր դատախազության հատուկ
քննչական բաժնի պետ,

Գագիկ Իշխանյանին

ԼՂՀ գլխավոր դատախազության պետական
շահերի բաժնի պետ,

Կարինա Սիմոնյանին

ԼՂՀ գլխավոր դատախազության կազմակերպա-
վերահսկողական, վիճակագրության,
վերլուծության, իրավական ապահովման,
միջազգային կապերի և անձնակազմի հարցերով
բաժնի դատախազ,

Արինա Մելքումյանին

Հաղրութի շրջանի դատախազության ավագ
դատախազ,

Ասպրամ Ավանեսյանին

ԼՂՀ Ասկերանի շրջանի դատախազության ավագ
դատախազ:

**«Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդեսի
խմբագրական խորհուրդը շնորհավորում և նորանոր աշխատանքային
հաջողություններ է մաղթում բոլոր պարգևատրվածներին:**

ՀՀ Գլխավոր դատախազի ձուգողականության մասին 1-ի ՏԱՍԸ ԶՈՂԵՐԻ ԳՈՐԾԵՐԸ ԿՔՆՆՎԵՆ ԱՌԱՆՁԻՆ ՎԱՐՈՒՅՑՆԵՐՈՎ

ՀՀ գլխավոր դատախազ Գևորգ Կոստանյանը 2014 թվականի նոյեմբերի 21-ին հանդիպել է Մարտի 1-ի զոհերի հարազատներին:

Հաշվի առնելով, որ 2008թ. մարտի 1-ից 2-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքում տեղի ունեցած դեպքի առթիվ հարուցված քրեական գործով տուժողների իրավահաջորդներից յուրաքանչյուրը մտահոգված է իր հարազատի մահվան բացահայտման հանգամանքներով, ՀՀ գլխավոր դատախազը զոհերի հարազատների ներկայությամբ ՀՀ գլխավոր դատախազության «Հատկապես կարևոր գործերով քննության վարչությանը» հանձնարարել է գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտումն ապահովելու համար ցուցում տալ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում քննվող նշված քրեական գործից մահվան յուրաքանչյուր դեպքով առանձին վարույթներ անջատելու մասին: Գևորգ Կոստանյանը, կարևորելով այն փաստը, որ յուրաքանչյուր մարդու կյանքն ինքնին առանձին արժեք է, ընդգծել է, որ յուրաքանչյուր զոհի գոր-



ծի անջատումը ընդհանուրից բացառապես իրավական գործընթաց է՝ միտված գործի քննության արդյունավետության ապահովմանը: «Տուժողների իրավահաջորդներն օրենքով թույլատրելի սահմաններում ներգրավված կլինեն նախաքննության գործընթացում և հնարավորություն կունենան լիարժեք իրացնել տուժողի իրավահաջորդի իրենց իրավունքները», - հանդիպման ընթացքում զոհերի հարազատներին վստահեցրել է Գլխավոր դատախազը:



ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԼԻԱԶՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅՉԻ ԴԵՐԸ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՐՅՈՒՄ ԽՈՐԱԳՐՈՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ



2014 թվականի դեկտեմբերի 15-ին տեղի է ունեցել Մարդու իրավունքների եվրոպական չափանիշները և Եվրոպական դատարանում Կառավարության լիազոր ներկայացուցչի դերը մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանության ապահովման հարցում խորագրով միջազգային համաժողով, որի նպատակն է քննարկել մարդու իրավունքների պաշտպանության ժամանակակից կառուցակարգերը և մեր երկրում դրանց ներդրման հնարավորությունները, այդ հարցում ՄԻԵԴ-ում ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցչի դերը և գործունեության զարգացման ուղղությունները, ինչպես նաև ՄԻԵԴ-ի վճիռների կատարման ոլորտում ձեռքբերումներն ու այդ ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումները:

Միջազգային համաժողովին մասնակ-

ցել են ՀՀ գլխավոր դատախազ, ՄԻԵԴ-ում ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցիչ Գ. Կոստանյանը, ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ, ՄԻԵԴ-ում ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցչի տեղակալ Ա. Թաթոյանը, ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանը, ՀՀ արդարադատության նախարար Հ. Մանուկյանը, Հայաստանում Եվրոպայի խորհրդի գրասենյակի ղեկավար Օ. Պավլյուկը, ՀՀ սահմանադրական դատարանի անդամ, ՄԻԵԴ նախկին դատավոր Ա. Գյուլումյանը, ՄԻԵԴ-ում Ռուսաստանի Դաշնության կառավարության լիազոր հանձնակատար Գ. Մատյուշկինը, ՄԻԵԴ-ում Չեխիայի Հանրապետության կառավարության լիազոր ներկայացուցիչ Վ. Շորմը, ԵԽ Նախարարների կոմիտեի Իրավունքի գերակայության և մարդու իրավունքների գլխավոր տնօրինության, Եվրոպական դատարանի վճիռների կատարման վարչության բաժնի ղեկավար Ի. Կիտսու-Միլոնասը, ՀՀ արդարադատության ակադեմիայի ռեկտոր Ռ. Մելիքյանը, Հայաստանի փաստաբանների պալատի նախագահ Ա. Զոհրաբյանը, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի հարցերով փորձագետ Ա. Ղազարյանը, ՀՀ արդարադատության նախարարության Եվրոպական դատարանի հետ կապերի վարչության պետ Ա. Սեդրակյանը և այլ պաշտոնատար անձիք:



ՀՀ ՉԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉ, ՄԻԵԴ-ՈՒՄ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԼԻԱԶՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉ Պ. ԿՈՍՏԱՆՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎՈՒՄ

«Համաժողովին մասնակցում են մարդիկ, ովքեր կոչված են իրենց ամենօրյա աշխատանքով ապահովելու մարդու իրավունքների երաշխավորումը և պաշտպանությունը ինչպես Հայաստանի Հանրապետությունում այնպես էլ դրա սահմաններից դուրս: Այսօր մենք ապրում ենք այնպիսի փոխկապակցված աշխարհում, որտեղ իրականում մարդու իրավունքների պաշտպանության համար այլևս սահմաններ գոյություն չունեն: Վաղուց անցել են այն ժամանակները երբ յուրաքանչյուր պետություն իր ներքին գործն էր համարում թե ինչ չափով են պաշտպանված կամ ինչո՞ւ են հալածվում իր քաղաքացիները:

Ժամանակակից քաղաքակիրթ յուրաքանչյուր երկիր ձգտում է զարգացնել սեփական իրավական համակարգը առաջնորդվելով մարդու արժանապատվության գերակայության, նրա իրավունքների և ազատությունների իրական պաշտպանության հիմնարար սկզբունքով:

Այս խնդրի լուծմանն է ուղղված իրավունքների պաշտպանության եվրոպական համակարգը, որը սկզբնավորվել է Եվրոպայի խորհրդի կողմից 1950 թվականին «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի ընդունմամբ: Կոնվենցիան անգնահատելի է անձի իրավունքների ապահովման առումով, քանի որ ոչ միայն կոչված է երաշխավորելու անձի իրավունքներն ու հիմնարար ազատությունները, այլ նաև ներդնելու այդ հիմնարար արժեքների դատական պաշտպանության գործունե երաշխիքներ:

Այս մեխանիզմի բաղկացուցիչ մաս պետք է համարել Մարդու իրավունքների եվրոպական դատարանում պետության կառավարության ներկայացուցչի ինստիտուտը: Այն կոչված է լրացնելու կոնվենցիայով ստեղծված իրավապաշտպան դատական համակարգը և դրանով իսկ նպաստելու դատարանի գոր-

ծունեության արդյունավետության ապահովմանը:

Մեր երկրում մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքների համակարգի զարգացման տեսանկյունից կարևոր նշանակություն ունեցավ 2002 թվականի ապրիլի 26-ին Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի վավերացումը, ինչը մեր քաղաքացիներին հնարավորություն տվեց իրենց իրավունքների պաշտպանության հարցով դիմել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Իսկ 2003 թվականի դեկտեմբերի 4-ին ՀՀ կառավարությունն ընդունեց որոշում «Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցչի մասին», որն ուժի մեջ մտավ 2004 թվականին:

Կառավարության լիազոր ներկայացուցիչը, դասական իմաստով, իհարկե, հանդիսանում է պետության փաստաբանը եվրոպական դատարանում և ըստ այդմ ինչպես ցանկացած փաստաբան պարտավոր է հնարավորինս պաշտպանել պետության շահերը և հնարավորինս հստակ ներկայացնել պետության դիրքորոշումը այս կամ այն հարցով: Սակայն եվրոպական դատարանում լիազոր ներկայացուցչի պարտականությունները ավելին են քան զուտ ներկայացուցչությունը: Ըստ էության ներգրավված լինելով պետության շահերի պաշտպանությանը եվրոպական դատարանում, լիազոր ներկայացուցիչն ամենաիրազեկ պաշտոնյան է դառնում պետության իրավական համակարգում առկա խնդիրների և միևնույն ժամանակ այդ խնդիրների եվրոպական չափանիշներին համահունչ լուծումների վերաբերյալ: Այս համատեքստում անհրաժեշտ է նկատի ունենալ, որ լիազոր ներկայացուցիչը Հայաստանի վերաբերյալ ցանկացած վճռից հետո նախանշում է օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի կատարելագործման ուղղությունները, որոնք անհրաժեշտ են եվրոպական դա-

տարանի արձանագրած խախտումները հետագայում բացառելու համար:

Այս ամենով հանդերձ, չնայած նախադեպային զարգացած իրավունքի առկայությանը, Եվրոպական դատարանը ներկայում կանգնած է բարդ մարտահրավերների առջև: Մասնավորապես, յուրաքանչյուր տարի զգալիորեն ավելանում է Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների դեմ ներկայացվող գանգատների թիվը:

Առաջացած խնդիրների լուծման անհրաժեշտությամբ էր պայմանավորված նախևառաջ Եվրոպական կոնվենցիայի 14-րդ արձանագրության ընդունումը: Թեև իր լուծումներով այն կոչված էր նպաստելու դատարանի գործունեության արդյունավետության բարձրացմանը, այդուհանդերձ, դրա կիրառության փորձը ցույց տվեց, որ այն բավարար չէ: Դա էր պատճառը, որ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները առաջ քաշեցին այլ սկզբունքներ ևս: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է Ինտերլակենի, Իզմիրի և Բրայթոնի հռչակագրերին, որոնք գլխավորապես ուղղված էին Դատարանի սուբսիդիարության սկզբունքի ամրապնդմանը, դատարանի գործունեության, ինչպես նաև դատարանի դատական ակտերի կատարման արդյունավետության բարձրացմանը:

Այս հռչակագրերի համատեքստում հատկապես կարևորվեց Եվրոպական դատարանում պետությունների կառավարությունների ներկայացուցիչների դերը դատարանի իրավական դիրքորոշումների իրագործման հարցում: Այդ նոր մոտեցումների համաձայն կառավարությունների և նրանց ներկայացուցիչների գործունեությունը չպետք է սահմանափակվի միայն քաղաքացիների գանգատների կապակցությամբ Եվրոպական դատարանի դիրքորոշումներ ներկայացնելով կամ դատարանում պետության շահերը պաշտպանելով: Կառավարության ներկայացուցիչներն այսպիսով շատ ավելին է. այն կոչված է նպաստելու համակարգային առումով երկրում Եվրոպական իրավական չափանիշների ներդրմանը: Ընդ որում, խոսքը վերաբերում է ոչ միայն բացառապես Եվրոպական դատարանի, այլ նաև Եվրոպական մյուս կազմակերպությունների իրավական չափանիշ-

ների ներդրմանը: Այս հիմնարար մոտեցումը բխում է իմ կողմից արդեն իսկ նշված հռչակագրերի պահանջներից և կոչվում է կանխարգելիչ մոտեցում: Այն ենթադրում է պետության ներսում այնպիսի համալիր միջոցառումների իրականացում, որոնք կնվազեն Եվրոպական դատարան ներկայացվող գանգատների թիվը: Այդ կերպ հնարավոր կլինի բարձրացնել դատարանի կողմից գանգատների քննության արդյունավետությունը:

Այս պայմաններում արդարացիորեն կարևորվում է ոչ միայն պետական մարմինների հետ ակտիվ աշխատանքը, այլ նաև համագործակցությունը քաղաքացիական հասարակության, երկրում մարդու իրավունքների ազգային հաստատությունների հետ: Կարևոր է նաև արդյունավետ համագործակցությունը Հայաստանի Հանրապետության դատական համակարգի և խորհրդարանի հետ:

Հիշյալ նոր մոտեցումներով էր պայմանավորված նաև ՀՀ արդարադատության նախարարության Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետ կապերի վարչության կազմում Եվրոպական դատարանի վճիռների կատարման և կոնվենցիոն պահանջների ապահովման բաժնի ստեղծումը: Այս բաժնի խնդիրներից է ոչ միայն վճիռներով սահմանված վճարումների ապահովումը, այլ նաև դրանցից բխող օրենսդրական փոփոխությունների, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայի կատարելագործմանն ուղղված առաջարկներ ներկայացնելը: Բաժնի առաջնահերթ խնդիրներից է նաև ԵԽ այլ կառույցների, օրինակ, Խոշտանգումների կանխարգելման կոմիտեի, Մարդու իրավունքների դեկավար կոմիտեի իրավական չափանիշների իրացման ապահովումը:

Հայաստանի Հանրապետությունում իրականացվող սահմանադրական և դատաիրավական բարեփոխումների գործընթացի շրջանակներում հատկապես կարևոր է Եվրոպական չափանիշներից բխող այնպիսի լուծումներ ներդնելը, որոնք ունակ են ապահովելու նշածս համակարգային խնդրի ամբողջական լուծումը ոչ միայն օրենսդրական մակարդակում, այլ նաև գործնականում: Այսինքն կառավարության լիազոր ներկայացուցիչ դերը սահմանափակվում է ոչ միայն

պետության շահերը Եվրոպական դատարանում ներկայացնելով, այլև մարդու իրավունքների խախտումները բացառելուն ուղղված համակարգային այնպիսի մոտեցումներ ներդնելուն, որն, ըստ էության, ոչ թե մարդու իրավունքների պաշտպանության, այլ մարդու իրավունքները երաշխավորելուն ուղղված գործունեություն է: Այս նպատակներին հասնելու համար մեզ համար հատուկ կարևորություն է ներկայացնում համագործակցությունը ԵԽ Նախարարների կոմիտեի Եվրոպական դատարանի վճիռների կատարման վերահսկողության ստորաբաժանման հետ, քանի որ այն բոլոր քայլերը, որոնք ուղղված են մարդու իրավունքների երաշխավորման համակարգային լուծումներին, ըստ էության, քննարկվում և կյանքի են կոչվում վերջիններիս ուղղակի մասնակցությամբ:

Եվրոպական դատարանի իրավական չափանիշներով էր պայմանավորված ՀՀ-ում այլընտրանքային ծառայության նոր ինստիտուտի ներդրումը: Մասնավորապես, Բայաթյանն *ընդդեմ Հայաստանի* գործով 2011թ. վճռում խախտում էր ճանաչվել այն, որ ՀՀ-ն չի նախատեսում զինվորական ծառայությունից բացառություն այն անձանց համար, ովքեր կրոնական համոզմունքների պատճառով չեն կարող ծառայել զինված ուժերում: Այդ վճռի հիման վրա, ՀՀ-ում նախատեսվեց զինվորական ծառայությունից դուրս այլընտրանքային ծառայության հնարավորություն նշված կատեգորիայի անձանց համար: Բացի այդ, Հայաստանում ստեղծվել և գործում է համապատասխան միջգերատեսչական հանձնաժողով: Եվրոպական դատարանի այս վճռով սահմանված պահանջների կատարման գնահատման արդյունքում ԵԽ Նախարարների կոմիտեի Եվրոպական դատարանի վճիռների կատարման վերահսկողության ստորաբաժանման կողմից այդ գործն այս տարի փակվեց:

Այս ամենով հանդերձ, ուշագրավ են տվյալները Եվրոպական դատարանի դատական իրավագործությունն ընդունելուց ի վեր Հայաստանի դեմ ներկայացված գանգատների և դրանց կապակցությամբ կայացված վճիռների վերաբերյալ: Մասնավորապես, Եվրոպական դատարանի կողմից վարվող հաշվառման տվյալների համաձայն 2002 թվականից 2014 թվականի սեպտեմբերի դրությամբ Հայաստանի Հանրապետության դեմ ՄԻԵԴ է ներկայացվել ավելի, քան 2000 գանգատ:

2014 թվականի նոյեմբերի 1-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության վերաբերյալ կայացվել է 49 վճիռ:

Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ ՄԻԵԴ-ի ընդունած վճիռներով դիմումատուների կողմից 2014 թվականի նոյեմբերի 1-ի դրությամբ ներկայացվել է ընդհանուր շուրջ 15 մի փոն 260 հազար եվրոյին համարժեք փոխհատուցման պահանջ, որից բավարարվել է շուրջ 574 հազար եվրոն, այսինքն՝ ընդհանուր պահանջի 3,8%-ը: Եվրոպական դատարանի կողմից բավարարված գումարն ամբողջությամբ փոխհատուցվել է: Բավարարված գումարից 146,000 եվրոն, այսինքն՝ բավարարված ընդհանուր գումարի 26%-ը, վճարվել է ոչ պետական բյուջեի միջոցների հաշվին:

Բոլորիս համատեղ ջանքերով է միայն հնարավոր մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության բարդ խնդրի իրացումը և Եվրոպական դատարանի իրավական չափանիշների ներդրումը:»:

**ՀՀ գլխավոր դատախազ,
ՄԻԵԴ-ում ՀՀ կառավարության լիազոր
ներկայացուցիչ Գ. Կոստանյան**

Գ. ԿՈՍՏԱՆՅԱՆԸ ՀԱՆԴԻՊԵԼ Է Վ. ՇՈՐՄԻ ՇԵՏ

ՀՀ գլխավոր դատախազ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցիչ Գևորգ Կոստանյանը 2014թ. դեկտեմբերի 16-ին հանդիպել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Չեխիայի կառա-



վարության ներկայացուցիչ Վիտ Շորմի հետ: Գ. Կոստանյանն ու Վ. Շորմը ընդգծել են համագործակցության կարևորությունը Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների դեկավար կոմիտեի շրջանակներում: Կարևորվել է Եվրոպական դատարանի վճիռների կատարման հետ կապված քննարկումների ընթացքն այդ կոմիտեում, ինչպես նաև ԵԽ նախարարների կոմիտեի կողմից որդեգրված կանխարգելիչ մոտեցման և վճիռների համապարփակ կատարման գաղափարը: Զրուցակիցներն անհրաժեշտ են համարվել ամրապնդել համագործակցությունը երկու երկրների միջև այն հարցերում, որոնք վերաբերում են Եվրոպական դատարանում պետությունների ներկայացուցիչների գործառույթներին:

Գ. ԿՈՍՏԱՆՅԱՆԸ ՀԱՆԴԻՊԵԼ Է Գ. ՄԱՏՅՈՒՆԿԻՆԻ ՇԵՏ

Նույն օրը ՀՀ գլխավոր դատախազ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցիչ Գևորգ Կոստանյանն առանձնազրույց է ունեցել Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՌԴ հանձնակատար, ՌԴ արդարադատության նախարարի տեղակալ Գեորգի Մատյուշկինի հետ:

Զրուցակիցները քննարկել են Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության վերաբերյալ Եվրոպական դատարանի վճիռների կատարման փորձը: Կարևորվել են ԵԽ անդամ պետությունների կողմից ձեռնարկվող միջոցառումները՝ ուղղված Եվրոպական դատարանի գործունեության արդյունավետության բարձրացմանը: Գ. Կոստանյանն ու Գ. Մատյուշկինը քննարկել են



Եվրոպական դատարանում պետությունների ներկայացուցիչների գործառույթների շրջանակում երկու երկրների համագործակցությանն առնչվող հարցեր:

ՍԱՄՎԵԼ ՅՈՒՉԲԱՇՅԱՆ

Երևանի կայազորի զինվորական դատախազության
դատախազ, իրավաբանական գիտությունների թեկնածու

ԱՐԱՄ ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆ

ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահի խորհրդական,
Հայ-Ռուսական համալսարանի քրեական իրավունքի և քրեական
դատավարության իրավունքի ամբիոնի դասախոս,
իրավաբանական գիտությունների թեկնածու

**ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾՈՎ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ ՈՐՈՇՄԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ինչպես գիտության ցանկացած ճյուղ, այնպես էլ քրեական դատավարության իրավունքի գիտությունն ունի իր նպատակները, որոնց թվին է դասվում անձի պաշտպանությունը հանցագործությունից: Սակայն այս նպատակն իրագործելու ընթացքում առաջանում են որոշակի խնդիրներ, որոնք իրենց հրատապ լուծումն են պահանջում իրավապահ մարմիններից՝ օրենքի գերակայության սկզբունքի անվերապահ կատարումն ապահովելու համար: Այսպիսի խնդիրներից է հանդիսանում ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով ամրագրված՝ անձանց պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը: Խնդիրը կայանում է նրանում, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք), նախատեսելով քրեական վարույթը կասեցնելու ինստիտուտը և դրա հիմքերը, քրեական վարույթն իրականացնող մարմնի համար չի սահմանում պարտականություն տուժողին, նրա ներկայացուցչին, քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պատասխանողին կամ նրանց ներկայացուցիչներին (այսուհետ՝ շահագրգիռ անձանց) տրամադրելու քրեական գործով վարույթը կասեցնելու մասին որոշումը: Ավելին, Օրենսգրքով մանրամասն թվարկված են նույն տուժողի իրավունքները, բացառությամբ՝ քրեական գործով վարույթը կասեցնելու մասին որոշումը ստանալու իրավունքը:

Խնդրի արդիականությունը չի սահմանափակվում միայն տեսական հարթության մեջ: Գործնականում նմանատիպ հարց առաջանալու դեպքում քննիչները հղում են կատարում Օրենսգրքի՝ որոշումը տրամադրելու ընթացա-

կարգի բացակայությանը, ինչպես նաև տուժողի՝ նման իրավունք չունենալու հանգամանքին:

Մինչև բուն խնդրին անդրադառնալու անհրաժեշտ ենք համարում նշել ինստիտուտի առանձնահատկությունները:

Քրեական դատավարության իրավունքի գիտության ոլորտում հեղինակավոր մասնագետներ Վ.Ն.Գրիգորևը, Ա.Վ.Պոբեդկինը և Վ.Ն.Յաշինը քրեական դատավարության վերաբերյալ իրենց աշխատություններում անդրադարձել են քրեական գործով վարույթը կասեցնելու ինստիտուտին: Վերջիններս նշված ինստիտուտի նշանակությանն անդրադարձել են երեք տեսանկյունից: Առաջին՝ քրեական գործով վարույթի կասեցման ինստիտուտը հանդիսանում է անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանման միջոց, քանի որ այն կարող է կիրառվել բացառապես օրենքով սահմանված սպառիչ հանգամանքների դեպքում՝ չնայած նրան, որ գործնականում կարող են լինել տարբեր այլ հանգամանքներ, որոնք կարող էին հանգեցնել քրեական գործի կասեցմանը: Երկրորդ՝ քրեական գործի կասեցման ինստիտուտը ծառայում է նաև դատավարական ուժերի և միջոցների տնտեսմանը: Երրորդ՝ քրեական գործի կասեցման հնարավորությունը հանդիսանում է նաև քրեական դատավարության մասնակիցների նկատմամբ անհարկի դատավարական հարկադրանքի և միջոցների կիրառման կանխման գործիք¹:

Ա.Պ.Ռիժակովը «Քրեական դատավարություն (ԲՈՒՀ-երի համար դասագիրք)» աշխատության 14-րդ գլխում նշում է, որ կասեցումը քրեադատավարական իմաստով քրեական գոր-

● ՕՐԻՆԱԿԱՆՆՈՒԹՅՈՒՆ № 86 2015

¹ Տե՛ս Григорьев В.Н., “Уголовный процесс: Учебник” / В.Н. Григорьев, А.В. Победкин, В.Н. Яшин. - 2-е изд. перераб. и доп. - М.: Эксмо, 2008. - с. 487-488.

ծի շրջանակներում դատավարական գործողությունների ժամանակավոր դադարեցումն է, որի կիրառումը հնարավոր է ինչպես մինչդատական վարույթի շրջանակներում, այնպես էլ դատաքննության ժամանակ: Կասեցման ինստիտուտի կիրառման վերոնշյալ դրույթներն իրենց արտացոլումն են գտել Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության օրենսգրքի 208 և 209 հոդվածներում²: Իրավագետ Արմեն Շահինյանը քրեական գործի կասեցման ինստիտուտը դիտարկում է նաև որպես քրեադատավարական միջոցների, ժամկետների խնայման ռացիոնալ գործիք³:

Նշված ինստիտուտի կիրառման գործնական նշանակությունն առանձնապես մեծ է նախնական քննության փուլում, և մասնավորապես այն դեպքում, երբ գործի քննությունն ընթանում է նախաքննության կանոններով:

Իրավագետ Ջոզեֆ Մկենիրին իր աշխատություններից մեկում, ուսումնասիրելով Ամերիկայի Միացյալ Նահանգներից մեկի փորձը, հատուկ առանձնացնում է կասեցման ինստիտուտը քրեադատավարական իրավունքում: Ըստ հեղինակի՝ բոլոր այն դեպքերում, երբ առկա են համապատասխան հիմքերը կասեցման որոշում կայացնելու համար, այն պետք է կայացվի՝ միաժամանակ երաշխավորելով համապատասխան սուբյեկտների իրավունքները⁴: ԱՄՆ Գերագույն դատարանն իր Պեյտոն ընդդեմ Ռոբինսոնի գործով, *inter alia*, անդրադառնալով կասեցման գործընթացին, նշել է, որ այն պատշաճ կերպով չիրականացնելը կարող է հանգեցնել անձանց արդար դատաքննության իրավունքի խախտմանը⁵:

Ներկայացնելով կասեցման ինստիտուտի բնույթը և առանձնահատկությունները՝ հարկ ենք համարում մանրամասն անդրադառնալ Օրենսգրքում առկա և դրա գործնական կիրառման արդյունքում ի հայտ եկած խնդիրները:

Օրենսգրքի 257-րդ հոդվածի համաձայն՝ քննիչը, դատախազն իրավունք ունեն կասեցնել քրեական գործով վարույթը՝ դրա մասին կայացնելով պատճառաբանված որոշում, իսկ

258-րդ հոդվածի 1-րդ մասի համաձայն՝ քննիչը պարտավոր է շահագրգիռ անձանց գրավոր տեղեկացնել քրեական գործով վարույթը կասեցնելու մասին և միաժամանակ պարզաբանել, որ քրեական գործով վարույթի կասեցման մասին որոշումը կարող է բողոքարկվել Օրենսգրքով նախատեսված կարգով: Համանման կարգավորում նախատեսված է նաև ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի 209-րդ հոդվածով, սակայն այն տարբերությամբ, որ եթե ՀՀ օրենսդիրը հստակ նախատեսում է, որ համապատասխան անձանց տեղեկացնելու գործընթացն իրականացվում է գրավոր, ապա ՌԴ օրենսդիրն ուղղակի օգտագործում է «տեղեկացնում է» եզրույթը:

Նշված նորմերի մեկնաբանությունը («Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածով սահմանված մեկնաբանման սկզբունքի հիման վրա) թույլ է տալիս եզրակացնել, որ քննիչը զուտ տեղեկացնում է որոշման մասին: Այսինքն շահագրգիռ անձինք, տեղեկանալով կասեցված վարույթի մասին, չեն ստանում որոշման պատճենը, այլ ուղղակի վերջիններիս բացատրում են դրա բողոքարկման հնարավորության մասին: Պրակտիկայում ընդունվել է մի մոտեցում, որ քննիչների կողմից կասեցման որոշման փաստացի չտրամադրումը հիմնավորվում է այն պատճառաբանությամբ, որ Օրենսգրքով նման դատավարական կարգ սահմանված չէ, իսկ ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Մինչդեռ հարց է առաջանում, թե Օրենսգրքի վերոնշյալ հոդվածում նշված շահագրգիռ անձինք քննիչի կողմից քրեական գործով վարույթը կասեցնելու վերաբերյալ որ հիմքերը կարող են բողոքարկվել համապատասխան մարմնին, եթե քննիչն ընդամենը գրավոր տեղեկացնում է քրեական գործով վարույթը կասեցնելու

² Տե՛ս Рыжаков А.П., “Уголовный процесс: Учебник для вузов. – 3-е изд. испр. и доп.” – М.: НОРМА, 2004. с. 364-368.
³ Տե՛ս Шагинян А.С., “Приостановление предварительного следствия: Автореф. дис. ...канд. юрид. наук: 12.00.09” / Том. гос. ун-т., Томск, 2001. 24 с.
⁴ Տե՛ս Joseph McEniry, “Legislative Guide Legal Services Division” (Iowa Legislative Services Agency State Capitol, 2008) p. 87-88.
⁵ Տե՛ս U.S. Supreme Court, Pate v. Robinson, 383 U. S. 375 (1966).

մասին՝ չնշելով քրեական գործով վարույթը կատարելու հիմքը:

Նշվածն ուղղակի հակասության մեջ է գտնվում Օրենսգրքի 290-րդ հոդվածի 2-րդ մասի հետ, որի համաձայն՝ այդ հոդվածում նշված անձինք Օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով իրավունք ունեն դատարան բողոքարկել (...) քրեական գործով վարույթը կատարելու (...) մասին որոշումը:

Իրականացնելով քննարկվող ինստիտուտի համեմատական վերլուծություն Օրենսգրքի այլ դրույթների և կարգավորումների միջև, մասնավորապես՝ համեմատելով խնդրո առարկա կարգավորումը մեկ այլ փուլի և գործողության հետ, այն է՝ քրեական գործով վարույթը կարգելու հետ՝ ամրագրված է Օրենսգրքի 262-րդ հոդվածում, պարզ է դառնում, որ այնտեղ կարգավորումն այլ ուղիով է ընթացել, մասնավորապես՝ տուժողին ուղարկվում է կարճամյա որոշման պատճենը՝ այդ կերպ երաշխավորելով նշված որոշումը բողոքարկելու համար անհրաժեշտ բոլոր իրական հնարավորությունները:

«Սահմանադրության 18-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք: «Սահմանադրության և օրենքների հիման վրա այդպիսի համարժեք միջոցների նախատեսումն ու մատչելիության ապահովումը պետության պարտականությունն է: Պետությունն այդ պաշտպանությունն ապահովում է միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան (Սահմանադրության 3, 14, 42.1-րդ հոդվածներ): Դրա համար պետությունը, անշուշտ, պետք է տիրապետի նյութական, քաղաքական և իրավական միջոցների, այլ կերպ ասած՝ ստեղծի ընկերային-տնտեսական, քաղաքական, իրավական և փաստական պայմաններ, անհրաժեշտ երաշխիքներ մարդու իրավունքների և ազատությունների արդյունավետ իրացման համար: Պետությունը պարտա-

վորվում է ոչ միայն ճանաչել, պահպանել և պաշտպանել իրավունքներն ու ազատությունները, այլև ստեղծել պետական-իրավական այնպիսի կառուցակարգեր, որոնք արդյունավետ ձևով կարող են կանխել, վերացնել դրանց ցանկացած, այդ թվում՝ պետական մարմինների և պաշտոնատար անձանց կողմից կատարվող խախտումները, վերականգնել խախտված իրավունքներն ու ազատությունները⁶:

Ըստ հեղինակավոր հայ իրավագետների՝ տուժողի իրավունքների և օրինական շահերի ապահովման համար կարևոր նշանակություն ունի նրա կողմից հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատարանի գործողությունները և որոշումները, այդ թվում՝ դատավճիռը և դատարանի այլ վերջնական որոշումը բողոքարկելու իրավունքը⁷:

Հարկավոր է հաշվի առնել, որ քրեական գործով վարույթի կատարման մասին որոշումն ուղղակիորեն վերաբերում է տուժողի շահերին, իսկ անձանց արդյունավետ պաշտպանության իրավունքի իրականացման համար միջոցների նախատեսումն ու մատչելիության ապահովումը պետության պոզիտիվ պարտականությունն է, ապա տրամաբանական կլինի, որ քննիչը տուժողին տրամադրի քրեական գործով վարույթի կատարման մասին որոշումը և պարզաբանի, որ նշված որոշումը կարող է բողոքարկվել Օրենսգրքով նախատեսված կարգով: Խնդրո առարկա պրակտիկան, որի ընթացքում տուժողին քննիչը չի տրամադրում վերոնշյալ որոշումը, իրական վտանգ է առաջացնում անձանց՝ մինչդատական վարույթն իրականացնող մարմնի որոշումներն ու գործողությունները դատական կարգով բողոքարկելու իրավունքի արդյունավետ իրականացման համար: Պատահական չէ, որ «Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-844 որոշման մեջ, անդրադառնալով Օրենսգրքի 290-րդ հոդվածի մեկնաբանությանը, նշել է, որ այն, որպես քրեական վարույթում անձի իրավունքների ու ազատությունների պաշտպանության միջոց, կոչված է երաշխավորելու «Սահմանադրության

⁶ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ» / ընդհանուր խմբագրությամբ՝ Գ.Հարությունյանի, Ա.Վաղարշյանի. – Եր.: «Իրավունք», 2010, էջ 207:

⁷ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Ընդհանուր մաս (4-րդ հրատարակություն, լրացումներով և փոփոխություններով)» / Ա.Դիլբարյան, Ա.Հարությունյան, Գ.Ղազինյան և այլք. – Երևանի պետ. համալս. – Եր.: Երևանի համալս. հրատ., 2006:

ինչպես 18 և 19 հոդվածներում, այնպես էլ 3, 14, 14.1, 16, 17 և անձի իրավունքների ու ազատությունների պաշտպանության սահմանադրաիրավական սկզբունքի գերակայությունն արտացոլող բազմաթիվ այլ հոդվածներում ամրագրված նորմերի կենսագործումը: Ավելին, այն կոչված է պաշտպանելու անձի ինչպես սահմանադրական, այնպես էլ օրենքով երաշխավորված այլ իրավունքները և ազատությունները վերոհիշյալ պետական մարմինների ու պաշտոնատար անձանց անօրինական (անիրավաչափ) որոշումներից ու գործողություններից և իրացվում է արդարադատական առանձնահատուկ գործառույթի մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության միջոցով:

Անձի քննարկվող իրավունքն իր արտացոլումն է ստացել նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածում: Իրավաչափ նպատակով արդարացված սահմանափակումներն ունեն նաև միջազգային իրավական հիմնավորում՝ որպես պետություններում իրավական որոշակիության և կայունության երաշխավորման միջոց: Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր որոշումներում բազմիցս անդրադարձել է այս հարցին և նշել, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված «դատաքննության իրավունքը», որի մասնավոր տարր է հանդիսանում մատչելիության իրավունքը, չի հանդիսանում բացարձակ իրավունք և կարող է ենթարկվել որոշակի սահմանափակումների, հատկապես, բողոքի ընդունելիության պայմանների առնչությամբ, քանի որ այն իր էությամբ պահանջում է պետության կողմից կարգավորում, որը կարող է փոփոխվել՝ կախված ժամանակից և տեղից, ինչպես հասարակության, այնպես էլ կոնկրետ անձանց պահանջումներին և միջոցներին համապատասխան: Պետություններն այս առնչությամբ օգտվում են հայեցողության ազատությունից: Այնուամենայնիվ, դատարանի մատչելիության իրավունքը չի կարող սահմանա-

փակվել այնպես և այն սահմաններով, որ վնասի նրա էությունը, և դրանք համապատասխանում են Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին, եթե ունեն օրինական նպատակ և կիրառված միջոցների ու դրված նպատակի միջև գոյություն ունի արդար հավասարակշռություն: Միաժամանակ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր վճիռներում առանձնահատուկ կարևորեց, որ պետությունները պարտավոր են իրենց ներպետական օրենսդրությամբ անհրաժեշտ իրավական նախադրյալներ ստեղծել անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար⁸:

Օրենսգրքի 8-րդ բաժնի («Քրեական գործով մինչդատական վարույթ») հոդվածների, 290-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերի վերլուծությունը վկայում է, որ օրենսգրքի մինչդատական վարույթում դատական բողոքարկման ենթակա են իրավասու մարմինների ու պաշտոնատար անձանց այն որոշումները և գործողությունները, որոնք կայացվել են համապատասխան պաշտոնատար անձանց համար նախատեսված իրենց ընդհանուր լիազորությունների շրջանակներում և նույն այդ անձանց Օրենսգրքով նախատեսված կոնկրետ որոշումները, մասնավորապես՝ հանցագործությունների վերաբերյալ հաղորդումներն ընդունելուց, քրեական գործ հարուցելուց հետաքննության մարմնի, քննիչի և դատախազի հրաժարվելը, քրեական գործը կասեցնելու, կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումները:

«Ը դատարանների նախագահների խորհուրդը «Քրեական դատավարության օրենսդրության որոշ դրույթների կիրառման դատական պրակտիկայի մասին» թիվ 20 որոշմամբ, անդրադառնալով քրեական գործի վարույթը կասեցնելու մասին քննիչի որոշման բողոքարկմանը, նշել էր, որ այդ բողոքները, ըստ Օրենսգրքի 290-րդ հոդվածի, կարող են անմիջապես տրվել վարույթն իրականացնող մարմնի գտնվելու վայրի դատարանին⁹: Սակայն պարզ չէ, թե ինչպես անձը կարող է վարույթն իրականաց-

⁸ Stn Golder v. United Kingdom, 21 feb. 1975, Fayed v. United Kingdom, 25 aug. 1994, Ashingdane v. United Kingdom, 28 may 1985, Garcia Manibardo v. Spain (15 feb. 2000), 29.06.2000, Bellet v. France, 20 nov. 1995, Philis v. Greece, 27 aug. 1991, Tolstoy Miloslavsky v. United Kingdom, 23 jun. 1995

⁹ St'u http://www.court.am/files/news/591_am.pdf

նող մարմնի գտնվելու վայրի դատարանին հիմնավոր բողոք ներկայացնել առանց խնդրո առարկա որոշմանը ծանոթանալու հնարավորության:

ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի կողմից 1985 թվականի նոյեմբերի 29-ին ընդունված «Հանցագործությունների և իշխանության չարաշահման զոհերի համար արդարադատության հիմնական սկզբունքների հռչակագիր» վերտառությամբ թիվ 40/34 բանաձևի «Ա» բաժնի 2-րդ կետում բացահայտված է «տուժող» հասկացության՝ որպես հանցագործության զոհի, միջազգային իրավական բովանդակությունը, համաձայն որի՝ հանցագործության զոհ է (են) համարվում այն անձը (անձինք), ում (որոնց) հանցագործությամբ կամ իշխանության չարաշահմամբ պատճառվել է վնաս, ներառյալ մարմնական կամ բարոյական վնասը, հուզական ապրումները, նյութական վնասը կամ հիմնական իրավունքների էական խախտումները, որոնք օժտված են հատուցման հավասար իրավունքով¹⁰:

Ուստի՝ ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված «տուժող» հասկացությունը նշանակում է նաև հանրային իշխանության մարմինների ու պաշտոնատար անձանց գործողություններից (անգործությունից) վնաս կրած անձ:

Այսպես՝ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից 1985 թվականին ընդունված «Տուժողի դերը քրեական իրավունքի և դատավարության շրջանակներում» թիվ R(85) 11 հանձնարարականի նախաբանում հատուկ ընդգծվել է, որ այն ընդունվել է ելնելով այն հանգամանքից, որ քրեական արդարադատության նպատակներն ավանդաբար ձևակերպվել են պետության և իրավախախտի միջև հարաբերությունների տիրույթում, ինչի արդյունքում այդ համակարգի գործարկումը հաճախ բարդացնում է տուժողի մոտ ծագած խնդիրները, այլ ոչ թե նպաստում դրանց լուծմանը: Մինչդեռ քրեական արդարադատության հիմնական գործառույթը պետք է լինի տուժողի

պահանջները բավարարելը և շահերը պաշտպանելը¹¹:

Գտնում ենք, որ գործնականում քննիչների կողմից ձևավորված նման պրակտիկան չի բխում ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի տրամաբանությունից, ինչպես նաև որևէ կերպ չի նպաստում տուժողի շահերի պաշտպանությանը, որը Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի համապատասխան հանձնարարականում ամրագրված է որպես պետության պարտականություն:

ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածով սահմանված՝ ՀՀ դատախազության կարևորագույն գործառույթներից է հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ իրականացվող հսկողությունը: Այսինքն, մինչդատական վարույթի փուլում իրականացվող գործողությունների օրինականության ապահովումն ամբողջությամբ ՀՀ դատախազության սահմանադրական պարտականությունն է: Այդ տեսանկյունից հատկապես կարևորում ենք 2013 թվականի հուլիսի 17-ին ՀՀ Գլխավոր դատախազի հրապարակած համապատասխան հանձնարարականը՝ կասեցման որոշումը տուժողներին տրամադրելու վերաբերյալ, որում հստակ նշվել էր, որ «տուժողները, չստանալով որոշումները, փաստորեն զրկվում են դրանք բողոքարկելու, իրենց շահերն արդյունավետ պաշտպանելու հնարավորությունից»: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասի կիրառման միասնական պրակտիկան ապահովելու նպատակով՝ ՀՀ գլխավոր դատախազը հանձնարարել է կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումները ղեկավարող դատախազներին՝ ապահովել տուժողին, նրա ներկայացուցչին, քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պատասխանողին կամ նրանց ներկայացուցիչներին քրեական գործով վարույթը կասեցնելու մասին իրազեկումը: Ըստ հանձնարարականի՝ իրազեկումը պետք է լինի գրավոր, որում միաժամանակ պետք է պարզաբանվի, որ վերոնշյալ անձանց կողմից գրավոր պահանջի դեպ-

¹⁰ Տե՛ս ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի կողմից 1985 թվականի նոյեմբերի 29-ին ընդունված «Հանցագործությունների և իշխանության չարաշահման զոհերի համար արդարադատության հիմնական սկզբունքների հռչակագիր» վերտառությամբ թիվ 40/34 բանաձև:

¹¹ Տե՛ս Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից 1985 թվականին ընդունված «Տուժողի դերը քրեական իրավունքի և դատավարության շրջանակներում» N R(85) 11 հանձնարարական:

քում նրանց կարող է տրամադրվել քրեական գործով վարույթը կասեցնելու մասին որոշումը՝ այն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով բողոքարկելու նպատակով¹²:

Ճիշտ է հանձնարարականի ընդունումը ողջունելի է և իրականում լուրջ ձեռքբերում է իրավահարաբերության կարգավորման շրջանակներում միանման պրակտիկա ձևավորելու տեսանկյունից, հատկապես հաշվի առնելով տուժողի կողմից խնդրո առարկա որոշումը բողոքարկելու իրավունքի արդյունավետ իրականացման տեսանկյունից, այնուամենայնիվ, մեր դիրքորոշումն այն է, որ համապատասխան պաշտոնատար անձինք կասեցման մասին որոշում կայացնելիս բոլոր դեպքերում, անկախ այն հանգամանքից, թե անձը դիմել է այդ որոշումը ստանալու համար, թե՛ ոչ, փոխանցեն այն շահագրգիռ անձանց: Այսինքն՝ այն պետք է դիտարկել պետության պոզիտիվ, այլ ոչ թե՛ նեգատիվ պարտավորության տեսանկյունից:

Հարկ ենք համարում նաև անդրադարձ կատարել ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծով այս հարցին տրված կարգավորմանը: Մասնավորապես՝ քննարկվող ինստիտուտի վերաբերյալ նախագիծը ճիշտ մոտեցում է որդեգրել: Վերջինիս 197-րդ հոդվածի համաձայն՝ քրեական հետապնդման ժամկետը կասեցնելու մասին հսկող դատախազի որոշումն ստանալուց հետո քննիչը դրա պատճենն անհապաղ հանձնում է վարույթի մասնավոր մասնակիցներին՝ նրանց պարզաբանելով որոշման բողոքարկման կարգը և ժամկետները: Հարկ ենք համարում նշել, որ վարույթի մասնավոր մասնակիցները, ըստ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի,

հանդիսանում են՝ մեղադրյալը, նրա օրինական ներկայացուցիչը, պաշտպանը, տուժողը, գույքային պատասխանողը, տուժողի և գույքային պատասխանողի օրինական ներկայացուցիչը և լիազոր ներկայացուցիչը: Այսինքն նոր օրենսգրքի նախագիծը որդեգրվել է մեր կողմից առաջարկվող մոտեցումը՝ դիտարկելով շահագրգիռ անձանց նշված որոշման տրամադրումը որպես պոզիտիվ պարտականություն:

Ստիպված ենք միաժամանակ արձանագրել, որ չնայած այն հանգամանքին, որ դեռևս 2012 թվականին ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը ներկայացվել է ՀՀ Ազգային ժողով, սակայն միայն վերջերս է (2014 թվականի մայիսի 19-ին) այն ընդգրկվել նստաշրջանի օրակարգում: Հետևաբար, կարծում ենք, որ նշված խնդրին հարկավոր է տալ հրատապ լուծում:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով խնդրի կարևորությունը հատկապես քրեական դատավարությունում տուժողի իրավունքների պաշտպանության տեսանկյունից՝ առաջարկում ենք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասը, ինչպես նաև ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի 209-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «*Քննիչը պարտավոր է տուժողին, նրա ներկայացուցիչին, քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պատասխանողին կամ նրանց ներկայացուցիչներին ուղարկել քրեական գործով վարույթը կասեցնելու մասին որոշման պատճենը և միաժամանակ պարզաբանել քրեական գործով վարույթի կասեցման մասին որոշման բողոքարկման կարգը:*»:



¹² Տե՛ս <http://prosecutor.am/am/news/5624/>:

ԵՐԵՄԻԱ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո»
 ՊՈԱԿ-ին կից Քրեաբանության կիրառական
 հիմնախնդիրների գիտահետազոտական կենտրոնի պետ
ԱՐԱՄ ՍԻՐԵԿԱՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո»
 ՊՈԱԿ-ին կից Քրեաբանության կիրառական հիմնախնդիրների
 գիտահետազոտական կենտրոնի քրեաբան

**ՍԵՌԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՃԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
 ՎԻԿՏԻՄԻՉԱՑԻԱՅԻ ԵՎ ՎԻԿՏԻՄԱՅՆՈՒԹՅԱՆ
 ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Հանցավոր վարքագծի պատճառներն առավել խորապես հասկանալու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ոչ միայն հանցանք կատարած անձին, այլ նաև հանցագործությունից տուժածներին կամ հանցագործության զոհերին, նրանց անձնային և հանցանքի կատարման մեխանիզմում նրանց վարքագծի և դերի առանձնահատկությունները, հանցագործի և նրա զոհի միջև եղած կրիմինոլոգիական նշանակություն ունեցող հարաբերությունները և կապերը: Կրիմինոլոգիայի այն ուղղությունը, որն ուսումնասիրում է հանցագործություններից տուժածներին, կոչվում է վիկտիմոլոգիա: Վիկտիմոլոգիան առաջացել է լատիներեն victim (զոհ) բառից և նշանակում է «ուսմունք զոհի մասին»: Վիկտիմոլոգիան ուսումնասիրում է հանցագործությունից տուժած անձի բարոյա-հոգեբանական և սոցիալական առանձնահատկությունները պարզելու համար, թե ինչու, ինչպիսի բարոյական, կամային կամ էմոցիոնալ հատկություններ և սոցիալական ինչպիսի ուղղվածություն ունեցող անձն է հանդիսացել հանցագործությունից տուժող, հանցագործի և նրա զոհի միջև եղած կրիմինոլոգիական նշանակություն ունեցող հարաբերությունները և կապերն այն հաշվով, որպեսզի պարզի, թե որքանով են այդ հարաբերությունները հանցանքի կատարման էական նախադրյալներ ստեղծում, ինչպես են ուղղորդում հանցավորի գործողությունները, հանցագործությանը նախորդող և ուղեկցող իրադրությունները պարզելու համար վիկտիմային վարքագծի շարժառիթները և կոնկ-

րետ իրադրությունում տուժողի վարքագծի կրիմինոլոգիական նշանակությունը, ինչպես նաև տուժողի անձնային և հանցանքի կատարման մեխանիզմում նրա վարքագծի ու դերի առանձնահատկությունները, և այդ ամենի հիման վրա մշակում է հանցագործությունների վիկտիմոլոգիական կանխման միջոցներ:

Վիկտիմոլոգիան օգտագործում է երկու հիմնական հասկացություն՝ վիկտիմայնություն և վիկտիմիզացիա: Վիկտիմայնությունը հանցագործությունից տուժելու առավել կամ պակաս հակվածությունն է: Վիկտիմայնությունը դիտվում է որպես հատկություն, որով կարող են օժտված լինել ինչպես մարդիկ, այնպես էլ առանձին օբյեկտներ: Թերևս ցանկացած մարդ հանդիսանում է հանցագործության պոտենցիալ զոհ: Սակայն կան մարդիկ (նույնիսկ մարդկանց խմբեր), ովքեր ուրիշներից ավելի հաճախ են դառնում հանցագործության զոհ, այսինքն՝ օժտված են բարձր վիկտիմայնությամբ: Վիկտիմայնությունը կարող է պայմանավորված լինել մարդու անձնական առանձնահատկություններով, վարքագծային առանձնահատկություններով, զբաղեցրած պաշտոնով, գործունեության բնույթով և այլն: Ինչ վերաբերում է անձնական առանձնահատկություններին, ապա վիկտիմոլոգիայում առանձնացվում են մի շարք հատկություններ, որոնք մեծացնում են հանցագործությունից տուժելու հավանականությունը: Այդպիսի հատկություններից են օրինակ թեթևամտությունը, ազահոությունը, դյուրաբորբոքությունը, ագրեսիվությունը, որոշա-

● ՕՐԻՆԱԿԱՆՆՈՒԹՅՈՒՆ № 86 2015

կի սեռական շեղումները: Դրա հետ մեկտեղ, սակայն, մարդկային շատ հատկություններ միանշանակ վիկտիմային չեն. կախված իրադրությունից միևնույն հատկությունը կարող է վիկտիմային լինել, կարող է և հակավիկտիմային դեր կատարել:

Վիկտիմիզացիան տուժողի վերածվելու գործընթացն է: Այդ գործընթացում կարևոր դեր է կատարում ոչ միայն անձի այս կամ այն վիկտիմոլոգիական հատկությունը, այլև նրա վարքագիծը: Վիկտիմոլոգիան առանձնացնում է տուժողի վարքագծի այնպիսի դրսևորումներ, ինչպիսիք են պրովոկացիոն վարքագիծը, երբ ապագա տուժողն ինքն է իր հակաբարոյական, հակաիրավական և նույնիսկ հանցավոր վարքագծով դրդում մյուս կողմին հանցանք կատարելու (այս իրավիճակն առկա է օրինակ հոգեկան խիստ հուզմունքի վիճակում կատարվող սպանություններում), թեթևամիտ վարքագիծը, որը նպաստում է հանցավորի մոտ արդեն իսկ առկա հակասոցիալական դիրքորոշման դրսևորմանը և հանցանքի կատարմանը (օրինակ՝ թեթևամիտ վարքագիծ են դրսևորում սեռական հանցագործություններից տուժողները, որոնց վարքագիծը հանցավորի մեջ արդիականացնում է սեռական պահանջմունքը, կամ այն տուժողները, որոնք այսպես ասած, ի ցույց են դնում իրենց մոտ առկա նյութական արժեքները, այն էլ այնպիսի պայմաններում, երբ չունեն պաշտպանվելու միջոցներ (այդպիսի իրավիճակներ շատ են պատահում, օրինակ՝ կողոպուտի դեպքերում), և չեզոք վարքագիծը, երբ տուժողի վարքագիծը որևէ հանցածին նշանակություն չունի:

Հանցագործի և զոհի միջև գոյություն ունի որոշակի փոխազդեցություն. զոհը ինքնին ազդեցության պասիվ օբյեկտ չէ, այլ որոշակի ձևով ուղղորդում և պայմանավորում է հանցավորի վարքագիծը¹: Շատ դեպքերում էլ տուժողն ինքն է հրահրում հանցագործությունն իր հակաբարոյական, հակաիրավական և նույնիսկ հանցավոր վարքագծով (այսպես ասած՝ «տուժողի մեղք»): Ուստի՝ հանցագործությունների կանխման առումով շատ կարևոր է վեր հանել, բացահայտել ոչ միայն հանցավորությանը նպաստող գործոնները, հանցագործի անձի առանձ-

նահատկությունները, այլ նաև տուժողների անձնային առանձնահատկությունները, հանցավոր վարքագծի պատճառական մեխանիզմում նրանց վարքագիծը, մինչև հանցագործությունը հանցավորի հետ ունեցած հարաբերությունները և այլն:

Վերջին տարիներին նկատվում է սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործությունների աճ: Ընդ որում, աճում են անչափահասների դեմ ուղղված սեռական ոտնձգությունները: Բացի այդ, բավական բարձր է այս հանցագործությունների լատենտայնության աստիճանը: Այս ամենը հանդիսանում է լուրջ հիմնախնդիր և ուսումնասիրման կարիք ունի:

ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ին կից Քրեաբանության կիրառական հիմնախնդիրների գիտահետազոտական կենտրոնը 2013-2014 թվականներին իրականացրել է հետազոտություն «Սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործությունների կրիմինալոգիական և վիկտիմոլոգիական գործոնները ՀՀ-ում» թեմայով:

Սեռական բնույթի հանցագործությունների կրիմինալոգիական և վիկտիմոլոգիական գործոնները, դրանց կատարմանն ու աճին նպաստող պատճառներն ու պայմանները, հանցագործների և տուժողների անձնային, հոգեբանական որոշ առանձնահատկություններ, նրանց սոցիալ-ժողովրդագրական տվյալները, հանցագործության կատարման մեխանիզմում տուժողի դերը և վարքագծի առանձնահատկությունները բացահայտելու համար ուսումնասիրվել է ՀՀ դատական աստիճանների (ընդհանուր իրավասության դատարանների և վերաքննիչ դատարանի) կողմից 2008-2012 թվականների ընթացքում քննված անձի սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ (ՀՀ քրեական օրենսգրքի 138-142-րդ հոդվածներ) գործերով կայացված 110 դատական ակտ, ինչպես նաև ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի Հոգեբանական փորձաքննությունների բաժնի կողմից փորձաքննության ենթարկված սեռական հանցագործու-

¹ Տե՛ս Կурганов С.И., “Криминология”, учеб. пособие. М., 2010, с. 69.

թյուններից տուժածների վերաբերյալ 113 փորձագիտական եզրակացություններ:

1. Դատական ակտերի վերլուծություն

Ուսումնասիրված 110 քրեական գործերից 18-ը բռնաբարության գործեր են (ՀՀ քրեական օրենսգրքի 138-րդ հոդված), 14-ը՝ սեքսուալ բնույթի բռնի գործողությունների (ՀՀ քրեական օրենսգրքի 139-րդ հոդված), 3-ը՝ սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելու (ՀՀ քրեական օրենսգրքի 140-րդ հոդված), 65-ը՝ տասնվեց տարին չլրացած անձի հետ սեռական հարաբերություն ունենալու կամ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելու (ՀՀ քրեական օրենսգրքի 141-րդ հոդված) և 10-ն՝ անառակաբարո գործողությունների դեպքեր (ՀՀ քրեական օրենսգրքի 142-րդ հոդված): Ինչպես տեսնում ենք, 16 տարին չլրացած անձի հետ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելու դեպքերը կազմում են ընդհանուր ուսումնասիրված գործերի կեսից ավելին՝ 59.1%-ը, ինչը հաստատվում է նաև պաշտոնական վիճակագրությամբ:

Հետազոտության ընթացքում բացահայտվեցին հետևյալ օրինաչափությունները: Այսպես, կատարված հանցագործությունների 37.3%-ը կատարվել է հանցավորի բնակարանում, 10%-ը՝ ուրիշ բնակարանում, 10%-ը՝ հյուրանոցում, 9.1%-ը՝ տուժողի բնակարանում: Ինչպես տեսնում ենք, սեռական բնույթի հանցագործությունների մեծ մասը կատարվել է բնակարաններում, ընդ որում մեծ մասը կազմում են հանցավորի բնակարանում կատարված արարքները:


Ուշագրավ է այն հանգամանքը, որ մինչև 17 տարեկան տուժողներից շատերի նկատմամբ սեռական ոտնձգությունը կատարվել է հյուրանոցում կամ ազատ ժամանցի անցկացման վայրում (բարում կամ նմանատիպ այլ վայրում): Կարելի է եզրակացնել, որ նմանատիպ հաստատություններում պատշաճ հսկողություն չի իրականացվում և անչափահասներն անարգել մուտք ունեն հյուրանոցներ և ազատ ժամանցի անցկացման վայրեր: Հնարավոր է, որ օրինակ 15-17 տարեկան անչափահասներին, արտաքին առանձնահատկություններից ելնելով, որոշ դեպքերում դժվար լինի տարբերել չափահասներից (կարծում ենք, որ նման դեպքերում պետք է պահանջել անձը հաստատող

փաստաթուղթ) և թույլ տրվի մուտք գործել նման հաստատություններ, սակայն տարակուսանք է առաջացնում այն հանգամանքը, որ այդ հաստատություններում սեռական ոտնձգության ենթարկված տուժողների մեջ կան նաև մինչև 15 տարեկան անչափահասներ:

Ուսումնասիրված քրեական գործերի ընդհանուր զանգվածում տուժողների թիվը 110 է: Տուժողների 0.9%-ը եղել է հանցավորի ազգականը, 0.9%-ը՝ խորթ քույրը, 1.8%-ը՝ աշակերտը, 1.8%-ը՝ հանցավորի նախկին կինը, 4.5%-ը հանցավորի հետ անձանոթ է եղել, 5.5%-ը՝ համաճառայողը, 9.1%-ը՝ հարևանը, 30%-ը՝ փաստացի կինը կամ ընկերուհին, 45.5%-ը՝ պարզապես ծանոթը: Ինչպես տեսնում ենք տուժողների միայն շատ քիչ մասն է եղել հանցավորին անձանոթ (4.5%), իսկ մնացածը հանցավորի հետ գտնվել են տարբեր հարաբերությունների մեջ:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում սեռական բնույթի հանցագործություններից տուժածների տարիքային հարաբերակցությունը: Այսպես տուժողների 9.1%-ը 12-ից ցածր տարիքի են, 10%-ը՝ 12-14 տարեկան են, 56.4%-ը՝ 14-17, 12.7%-ը՝ 18-25, 6.4%-ը՝ 26-30, 2.7%-ը՝ 41-50, իսկ 2.7%-ը պատկանում է 50-ից բարձր տարիքային խմբին (*տես գրաֆիկ 1*):

Գրաֆիկ 1. Տարիքային խմբերի բաշխվածությունը



Ինչպես տեսնում ենք, սեռական հանցագործություններից առավել հաճախ տուժում են անչափահասները, որոնց մեջ գերակշռում են 14-17 տարեկանները: Տուժողների զանգվածում անչափահասների բարձր ցուցանիշը լուրջ սոցիալական հիմնախնդիր է և վկայում է հասարակությունում տեղի ունեցող բացասական բարոյահոգեբանական երևույթների մասին: Կրիմինալոգիական գրականությունում հանցագործության զոհերի դասակարգման մեջ բարձր վիկտիմայնությամբ հատկապես առանձնանում

են երեխաները և դեռահասները, որոնք ավելի թույլ են, առավել քիչ են ունակ լուրջ դիմադրություն ցույց տալու, ինչը մեծացնում է հանցանքի զոհ դառնալու հավանականությունը²: Անչափահասների վիկտիմայնությունը ձևավորող հիմնական գործոնները պայմանավորված են նրանց հոգեբանական առանձնահատկություններով³, ինչի հետ կապված համաշխարհային կրիմինալոգիական գրականության մեջ շատ հաճախ և մանրամասն ուսումնասիրվում են նրանց նկատմամբ սեռական ոտնձգությունների և դաժան վերաբերմունքի դեպքերը: Երեխաների նկատմամբ սեռական բռնությունը ոչ միայն քրեա-իրավական և կրիմինալոգիական, այլև լուրջ սոցիալական հիմնախնդիր է: Սեռական բռնությունը, որպես կանոն, ենթադրում է երեխայի ներգրավումը սեռական հարաբերությունների մեջ՝ բռնություն գործադրելու, ինչպես նաև բացահայտ կամ քողարկված սպառնալիքների միջոցով: Սակայն հանցագործները կարող են իրենց նպատակին հասնելու համար օգտագործել ճնշումներ և ազդեցության տարբեր ձևեր: Դա կարող է լինել հոգեբանական մանիպուլյացիա, հեղինակության օգտագործում, տարբեր վախերի ներշնչում և այլն: Հազվադեպ է պատահում է, որ նախաձեռնությունը գա երեխայից:

Քիչ չեն դեպքերը, երբ երեխան սեռական բռնության է ենթարկվում ընտանիքում: Որպես կանոն ընտանիքում երեխաների նկատմամբ բռնություններն ունեն բարձր լատենտայնություն, ինչը հաճախ պայմանավորված է լինում ծնողների հանդեպ երեխայի վախով և այն համոզմամբ, որ ուրիշից օգնություն հնարավոր չէ սպասել: Սեռական ոտնձգություն կատարողի հանդեպ ունեցած վախի, ընկերների, ծանոթների, շրջապատի մարդկանց հանդեպ ամոթի զգացումից ելնելով, հասարակության անդամների կողմից պախարակվելու և ծաղրուծանակի ենթարկվելու վախից ելնելով տեղի ունեցածի մասին չեն բարձրաձայնում ոչ միայն սեռական բռնության ենթարկված դեռահասները, այլև նրանց ընտանիքի անդամները, ինչը զգալիորեն բարձրացնում է այդ արարքների լատենտայնության մակարդակը: Սա ունի իր բացասական ազդեցությունը դեռահասի զարգացման վրա, քանի որ ներքին ապրումները խիստ բացասաբար են անդրադառնում դեռահասի վրա: Սակայն վերջին տարիներին նկատվում է անչափահասների նկատմամբ կատարված սեռական ոտնձգությունների բացահայտման աճ, ինչը կարող է պայմանավորված լինել ինչպես դպրոցների և այլ մանկական հաստատությունների նկատմամբ հասարակական վերահսկողության ուժեղացմամբ և դրա հիման վրա նշված հանցագործությունների բացահայտման մակարդակի աճով, այնպես էլ քաղաքացիների իրավագիտակցության մեջ տեղի ունեցող որոշակի դրական փոփոխություններով⁴:

Անդրադառնալով տուժողների սեռին՝ պետք է նշել, որ պաշտոնական վիճակագրության համաձայն ընդհանրապես հանցագործություններից ավելի հաճախ տուժում են տղամարդիկ, որոնց տեսակարար կշիռը տուժողների զանգվածում կազմում է 53-54%: Սա պայմանավորված է ինչպես տղամարդկանց սոցիալական առավել ակտիվությամբ, այնպես էլ բազմաթիվ այլ գործոններով: Միևնույն ժամանակ որոշ հանցատեսակներից կանայք ավելի հաճախ են տուժում, քան տղամարդիկ: Մասնավորապես, պաշտոնական վիճակագրության համաձայն, սեռական հանցագործություններից կանայք տղամարդկանց համեմատ 10-15 անգամ ավելի հաճախ են տուժում: Մեր կողմից ուսումնասիրված դատական ակտերում տուժողների մեծ մասը՝ 88.2%-ը, իգական սեռի էին, 11.8%-ը՝ արական:

Պատահական չէ, որ կանայք հանցավոր ոտնձգություններից և առաջին հերթին բռնություններից ու հատկապես սեռական բռնություններից ավելի խոցելի են: Կանայք սովորաբար առավել պակաս ունակ են դիմադրություն ցույց տալու, իսկ մյուս կողմից էլ կանանց վարքագիծը հաճախ ագրեսիվ բնույթ է կրում, ինչը հաճախ նրանց վնաս պատճառելու պայմաններ է ստեղծում: Ընդհանրապես սեռը հաճախ էական նշանակություն է ունենում հանցագործության մեխանիզմում, քանի որ այն հանդիսանում է այս կամ այն հանցագործու-

նություններից և առաջին հերթին բռնություններից ու հատկապես սեռական բռնություններից ավելի խոցելի են: Կանայք սովորաբար առավել պակաս ունակ են դիմադրություն ցույց տալու, իսկ մյուս կողմից էլ կանանց վարքագիծը հաճախ ագրեսիվ բնույթ է կրում, ինչը հաճախ նրանց վնաս պատճառելու պայմաններ է ստեղծում: Ընդհանրապես սեռը հաճախ էական նշանակություն է ունենում հանցագործության մեխանիզմում, քանի որ այն հանդիսանում է այս կամ այն հանցագործու-

² Տե՛ս Вишневецкий К.В., “Криминогенная виктимизация социальных групп в современном обществе”. М., 2010, с. 42.

³ Տե՛ս Ривман Д.В., “Криминальная виктимология”. СПб., 2002, с. 45.

⁴ Տե՛ս «Հանցավորության վիկտիմոլոգիական գործոնները ՀՀ-ում» / Ա. Գաբրիելյան և ուրիշ.-Եր.: Վան Արյան, 2013, էջ 14:

թյան անհրաժեշտ պայման (օրինակ՝ բռնաբարության)⁵:

Հետաքրքրություն են ներկայացնում նաև տուժողների զբաղվածության վերաբերյալ տվյալները: Այսպես, նրանց 55.5%-ը չէր աշխատում, 41.8%-ը սովորում էր դպրոցում, 0.9%-ը սպասարկման ոլորտի աշխատող էր, 0.9%-ը՝ արդյունաբերության ոլորտի աշխատող, 0.9%-ը կրթության ոլորտի աշխատող: Ինչպես տեսնում ենք գործազուրկների տեսակարար կշիռը տուժողների զանգվածում բավականին մեծ է:

Վիկտիմայնությունը ձևավորող գործոններից է անձի առողջական վիճակը: Կատարված հետազոտության համաձայն տուժողների 89.1%-ը հանցագործության պահին եղել է առողջ, 9.1%-ը գտնվել է անօգնական վիճակում, իսկ 1.8%-ն ունեցել է ֆիզիկական արատ: Ինչպես տեսնում ենք այս գործոնը մեր հանրապետությունում այդքան էլ էական դեր չի խաղացել հանցագործության մեխանիզմում:


Վիկտիմիզացիայի (վիկտիմիզացիան տուժողի վերածվելու գործընթացն է) առանձնահատկությունները բացահայտելու համար շատ կարևոր է պարզել հանցագործի և տուժողի միջև եղած հարաբերությունների և կապի բնույթը: Պատահական չէ, որ մեր կողմից ուսումնասիրված գործերում տուժողների մեծ մասը հանցավորի հետ եղել են ծանոթ կամ գտնվել են տարբեր հարաբերությունների մեջ: Բազմաթիվ հետազոտություններ վկայում են, որ բռնաբարությունների զգալի մասը կատարվում է տուժողների պատահական ծանոթների կողմից⁶: Հետազոտությունը ցույց տվեց, որ տուժողների 67.3%-ը մինչև հանցագործությունը հանցավորի հետ ունեցել է լավ հարաբերություններ, 15.5%-ի հարաբերությունները հանցագործի հետ եղել են չեզոք, 10%-ի դեպքում այդ հարաբերությունները եղել են լարված, կոնֆլիկտային, իսկ 7.3%-ի դեպքում ընդհանրապես հարաբերություններ չեն եղել:

Ինչպես արդեն նշել ենք, վիկտիմոլոգիան ուսումնասիրում է նաև հանցանքի կատարման մեխանիզմում տուժողի վարքագծի դերը և առանձնացնում է տուժողի վարքագծի այնպիսի դրսևորումներ, ինչպիսիք են պրովոկացիոն

վարքագիծը, թեթևամիտ վարքագիծը, նպաստող վարքագիծը և այլն: Վարքագծի այս ձևերն ընդունված է անվանել մեղավոր վիկտիմայնություն, երբ տուժողն ինքն է հրահրում, դրդում մյուս կողմին հանցանք կատարելու կամ, այլ կերպ, նպաստում է դրա կատարմանը⁷:

Այս առումով շատ կարևոր է ուսումնասիրել տուժողների վարքագծի առանձնահատկությունները, քանի որ սեռական բնույթի հանցագործություններում այսպես ասած «կողմերի» փոխազդեցությունն առավել վառ է արտահայտված: Քննարկվող հանցատեսակներում հանցագործի գործողությունները հաճախ պայմանավորված են ոչ միայն իր անձնային առանձնահատկություններով, հակումներով և ցանկություններով, այլև տուժողի վարքագծով, ով իր անզգույշ, անբարո կամ հակաիրավական վարքագծով կարող է նպաստել հանցավորի մոտ առկա հակասոցիալական դիրքորոշման դրսևորմանը, ստեղծել հանցածին իրավիճակ կամ արագացնել հանցավոր հետևանքների վրա հասնելը: Հանցանքի կատարման մեխանիզմում տուժողի վարքագծի առանձնահատկություններն ուսումնասիրելիս բացահայտվեցին հետևյալ օրինաչափությունները: Այսպես, ինչպես ներկայացված է գրաֆիկ 2-ում՝ տուժողների գրեթե կեսը՝ 46.4%-ը, իր վարքագծով նպաստել էր հանցանքի կատարմանը: Նրանց 49%-ը հանցանքի կատարմանը նպաստել էր հանցավորին անհիմն վստահելու պատճառով, 47.1%-ը՝ իր թեթևամիտ վարքագծով, 4%-ը՝ իր անբարոյական վարքագծով:

Գրաֆիկ 2.



Տուժողների թեթևամիտ վարքագիծը կամ հանցավորին անհիմն վստահելը հիմնականում

⁵ Տե՛ս Ривман Д.В., “Криминальная виктимология. СПб”, 2002, с. 44-45.

⁶ Տե՛ս Антонян Ю.М., “Криминология: Учебник для бакалавров 2-е изд”, М. Юрайт, 2012. с. 168.

⁷ Տե՛ս Курганов С.И., “Криминология”, учеб. пособие. М., 2010, с. 70.

դրսևորվել է նրանում, որ տուժողները հեշտությամբ կոնտակտի մեջ են մտել անձանոթ կամ քիչ ծանոթ մարդկանց հետ, այցելել են նրանց տուն կամ առանձնացել են այլ վայրերում, նրանց հետ գնացել են ազատ ժամանցի վայրեր (հիմնականում բար, որտեղ առանձնացել են առանձին սենյակում): Հանդիպում են դեպքեր, երբ հատկապես անչափահաս տուժողները գիշերվա ուշ ժամին իրենց ծանոթի կանչով դուրս են եկել տնից իբրև թե զրուցելու կամ զբոսնելու համար: Շատ են դեպքերը, երբ տուժողները հանցավորի հետ ծանոթություն են հաստատում սոցիալական ցանցերի միջոցով և, անհիմն վստահելով նրանց կամ թեթևամիտ վարքագիծ դրսևորելով, դառնում են սեռական ոտնձգության զոհ: Մտահոգիչ է նաև որոշ անչափահաս տուժողների վարքը, որոնք հետագայում ամուսնանալու խոստման դիմաց սեռական հարաբերություն են ունենում ծանոթների կամ ընկերների հետ: Այս ամենը թույլ է տալիս եզրակացնել, որ տուժողները ծանոթություններ հաստատելիս դրսևորում են անզգուշություն, հեշտությամբ են մտնում կոնտակտի մեջ անձանոթների հետ: Այստեղ իրենց դերն են խաղում նաև անչափահասների անձնային և հոգեբանական առանձնահատկությունները:

Տուժողի վարքագծի առանձնահատկությունների բացահայտումն անչափ կարևոր է կանխման միջոցառումներ մշակելու համար: Կարևոր է ոչ միայն մինչև հանցագործությունը դրսևորած վարքագծի, այլև հանցագործության ընթացքում դրսևորվող վարքագծի ուսումնասիրությունը: Այդ ուսումնասիրությունների արդյունքները թույլ կտան արդյունավետ զբաղվելու բնակչության վիկտիմոլոգիական գիտելիքների մակարդակի բարձրացմամբ, ինչը կատարվում է արևմուտքի շատ երկրներում: Օրինակ՝ հատուկ հուշաթերթիկների միջոցով բնակչությանը տեղեկացնում են հանցագործությունների տարբեր տեսակներից տուժելու տիպական իրադրությունների և այդ իրադրությունից հնարավորինս առանց կորուստների դուրս գալու եղանակների մասին: Սակայն չպետք է մոռանալ, որ հանցագործությունից խուսափելու պատրաստի դեղատոմսեր չկան, որովհետև վիկտիմիզացիայի համար էական դեր է կատարում ոչ միայն տուժողը, այլև հանցավորը և շատ բան կախված է հանցավորի կրիմինալ է-

ներգիայից, ինչպես նաև իրադրությունից: Այնուամենայնիվ, ընդհանուր բնույթի առաջարկները և բնակչության վիկտիմոլոգիական գիտելիքների մակարդակի բարձրացումը մեծ օգուտ կարող են տալ հանցավորության կանխման առումով: Օրինակ՝ խորհուրդ է տրվում բռնարարքների դեպքում պահել իրեն ոչ թե որպես օբյեկտ, այլ սուբյեկտ, այսինքն՝ ոչ թե պասիվորեն ենթարկվել հանցավորին, այլ փորձել երկխոսության մեջ մտնել նրա հետ, ներկայանալ նրան որպես իր նման մեկը: Նման իրավիճակներում կարևոր է, որ հանցավորը տուժողին ընկալի որպես հույզերով օժտված, իր պորբլեմներն ունեցող, իրենից այնքան էլ չտարբերվող մարդ: Դա կարող է նպաստել նրան, որ հանցավորը կամ ընդհանրապես կիրառելի բռնություն գործադրելուց կամ էլ թեթև բռնություն կկիրառի: Այս առումով հետազոտության ընթացքում կարևոր էր պարզել, թե տուժողն արդյոք կարողացել է կանխել հանցագործությունը և ինչպիսի վարքագծով: Ստացված արդյունքները չափազանց մտահոգիչ են, քանի որ ընդամենը 2 հոգի են (1.8%) կարողացել կանխել հանցագործությունը. մեկը հոգեբանական կոնտակտ հաստատելով հանցավորի հետ՝ խուսափել է վնասից, իսկ մյուսը՝ դիմադրություն ցույց տալով: Սա նշանակում է, որ մեր բնակչության մեջ շատ ցածր է վիկտիմոլոգիական գիտելիքների մակարդակը, և մարդիկ պարզապես չեն տիրապետում հանցագործություններից պաշտպանվելու տարրական կանոններին ու հնարքներին:

Անձի վարքագծի վրա ազդող գործոններից է հարբածությունը, ինչը տվյալ պարագայում կարող է ունենալ վիկտիմոգեն նշանակություն: Ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ տուժողների միայն 2.7%-ն է ունեցել ակոհոլային հարբածություն, ինչը հիմք է տալիս պնդելու, որ հարբածությունը, որպես վիկտիմոգեն գործոն, այդքան էլ էական ազդեցություն չունի մեր հանրապետությունում:

Հանցագործությունների կանխման առումով կարևոր է հասարակության անդամների քաղաքացիական ակտիվությունը, ուստի, կարևոր էր պարզել, թե հանցագործության ականատեսներն ինչպիսի վարքագիծ են դրսևորել: Ուսումնասիրված դեպքերի 19.1%-ում ականատեսներ եղել են, իսկ 80.9%-ում՝ ոչ: Այն դեպ-

քերի 90.5%-ում, որտեղ ականատեսներ են եղել, ականատեսներն անտարբեր վարքագիծ են դրսևորել, իսկ 9.5%-ում հեռացել են դեպքի վայրից: Ինչպես երևում է ականատեսները ոչ մի կերպ չեն փորձել կանխել հանցանքը կամ օգնել տուժողին, ինչը խոսում է հասարակության անտարբեր վերաբերմունքի մասին հանցավոր արարքների նկատմամբ: Մյուս կողմից էլ բնակչության մոտ առկա է վախի, անպաշտպանվածության զգացում, և նման իրավիճակներում շատերը խուսափում են միջամտել:

2. Սեռական հանցագործություններից տուժածների նկատմամբ նշանակված հոգեբանական փորձաքննությունների նյութերի վերլուծություն

Շտապօգնության այս փուլն ուղղված էր դուրս բերելու իրավիճակային պայմանները, որոնք կարող էին նպաստել հանցագործության կատարմանը և ցույց տալ որոշ անձնային առանձնահատկություններ, որոնք բնորոշ են այս տիպի հանցագործություններից տուժողներին:

Շտապօգնության ընթացքում վերլուծության են ենթարկվել ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի հոգեբանական փորձաքննությունների բաժնի կողմից 2008-2013 թվականների ընթացքում իրականացրած սեռական բնույթի հանցագործություններից զոհ դարձած անձանց վերաբերյալ փորձաքննությունների գործերը: Հիմնականում ուշադրություն է դարձվել հետևյալ կետերի վրա.

- հանցագործության իրավիճակը,
- տուժողի հոգեբանական առանձնահատկությունները,
- տուժողի վարքը հանցագործությունից առաջ և հետո:

Ինչպես նաև վերլուծվել են տուժողների հետ անցկացված Տազնապայնության սանդղակ (Սպիլբերգեր-Խանին), Այզենկի անձնային հարցարան և Մ.Լյուշեռի գունային ընտրությունների թեստի միջոցով հոգեկան վիճակների միջնորդավորված ռետրոսպեկտիվ ավտորոշման մեթոդիկաների արդյունքները:

Հոգեբանական փորձաքննության ենթարկված սեռական հանցագործություններից զոհ դարձած անձանց 88.5%-ը իգական սեռի են, իսկ 11.5%-ը՝ արական: Ընդ որում կանանց 75%-ը, իսկ տղամարդկանց 92.4%-ն անչափա-

հաս են: Ինչ վերաբերում է տուժողների առողջական վիճակին, ապա զոհերի 75.2%-ը առողջ են եղել, միայն 15.9%-ն ունեցել է մտավոր հետամնացություն:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում սեռական բնույթի հանցագործություններից անչափահաս տուժողների ընտանիքի կազմը: Քրեաբանական տեսանկյունից այն ունի կարևոր նշանակություն, քանի որ ոչ լրիվ ընտանիքները, որպես կանոն, ավելի մեծ քրեածին ազդեցություն ունեն: Ճիշտ է, այստեղ խոսքը վերաբերում է տուժողներին, սակայն այս պարագայում էլ տվյալ հանգամանքը կարող է վիկտիմոզեն նշանակություն ունենալ: Անչափահաս տուժողների միայն 40.7%-ն է ապրում երկու ծնողների հետ, իսկ մնացած մասի դեպքում ծնողներից մեկը կամ երկուսը բացակայում են: Օրինակ՝ 30.2%-ն ապրում է ծնողներից միայն մոր հետ, իսկ հայրը կամ մահացել է կամ ծնողներն ամուսնալուծվել են և նրա հետ շփում չունի:

Կարծում ենք, որ այս հանգամանքը էապես նպաստել է տուժողների վիկտիմիզացիային (վիկտիմիզացիան հանցագործության զոհ դառնալու գործընթացն է): Բանն այն է, որ մեր կարծիքով, անչափահաս տուժողների՝ հայր չունենալու հանգամանքը հանցավորների մոտ կարող էր առաջացնել այն զգացումը, որ այդ դեպքում կխուսափեն պատասխանատվություն կրելուց կամ տուժողի ընտանիքի կողմից չեն պատժվի: Մյուս կողմից էլ շատ տուժողներ նպաստել են հանցանքի կատարմանն իրենց պրովոկացիոն, թեթևամիտ վարքագծով և ազատ պահելաձևով: Նման վարքագիծը կարող է պայմանավորված լինել տուժողների ոչ լիարժեք դաստիարակությամբ, նրանց վարքագծի որոշակի շեղումներով, քանի որ անձի լիարժեք ձևավորման, նորմալ դաստիարակության համար երկու ծնողների առկայությունը, նրանց միջև ջերմ հուզական կապերի առկայությունը շատ կարևոր է:

Վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ տուժողն ու հանցագործը միմյանց ճանաչել են ինչ-որ ժամանակ (32.1%), ընդ որում հիմնականում ծանոթացել են որևէ սոցիալական կայքի միջոցով և կամ հեռախոսով կամ ընդամենը մի քանի անգամ հանդիպել են:

Հանցագործությունից առաջ տուժողի վար-

քազծի առանձնահատկությունների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ նրանց կեսից ավելին՝ 54.1%-ը, իր վարքագծով նպաստել է հանցագործության կատարմանը: Նրանց 27.9%-ը և 21.6%-ը համապատասխանաբար նպաստել են հանցագործությանն իրենց թեթևամիտ վարքագծով և հանցավորին անհիմն վստահելով:

Վերլուծությունը ցույց տվեց, որ հանցագործության պահին տուժողների 19.5%-ը, ըստ փորձաքննության արդյունքների, գտնվել է անօգնական վիճակում, 12.4%-ը՝ վախի ազդեցության տակ, 8%-ը՝ սպառնալիքի, 5.3%-ը՝ ակոհոլի, 0.9%-ը՝ հոգեմետ միջոցի ազդեցության տակ, իսկ կեսից ավելին՝ 54%-ը գտնվել է սթափ վիճակում:

Հետաքրքրական է, որ տուժողների մեծ մասը՝ 54%-ը, հանցագործության պահին գտնվելով սթափ վիճակում, լիովին հասկացել են, թե իրենց հետ ինչ է կատարվում, սակայն դիմադրություն ցույց չեն տվել: Անկախ նրանից հասկանում էին իրենց հետ կատարվող գործողությունների բնույթը, թե՛ ոչ, դիմադրություն է ցույց տվել տուժողների ընդամենը 15%-ը: Ինչպես արդեն նշել ենք, սա վկայում է, բնակչության մեջ վիկտիմոլոգիական գիտելիքների ցածր մակարդակի և տուժողների կողմից հանցագործություններից պաշտպանվելու տարրական կանոններին և հնարքներին չտիրապետելու մասին: Մյուս կողմից էլ պետք է հաշվի առնել, որ տուժողների մեծ մասն անչափահասներ են և, տարիքային առանձնահատկություններից ելնելով, միգուցե չեն կարողացել ճիշտ գնահատել տվյալ իրավիճակում դիմադրություն ցույց տալու իրենց իրական հնարավորությունները: Բացի այդ փորձաքննության ենթարկվածների մեջ մեծ թիվ են կազմում ՀՀ քրեական օրենսգրքի 141 հոդվածով նախատեսված արարքներից տուժողները, այն է՝ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելն ակնհայտ 16 տարին չլրացած անձի հետ, և ելնելով այդ հանցատեսակի հանցակազմի առանձնահատկություններից, դիմադրություն ցույց տալու մասին խոսք լինել չի կարող, քանի որ նման արարքները կատարվում են տուժողի համաձայնությամբ և նրա կամքով:

Փորձաքննությունների ընթացքում տուժողների հետ անցկացված տազնապայնության սանդղակի արդյունքներից պարզ է դառնում,

որ սեռական հանցագործությունների զոհերի 55.3%-ի իրավիճակային տազնապայնության աստիճանը ցածր է, իսկ 36.8%-ինը՝ բարձր: Ինչ վերաբերում է անձնային տազնապայնությանը, ապա այս դեպքում զոհերի գերակշռող մասը՝ 69.2%-ը, ունի տազնապայնության բարձր աստիճան: Անձնային տազնապայնության բարձր մակարդակը հիմքեր է տալիս ենթադրելու, որ տվյալ անձը զգայուն է այն բոլոր վտանգների նկատմամբ, որոնք ուղղված են իր ինքնագնահատականին ու կենսագործունեությանը, բացի դրանից այսպիսի մարդիկ այդքան էլ ինքնավստահ չեն իրենց ուժերի վրա: Սակայն իրավիճակային տազնապայնության ցածր մակարդակը թույլ չի տալիս արտաքին միջավայրից եկող վտանգները ճիշտ գնահատել և համապատասխան ակտիվություն, հետաքրքրվածություն և պատասխանատվություն դրսևորել վտանգից խուսափելու համար:

Համաձայն Այգենկի անձնային հարցարանի արդյունքների՝ սեռական հանցագործություններից տուժողների 50%-ն ինտրովերտ է, 3.6%-ը՝ էքստրավերտ, իսկ մնացած 46.4%-ն ամբիվերտ է: Սա նշանակում է, որ տուժողների գերակշռող մասը ըստ իրավիճակի կարող է դրսևորել «շփվողականություն, իմպուլսիվություն, վարքի ճկունություն», «ինքնամփոփություն, պասիվություն»: Սակայն նրանք ավելի շատ շփվող չեն, ինքնամփոփ են, սոցիալապես պասիվ, հակված ինքնավերլուծության, ունեն դժվարություններ սոցիալական հարմարման հետ կապված:

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս նաև, որ տուժողների 57.1%-ը հուզականորեն կայուն է, այսինքն՝ հակված չեն անհանգստության, կայուն են արտաքին ազդեցության հանդեպ, վստահություն են ներշնչում, հակված են լիդերության: Մնացած 42.9%-ը հուզականորեն անկայուն է, ինչը նշանակում է, որ նրանք զգայուն են, հուզական, տազնապող, անհաջողությունները խորն են ապրում և ցանկացած մանրուքից կարող են հուզվել: Ստացվում է, որ սեռական բնույթի հանցագործություններից տուժողները շատ դեպքերում չեն կարողանում միջավայրից եկող վտանգները ճիշտ գնահատել և համապատասխան ակտիվություն ցուցաբերել վտանգից խուսափելու համար:

Մ. Լյուշեռի գունային ընտրությունների թեստի միջոցով հոգեկան վիճակների միջնորդավորված ռետրոսպեկտիվ ախտորոշման մեթոդիկայի արդյունքների վերլուծության նպատակն էր պարզել, թե սեռական բնույթի հանցագործությունների զոհերի մոտ ինչպիսի հույզեր են գերակայում սեռական բռնությանն անմիջապես նախորդող ժամանակահատվածում, բռնության ժամանակ և դրանից հետո: Այսպես՝ վերլուծության արդյունքներից պարզ է դառնում, որ դեպքից առաջ գերակշռող հույզերն են զարմանքը, խուճապը և հուսահատությունը, դեպքի ժամանակ՝ ատելությունը, բարկությունը, թուլությունը, իսկ դեպքից հետո՝ ատելությունը, վիրավորվածությունը, տխրությունը, խուճապը: Նման հույզերի գերակայությունը կարող է որոշակիորեն խոչընդոտել նրան, որպեսզի զոհը կարողանա դիմադրություն ցույց տալ:

Ամփոփելով հետազոտությամբ ստացված արդյունքների վերլուծությունը, կարելի է հանգել հետևյալ հիմնական եզրակացություններին.

1. Հայաստանի Հանրապետությունում սեռական բնույթի հանցագործություններից տուժողների գերակշռող մասն անչափահասներ են: Նրանց մեծ մասն ապրում են ոչ լրիվ ընտանիքներում, այսինքն՝ ծնողներից մեկը բացակայում է, ընդ որում՝ հիմնականում հայրը:

2. Սեռական հանցագործությունների մեծ մասը կատարվում է հանցավորի կամ տուժողի բնակավայրում, ինչպես նաև ազատ ժամանցի վայրերում՝ բարում, հյուրանոցում, դպրոցում կամ այլ վայրերում՝ հանցավորի մեքենայում, անտառում, փողոցում և այլն:

3. Նման հանցագործություններից տուժողները ծանոթ են հանցագործին, սակայն հիմնականում ճանաչել են շատ քիչ ժամանակ կամ նոր են ծանոթացել: Ընդ որում, քիչ չեն դեպքերը, երբ տուժողը հանցագործի հետ ծանոթություն է հաստատել հանցանքից, մասնավորա-

պես՝ սոցիալական ցանցերի և հեռախոսի միջոցով:

4. Տուժողների կեսից ավելին իրենց թեթևամիտ վարքագծով և հանցավորին անհիմն վստահելով նպաստել են հանցանքի կատարմանը: Նրանց կողմից թեթևամիտ վարքագիծը և հանցավորին անհիմն վստահելը հիմնականում դրսևորվել է անծանոթի հրավերով նրա բնակարան կամ ազատ ժամանցի անցկացման վայր այցելելը, նրա հետ ամայի վայր գնալը կամ մեքենա նստելը, հանցավորի հետ ուշ ժամի հանդիպելը և այլն:

5. Շատ տուժողներ հանցագործության պահին ոչ միայն հասկացել են իրենց հետ կատարվող գործողությունների բնույթը, գտնվել են սթափ վիճակում, այլև դիմադրություն ցույց չեն տվել: Այսինքն՝ ենթադրվում է, որ դիմադրություն ցույց չտալու պատճառներից կարող են լինել ոչ միայն տուժողի ֆիզիկական և անձնային առանձնահատկությունները, այլև գիտելիքների պակասը հանցագործություններից պաշտպանվելու վերաբերյալ:

6. Սեռական բնույթի հանցագործություններից տուժողների անձնային և հուզական առանձնահատկություններից են հուզական անկայունությունը, զգայունությունն անձին ուղղված վտանգների նկատմամբ, սակայն շատ դեպքերում անձը չի կարողանում միջավայրից եկող վտանգները ճիշտ գնահատել և համապատասխան ակտիվություն ցուցաբերել վտանգից խուսափելու համար:

7. Սեռական հանցագործությունների զոհերի մոտ դեպքին նախորդող ժամանակահատվածում գերակշռող խուճապի, զարմանքի, դեպքի ընթացքում՝ թուլության, բարկության, ատելության և դեպքից հետո՝ խուճապի, ատելության, բարկության զգացումները կարող են խոչընդոտել, որպեսզի տուժողը չկարողանա դիմադրություն ցույց տալ կամ ճիշտ գնահատել իրավիճակը:



ԱՐԵՎԿԱՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

իրավաբանական գիտությունների թեկնածու

**ԲՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՅԵՅԱԿԱՐԳՆ
ԸՍՏ ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ԻՄԱՍՏԱՄԵՐՆԵՐԻ**

Իրավունքի տեսության մեջ ձևավորվել են իրավունքի ծագման և նրա էության վերաբերյալ բազմաթիվ մոտեցումներ: Դա պայմանավորված է ճանաչման գործընթացով, քանի որ ճանաչման գործընթացում մշտապես գոյություն ունի ուսումնասիրվող երևույթի այս կամ այն կողմով հրապուրվելու, այն գերազնահատելու, նրա այլ կողմերը չնկատելու կամ դրանք անտեսելու հնարավորություն: Այստեղից էլ իրավունքի տարբեր բնորոշումներն են առաջանում, որոնք չեն կարող բացասաբար ազդել իրավագիտության զարգացման վրա, եթե, իհարկե, որևէ միակողմանի բնորոշումը չի սպառնում գոյություն ունեցող բոլոր մոտեցումներին՝ դառնալով միակ «ճիշտը»: Այժմ էլ շարունակվում են մշակվել իրավունքի տարբեր հայեցակարգեր, սակայն իրավունքի էության նոր մոտեցումները միայն ավելի են բարդացնում իրավունքի էության ճանաչման գործընթացը:

Ինչպես ճիշտ և դիպուկ նկատել է Վ.Վ. Լազարևը. «Իրավունքի ըմբռնման նոր մոտեցումների փորձերը հարկ է գնահատել և՛ որպես տեսաբանների անկարողություն փոխել ինչ-որ բան գոյություն ունեցող իրականությունում, և՛ որպես ձգտում օրինականացնել (արդարացնել) այն հարաբերությունները, որոնք ձևավորվում են պաշտոնական ձևից և կառուցվածքից բացի (կամ հակառակ)»¹:

Համաձայնելով նման դիրքորոշման հետ՝ սույն հոդվածում կդիտարկեն միայն իրավունքի էության պատմականորեն ձևավորված բնական իրավունքի հայեցակարգն ըստ Հին Հունաստանի իմաստունների:

Բնական իրավունքի հայեցակարգն անցել է զարգացման բավականին երկար շրջան՝ սկիզբ առնելով անտիկ աշխարհից, երբ հին հույն մեծագույն փիլիսոփաներ Սոկրատեսը,

Պլատոնը, Արիստոտելը և ուրիշներ այն կարծիքն էին արտահայտում, որ մարդկանց կողմից ստեղծված գրավոր օրենքների հետ մեկտեղ գոյություն ունեն «աստվածային բանականությանը մարդկանց սրտերում ներդրված հարատև չգրված օրենքներ»²:

Այլ կերպ ասած՝ պետության գոյությամբ պայմանավորված, մարդկանց կողմից ստեղծված օրենքներից բացի կան նաև մարդկանց կամքից անկախ գոյություն ունեցող իրավունքներ, որոնք էլ կազմում են բնական իրավունքը:

Հին հունական փիլիսոփայական մտքի ամենամեծ նվաճումը մարդու՝ որպես բարձրագույն արժեքի գաղափարն է:

Բոլոր մարդկանց բնական ազատության մեծագույն գաղափարն առաջին անգամ արտահայտել են սոփեստները (մ.թ.ա. 5-4-րդ դարեր):

Սոփեստների հայեցակետի հիմնարար սկզբունքը ձևակերպել է Պրոթագորասը (մոտ մ.թ.ա. 481-411թթ.): Այն ազդարարում է. «Բոլոր իրերի չափը մարդն է. գոյություն ունեցողների, որ գոյություն ունեն, գոյություն չունեցողների, որ գոյություն չունեն»³:

Պրոթագորասի դրույթը մարդու՝ որպես բոլոր իրերի չափի մասին կտրուկ կերպով հակասում էր հենց աստվածայինի՝ որպես ամեն ինչի չափի ու մասշտաբի մասին ավանդական պատկերացումներին:

Պրոթագորասի ժողովրդավարական գաղափարը և միաժամանակ նրա քաղաքական-իրավական հայեցակարգը նրանում է, որ պետության գոյությունը ենթադրում էր նրա բոլոր անդամների մասնակցությունը մարդկային առաքինություններին, որոնց շարքին նա դասում է արդարությունը, խելամտությունը և բարեպաշտությունը: Հիմնավորելով պոլիսի (քաղաք-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 86 2015

¹ Տե՛ս «Общая теория права и государства» под ред. В.В. Лазарева, Учебник, 2001г. 3-е издание (электронное), с. 62.

² Տե՛ս Марченко М. Н., «Теория государства и права», перераб. и доп. – Москва, 2004г., с. 115.

³ Տե՛ս Нерсесянц В.С., «История политических и правовых учений», Учебник для вузов, Москва, 2014г., с. 65.

պետության) անդամների հավասարությունը՝ Պրոթագորասը պնդում է, որ Պրոմեթևսի ընծաները (կրակին տիրանալը) և Չևսի ընծաները (ամոթն ու ճշմարտությունը, համատեղ ապրելու ունակությունը) տրված են եղել բոլոր մարդկանց (հելլեններին), այնպես, որ նրանց հավասար չափով մատչելի է պոլիսային կյանքի արվեստը և նրանք բոլորը հավասար չափով հանդիսանում են պոլիսի քաղաքացիներ:

Սոփեստ Հիպիուսը հակադրում էր «ըստ բնության իրավունքը» (բնության հրամանները) պոլիսի արհեստական իրավունքին: Նա քննադատորեն նշում էր պոլիսային օրենքների պայմանականությունը, փոփոխականությունը, հեղիեղուկ և ժամանակավոր բնույթը, դրանց կախվածությունը մեկը մյուսին փոխարինող օրենսդիրներից:

Հիպիուսը համարում էր, որ, ի տարբերություն պոլիսային օրենքների, բնական չգրված օրենքները արդար են և «միատեսակ են կատարվում յուրաքանչյուր երկրում»⁴:

Ըստ բնության համընդհանուր հավասարության դրույթն առաջ քաշեց սոփեստ Անտիֆոնտը, ընդ որում նա հենվում էր այն բանի վրա, որ բոլոր մարդկանց մոտ (հելլենների և բարբարոսների, ազնվականների և հասարակ մարդկանց) բնական կարիքները նույնն են:

Նա գտնում էր, որ մարդկանց անհավասարությունը հետևանք է մարդկային, այլ ոչ բնական օրենքների: Անտիֆոնտը նշում է. «Մեր բնությամբ մենք ամեն ինչով հավասար ենք, ընդ որում նաև հելլեններն ու բարբարոսները: Հարկ է ուշադրություն դարձնել այն բանին, որ բոլոր մարդկանց մոտ կարիքները բնությունից նույնն են»⁵:

Բոլոր մարդկանց (ներառյալ նաև ստրուկների) բնական-իրավական հավասարության ու ազատության գաղափարը հիմնավորում էր նաև սոփեստ Ալկիդամոսը: Նրան են վերագրում հետևյալ նշանավոր բառերը. «Աստված բոլորին ազատ է ստեղծել, իսկ բնությունը ոչ մեկին ստրուկ չի արարել»⁶:

Պոլիսի օբյեկտիվորեն բանական բնույթի և նրա օրենքների հասկացական-տեսական հե-

տազոտության սկիզբը (տրամաբանված ընդհանուր հասկացությունների օգնությամբ) կապված է Սոկրատեսի անվան հետ: Խոսելով պոլիսի բնական և արդար օրենքներին հետևելու անհրաժեշտության մասին՝ Սոկրատեսը կարծում էր, որ միայն այդ ճանապարհով է հասանելի ազատությունը՝ ինչպես մարդու, այնպես էլ պետության վեհաշուք և գեղեցիկ սեփականությունը:

Սոկրատեսի ռացիոնալիստական գաղափարները զարգացրեց նրա աշակերտ Պլատոնը: Իդեալական պետության նրա նախագծում բացակայում են մասնավոր սեփականությունը և մարդկանց բաժանումն ազատների ու ստրուկների:

Բնորոշելով արդարությունն իդեալական պետության մեջ՝ Պլատոնը գրում է. «Թերևս արդարությունն այն է, երբ ամեն մարդ զբաղվում է իր գործով», «արդարությունն այն է, որ ամեն մեկն ունենա իրենը և կատարի նույնպես իրենը» («Պետություն» 433 Ե):

Արդարությունն, ըստ Պլատոնի, ենթադրում է «պատշաճ (անհրաժեշտ) չափ», որոշակի հավասարություն, ընդ որում, նա, հղում կատարելով Սոկրատեսին, տարբերակում է հավասարության երկու տեսակ. «երկրաչափական հավասարություն» (հավասարություն ըստ արժանիքների և բարեմասնությունների) և «թվաբանական հավասարություն» (չափի, քաշի, թվի հավասարություն)⁷:

Բացատրելով նման տարաբաժանման իմաստը՝ Պլատոնը նկատում է, որ «եթե չպահպանվի պատշաճի չափը, ապա անհավասարների համար հավասարը կդառնար անհավասար» («Օրենքներ» 757ա): «Երկրաչափական հավասարությունը»՝ «ամենաճշմարիտ ու լավագույն հավասարությունն է, քանզի մեծին նա տրամադրում է ավելին, իսկ փոքրին՝ նվազը, յուրաքանչյուրին շնորհելով այն, ինչ համաչափ է նրա բնությանը» («Օրենքներ» 757 բ, գ):

Այս դրույթները հետագայում ընդլայնվեցին և էլ ավելի զարգացվեցին Արիստոտելի կողմից արդարության երկու տեսակների՝ հավասարեցնող արդարության և բաշխիչ արդա-

⁴ Sեն Мирумян К., “Права человека: историко-политический очерк”, Ережан 2002г. с. 22.

⁵ Sեն “Антология мировой философии”, Москва, 1969г., т.1.4.1., с. 321.

⁶ Sեն Нерсисянц В.С., “История политических и правовых учений”, Учебник для вузов. Москва, 2014г. , с. 67.

⁷ Sեն Мирумян К. А., “История политической науки”. Эпоха античности. Часть 1, Ереван, 2004г. с. 142.

րության մասին նրա ուսմունքում: Բաշխիչ արդարությունն այն արդարությունն է, որը դրսևորվում է հասարակության անդամների միջև այն ամենի բաշխման ժամանակ, ինչը կարող է բաժանված լինել (իշխանություն, պատիվ, բարիքներ և այլն): Հավասարեցնող արդարությունը գործում է փոխանակման ոլորտում և «դրսևորվում է հավասարեցման մեջ այն ամենի, ինչը կազմում է փոխանակման առարկա»: Արդարության այս տեսակը կիրառվում է քաղաքացիական-իրավական գործարքների, վնասի հատուցման, հանցագործության և պատժի բնագավառներում:

Ըստ Արիստոտելի՝ որպես բաշխիչ արդարության սկզբունք հանդես է գալիս բոլոր քաղաքացիների համար ընդհանուր համապատասխան բարիքների բաժանումն ըստ արժանիւյն, այսինքն՝ համաձայն ընդհանուր գործում մարդկանց ունեցած լումայի կամ ավանդի: Այդ իսկ պատճառով բաշխիչ արդարությունն Արիստոտելի կողմից մեկնվում է (ոչ առանց արդարության և այլ առաքինությունների թվային բնութագրությունների մասին պլուրազորացիների պատկերացումների ազդեցության) որպես երկրաչափական համամասնությամբ հավասարություն, իսկ հավասարեցնող արդարության մեջ նա նկատի ունի թվաբանական հավասարություն:

Մեկնելով իրավունքը որպես քաղաքական արդարություն՝ Արիստոտելը գրում է. «Մեր ուշադրությունից չպետք է խույս տա այն հանգամանքը, որ մեր խնդրո առարկա հասկացությունն ինչպես ընդհանրապես արդարության, այնպես էլ քաղաքական արդարության (իրավունքի) մեջ է, իսկ վերջինս տեղի է ունենում միևնույն շփմանը պատկանող մարդկանց միջև և նպատակ ունի ինքնաբավարարել նրանց, ընդ որում, ազատ ու հավասար, այսինքն համամասնության կամ ընդհանրապես թվի իմաստով հավասար մարդկանց միջև: Նման հարաբերություններում չզտնվող մարդիկ միմյանց հանդեպ չեն կարող քաղաքական հավասարություն (իրավունքներ) ունենալ, սակայն ու-

նեն որոշակի տեսակի արդարություն, որն այդպես է կոչվում նախորդ տեսակի հետ նմանության պատճառով: Իրավունքներ ունեն այն մարդիկ, որոնց համար գոյություն ունի օրենք, որը բնորոշում է նրանց հարաբերությունները: Օրենքն էլ ենթադրում է հանցագործություն, իսկ դատարանը՝ ճշմարտության և ստի բաշխում» («Էթիկա», V, կ. 10):

Քաղաքական իրավունքն Արիստոտելը բաժանում է 2 մասի. բնական և կամքի ուժով սահմանված (պոզիտիվ) իրավունքի: Նա նշում է, որ թեև իրավունքի ողջ ոլորտը հարափոփոխ է, սակայն արդարության մասին հասկացությունները փոփոխական են միայն որոշակի չափով: «Պարզ է,- գրում է Արիստոտելը («Էթիկա», V, կ. 10),- թե ինչը այն երևույթներից, որոնք կարող են նաև այլ լինել, պետք է դասվի ոչ թե բնական իրավունքի բնագավառին, այլ օրենքով ու համընդհանուր համաձայնությամբ սահմանվածին»⁸:

Արիստոտելի մեկնությամբ քաղաքական (պետական) կառուցվածքի տարբեր ձևերը շնորհիվ հենց իրենց քաղաքականության համապատասխանում են արդարության սկզբունքին և իրավունքի գաղափարին, այսինքն, այլ կերպ ասած, կրում են իրավական բնույթ: Արիստոտելը գրում է. «Այսպիսով, պարզ է, որ միայն ընդհանուր օգուտը նկատի ունեցող պետական կարգի ձևերն են, համաձայն բացարձակ արդարության սկզբունքի, հանդիսանում ճիշտը: Իսկ այն ձևերը, որոնց դեպքերում հաշվի է առնվում միայն կառավարողի անձնական բարիքը, բոլորն էլ սխալ են և շեղում են ճշմարտից: Դրանք հիմնված են բռնապետության սկզբունքի վրա, իսկ պետությունն ազատ մարդկանց շփում է» («Պոլիտիկա», III, 4, 7, 1279ա26):

Բռնապետությանը հակադրվող քաղաքական և իրավական ձևերի նման սկզբունքային ընդհանրությունը և առարկայական-իմաստային միասնականությունը հիմք են տալիս Արիստոտելի ուսմունքում իրավական պետության հայեցակարգի առկայության մասին:

Ըստ Արիստոտելի՝ իրավունքն ամբողջա-

⁸ Արիստոտելի իրավական հայացքները հետազոտող Վ. Ջիգֆրիդը հետևյալ կերպ է բնութագրում նրա բնական-իրավական պատկերացումները. «Իմ կարծիքով, բնական իրավունքի բարձրագույն և համընդհանուր դրույթն ամենասեղմ կերպով ազդարարում է. ամենքին՝ իրենը, պատշաճը...: Երկրորդ հիմնական դրույթը, որն իրենից ներկայացնում է առաջինի կիրառման ձևը, հոչակում է. հավասարներին՝ հավասարը, անհավասարներին (համապատասխանաբար)՝ անհավասարը»: St'u Siegfried W., St'u "Der Rechtsgedanke bei Aristoteles". Zurich, 1947, p. 64-65:

պես (և բնական, և կամքի ուժով հաստատված), ինչպես և անհատի իրավունքները կրում են քաղաքական բնույթ, հնարավոր են միայն պետության մեջ, այսինքն՝ հելլենական պոլիսի պայմաններում, ընդ որում, «ազատածին և համամասնորեն կամ թվաբանորեն հավասար քաղաքացիների համար» («Էթիկա», 10, 25): Իշխանության տիրապետական, այսինքն՝ ոչ քաղաքական տեսակի և նման հարաբերությունների (բարբարոսական բռնապետություններում, տիրոջ և ստրուկի հարաբերություններում) ինչպես իրավունքն ամբողջապես, այնպես էլ անհատի իրավունքներն անհնարին են: Ոչ քաղաքական այս պայմանների ու հարաբերությունների դեպքում, նկատում է Արիստոտելը, իրավունքի մասին կարելի է խոսել միայն պայմանականորեն, այլաբանորեն:

Հատուկ պետք է նշել մասնավոր սեփականության, անհատական ընտանիքի, անձի իրավունքների պաշտպանությունն Արիստոտելի կողմից (ընդդեմ Պլատոնի բանավեճում): Նրա այս դրույթներին հետագայում հաճախ էին հղումներ անում մարդու բնական իրավունքների կողմնակիցներից շատերը:

Հելլենիզմի դարաշրջանում պետության և իրավունքի՝ որպես մարդկանց անհատական ազատությունն ու փոխադարձ անվտանգությունն ապահովող հանրագուտ պայմանագրի մասին պատկերացումները զարգացել է Էպիկուրը: Էպիկուրյան էթիկայի հիմնական արժեքները՝ ազատություն, հաճույք, «ատարաքսիա»՝ ոգու անվրդովություն, ինչպես նաև ողջ ուսմունքն ամբողջապես կրում են անհատական բնույթ:

Էպիկուրի տեսակետի համաձայն մարդու ազատությունը նրա պատասխանատվությունն է կենսակերպի խելամիտ ընտրության համար:

Մարդու ազատության ոլորտն իր համար իր պատասխանատվության ոլորտն է: Այն անհրաժեշտությունից դուրս է, քանի որ «անհրաժեշտությունը ենթակա չէ պատասխանատվության», ինչպես նաև դուրս է հարափոփոխ դիպվածից: Ազատությունը ձեռք է բերվում շնորհիվ այն բանի գիտակցման, թե «ինչն է կախ-

ված մեզանից և չի պատկանում ոչ մի տիրոջ»:

Էպիկուրը գրում է. «Անհրաժեշտությունն աղետ է, սակայն ոչ մի անհրաժեշտություն չկա անհրաժեշտությամբ ապրելու»⁹:

Բանականության ուժով կրքերի ու ցանկությունների սանձահարումը, քչով բավարարվելը. ահա ինչպիսին են ազատ մարդու ամենաէական գծերը: «Իրենով բավարարվելու (ցանկությունների սահմանափակման) գերագույն արգասիքն ազատությունն է»¹⁰:

Պետության ստեղծման և քաղաքական շփման կազմակերպման գլխավոր նպատակներն, ըստ Էպիկուրի, կազմում են մարդկանց փոխադարձ անվտանգության ապահովումը, նրանց փոխադարձ վախի հաղթահարումը, միմյանց վնաս չպատճառելը:

Քաղաքական շփման սահմաններում «անվտանգությունը (այլ) մարդկանցից որոշ չափով ձեռք է բերվում շնորհիվ որոշակի ուժի, որը հեռացնում է (վտանգ ներկայացնող) մարդկանց, ինչպես նաև բարորությամբ»:

Քաղաքական շփման բնույթի ու նպատակի, ազատության իմաստի այդպիսի ընկալման հետ է կապված նաև պետության ու իրավունքի էպիկուրյան մեկնաբանությունը՝ որպես ընդհանուր օգուտի և փոխադարձ անվտանգության վերաբերյալ մարդկանց՝ միմյանց միջև կնքված պայմանագրի: Էպիկուրը գրում է «Բնությունից եկող պայմանագիրը պայմանագիր է օգտակարի մասին՝ միմյանց վնաս չհասցնելու և վնաս չկրելու մասին»¹¹:

Պետության և իրավունքի պայմանագրային բնույթը Էպիկուրի ուսմունքում նշանակում է, որ դրանք տրված չեն բնության կողմից, կուրորեն պարտադրված չեն դրսից, այլ հանդիսանում են մարդկանց ինքնորոշումներ, մարդկային սահմանումներ:

Արդարության պայմանագրային բնույթը Էպիկուրը պարզաբանում է հետևյալ կերպ. «Արդարությունն ինքնին ինչ-որ որոշակի բան չէ, սակայն մարդկանց միջև հարաբերություններում, որտեղ էլ դա լինի, միշտ կա որոշակի պայման միմյանց վնաս չհասցնելու ու վնաս չկրելու մասին»¹²:

⁹ Տե՛ս Материалисты Древней Греции. с. 219.

¹⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 224:

¹¹ Տե՛ս նույն տեղում, էջ 217:

¹² Տե՛ս նույն տեղում, էջ 217:

Էպիկուրի հայեցակարգի համաձայն՝ արդարության սկզբունքն ու չափանիշը կիրառելի են միմիայն պայմանագրային շփման մասնակիցների (մարդկանց ու ժողովուրդների) հանդեպ: Արդարության հասկացության կոնկրետ բովանդակությունը փոփոխական է՝ կախված այս կամ այն երկրի անհատական առանձնահատկություններից և հարափոփոխ հանգամանքներից:

Սակայն ողջ այս փոփոխականությամբ հանդերձ՝ արդարության բուն սկզբունքը մնում է հաստատուն ու անփոփոխ. «...ընդհանուր առմամբ արդարությունը նույնն է բոլորի համար, որովհետև այն օգտակար մի բան է մեկը մյուսի հետ շփվելու ժամանակ»¹³:

Էպիկուրի հայեցակարգում արդարությունն՝ օրենքի հետ նրա հարաբերակցության լույսի ներքո, բնական իրավունք է՝ ըստ տեղի, ժամանակի և հանգամանքների փոփոխվող բովանդակությամբ, որի իմաստն ու էությունը կազմում են փոխադարձ շփումների հարափոփոխ օգուտը:

Բնական իրավունքի և օրենքի հարաբերակցության այս կառուցվածքում շարժիչ ուժը և միաժամանակ «արդարության մասին բնական պատկերացումների» համար աղբյուր են հանդիսանում մարդկանց փոխադարձ շփման հարափոփոխ գործնական պահանջմունքները: Այս պահանջմունքների փոփոխման հետ փոխվում են նաև հանրօգուտի մասին պատկերացումներն, այսինքն՝ այն, ինչը կազմում է արդարության բովանդակությունը: Այստեղ արդարությունը (փոփոխական բովանդակությամբ բնական իրավունքը) հանդես է գալիս որպես օրենքի՝ մարդկանց փոփոխվող պահանջմունքներին և դրա հետ մեկտեղ արդարության մասին հարափոփոխ բնական պատկերացումներին համապատասխանության չափանիշ:

Արդարությանը համապատասխանող օրենքները հանդես են գալիս որպես՝ «իմաստուններին» «ամբոխից» պաշտպանող միջոց, որպես անհատի ազատության, անվտանգության, ինքնավարության հանրային երաշխիք:

Պետության և իրավունքի էպիկուրյան մեկնաբանությունը ենթադրում է մարդկանց՝ որպես պայմանագրային շփման անդամների հա-

վասարություն, ազատություն ու անկախություն և, ըստ էության, հանդիսանում է ազատակա- նության (լիբերալիզմի) և իրավական անհատականության փիլիսոփայաիրավական առաջին հայեցակարգը:

Էպիկուրի պայմանագրային-իրավական հայեցակարգից դեպի նոր ժամանակների հասարակական պայմանագրի գաղափար գալիս է շատ կարևոր մի կապ:

Անձի իրավունքների (ազատ քաղաքացիների) գաղափարների ձևավորումը քաղաք-պետություններում (պոլիսներում) խոշոր առաջընթաց էր դեպի ազատությունը:

Կարելի է ընդհանրացնել, որ Հին Հունաստանի իմաստունները մարդու իրավունքների ճանաչման, գնահատման և պաշտպանման խնդրում իրենց նշանակալի ավանդն են ունեցել, որը հետագա դարերում, մասնավորապես, XVII-XVIII դարերում տեսական և իմացաբանական աղբյուր հանդիսացավ մարդու իրավունքների, հատկապես բնական իրավունքների հայեցակարգի համար:

Բնահրավական հայեցակարգը, որպես իրավաընկալման առանձին ուղղություն, ձևավորվեց ֆեոդալիզմի քայքայման՝ XVII-XVIII դարերում, բուրժուական հեղափոխությունների նախապատրաստման և իրականացման շրջանում: Բնական իրավունքի հայեցակարգը և նրա առանձին դրույթներն օգտագործվում էին ժամանակի մեծագույն մտավորականների և լուսավորիչների կողմից. Հոլանդիայում՝ Հուգո Գրոցիուս և Սպինոզա, Անգլիայում՝ Թոմաս Հոբս և Ջոն Լոկ, Ֆրանսիայում՝ Ժան Ժակ Ռուսո և Պոլ Հոլբախ: Նրանց շնորհիվ ձևավորվեց բնական իրավունքի դպրոցը, որը հետագայում մեծ ազդեցություն ունեցավ ինչպես առանձին պետությունների ազգային իրավունքի, այնպես էլ միջազգային իրավունքի ձևավորման վրա:

Այս շրջանի բնական իրավունքի տեսությանը բնորոշ էր մի շարք հին դրույթների ժխտումը, ինչպիսին էր բնական իրավունքի՝ աստվածային կամքից սերումը: Չէր արդարացվում նաև միապետի անսահման իշխանությունը՝ որպես միջնադարում ընդունված իբրև երկրի վրա աստվածային իշխանություն: Այս ա-

¹³ Տե՛ս նույն տեղում, էջ 217:

ռումով Հոլբախը գրում էր, որ «գործնականում, այդ գաղափարը ծառայում էր որպես ամենակարողության, իշխանությունների անվերահսկելիության, կյանքի բոլոր ոլորտներում, այդ թվում նաև իրավաստեղծ և իրավակիրառ ոլորտներում, միապետերի և իշխանությունների կամայականության արդարացման գործիք»¹⁴:

Սուր քննադատության առնելով պետական իշխանության և իրավունքի աստվածային ծագման գաղափարը՝ Հոլբախը և այս շրջանի բնաիրավական հայեցակարգի կողմնակիցները աստվածային կամքի փոխարեն առաջ քաշեցին ազգերի, ժողովուրդների, առանձին անձանց կամքը՝ որպես իրավաստեղծ գործոնի:

Հոլբախը գրում է. «Եթե ազգերը կարողանային դիմել բանականությանը, ապա կտեսնեին, որ միայն իրենց կամքը կարող է ինչ-որ մեկին բարձրագույն իշխանություն պատվիրակել»¹⁵:

Այսպիսով, բնական իրավունքի հայեցակարգը ելնում է իրավունքի դուալիզմի (երկակիության) գաղափարից: Համաձայն այդ հայեցակարգի, բացի պետության կողմից սահման-

վող պոզիտիվ (դրական) իրավունքից, գոյություն ունի մարդուն ի ծնե տրված բարձր բնական իրավունք:

Ի տարբերություն պոզիտիվ իրավունքի, բնական իրավունքը բխում է մարդու բնությունից, մարդկային բանականությունից, համընդհանուր բարոյական սկզբունքներից: Այդ պատճառով էլ այն ճիշտ է ու արդարացի, սահմանափակված չէ առանձին պետությունների սահմաններով, գործում է բոլոր ժամանակների ու բոլոր ազգերի համար: Այն մշտական է ու անփոփոխ, ինչպես հավերժ ու անփոփոխ է մարդու բնությունն ու մարդկային բանականությունը: Այս հայեցակարգի կողմից որպես բնական օրենքներ հիմնավորված բարոյական և իրավական գաղափարներն ու սկզբունքները մարդու անօտարելի իրավունքներն են: Ըստ բնական իրավունքի հայեցակարգի՝ արդարությունը, ազատությունը, հավասարությունը կազմում են իրավունքի միջուկը, պայմանավորում են իրավաստեղծ և իրավակիրառ գործընթացները:



¹⁴ Տե՛ս Марченко М.Н., “Теория государства и права”, 2-е изд., Москва, 2004г., с. 121.

¹⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 122:

ՄԱՐԻՆԵ ԳՅՈՒՐՋՅԱՆ

«Այնտեղ» կառավարման ակադեմիայի
իրավագիտության ամբիոնի հայցորդ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆՆ ՈՒ ՁԵՎԻՆ ՆԵՐԿԱՅԱՋՎՈՂ ԴԱՆԱՆՁՆԵՐԸ

Եվրոպական իրավունքի արագընթաց զարգացման պայմաններում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ ՄԻԵԴ) օրեցօր առավել հասանելի է դառնում այն անձանց համար, ովքեր ցանկանում են իրենց խախտված սահմանադրական իրավունքների ու ազատությունների պաշտպանությունն իրականացնել միջազգային ատյանների մակարդակով: Սակայն այս կամ այն բողոքը քննության ընդունելուց առաջ ՄԻԵԴ-ն ուսումնասիրում է դիմումը՝ բովանդակությանը և ձևին ներկայացվող պահանջների պահպանման տեսանկյունից: Դիմումի «ընդունելիության» հասկացությունը ոչ միայն տեսական, այլև գործնական հասկացություն է, որից էլ կախված է ՄԻԵԴ-ի արդարադատական գործունեության բնույթն ու ուղղվածությունը: Այս հասկացությունն իր մեջ ներառում է նախապայմանների մի խումբ, առանց որոնց պահպանման ոչ մի դիմում քննության չի կարող ընդունվել:

Եվրոպական Կոնվենցիայի 35-րդ հոդվածը սահմանում է, որ ՄԻԵԴ-ը գործը կարող է քննության ընդունել միայն արդարադատության ազգային մարմինների կողմից վերջնական որոշման կայացման պահից վեց ամսվա ընթացքում և միայն այն դեպքում, եթե դիմումատուն արդեն իսկ սպառել է իր իրավունքների պաշտպանության ներպետական բոլոր իրավական միջոցները, ինչպես նախատեսված է միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերով:

Իրավական պաշտպանության ներպետական միջոցների սպառումը, մինչև միջազգային դատական մարմին գանգատ ներկայացնելը, միջազգային իրավունքի ընդհանուր կանոն է, որի հիմքում ընկած է այն սկզբունքը, որի համաձայն՝ միջազգային դատարանը լրացուցիչ ու ոչ թե ազգային դատարանին փոխարինող

մարմին է, և որ յուրաքանչյուր պետությանը պետք է հնարավորություն ընձեռվի իր ստանձնած միջազգային պարտավորությունների խախտումները շտկել առաջին հերթին ներպետական իրավական ինստիտուտների միջոցով:

Նման ընթացակարգային պահանջի իմաստը ՄԻԵԴ-ը բացատրել է իր առաջին վճիռներից մեկում՝ «Գուզարդին ընդդեմ Իտալիայի»: Այդ պահանջի անհրաժեշտությունը հիմնավորվում է նրանով, որ Եվրոպական Կոնվենցիայով նախատեսված համակարգն իր բնույթով օժանդակ է (սուբսիդիար), այսինքն՝ դիմումատուն իրավունք ունի գանգատ ներկայացնել ՄԻԵԴ միայն իրավական պաշտպանության ներպետական բոլոր մատչելի միջոցները սպառելուց հետո: Մարդու իրավունքների պաշտպանությունն առաջին հերթին պարտավոր են ապահովել պետության ներպետական մարմինները, ներառյալ՝ ազգային դատարանները, որոնք պարտավոր են Եվրոպական Կոնվենցիայի նորմերն ու սկզբունքներն ընդունել որպես իրենց գործունեության առաջնային հիմք: Իսկ ՄԻԵԴ-ը կոչված է աջակցելու ազգային դատարաններին՝ Եվրոպական կոնվենցիայի դրույթների ճիշտ մեկնաբանման և կիրառման գործում, ինչպես նաև վերահսկողություն իրականացնել Եվրոպական կոնվենցիայով երաշխավորվող մարդուն իրավունքների և հիմնարար ազատությունների՝ ներպետական մակարդակով պահպանման նկատմամբ:

Քննություն իրականացնելու սուբսիդիար բնույթը և իրավունքների պաշտպանության ազգային բոլոր մարմինները սպառած լինելու պահանջն ընդհանուր է մարդու իրավունքների խախտման վերաբերյալ ցանկացած վեճ քննող յուրաքանչյուր միջազգային մարմնի համար, օրինակ՝ 1966 թվականի Քաղաքացու և մարդու իրավունքների մասին միջազգային պակտին

● ՕՐԻՆԱԿԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ № 86 2015

կից ֆակուլտատիվ արձանագրության 2-րդ հոդվածը սահմանում է, որ Մարդու իրավունքների կոմիտե կարելի է դիմել միայն այն դեպքում, երբ անձը սպառել է իրավական պաշտպանության բոլոր առկա մարմինները¹: Նույն պահանջն են ամրագրում նաև Միավորված ազգերի կազմակերպության շրջանակներում կնքված «Տանջանքների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» կոնվենցիան², «Ռասայական խտրականության ցանկացած դրսևորման վերացման մասին» միջազգային կոնվենցիան³ և մարդու իրավունքների վերաբերյալ այլ համընդհանուր ու տարածաշրջանային միջազգային փաստաթղթերը:

Պետք է նշել, որ իրավունքների պաշտպանության ազգային մարմինները սպառելու մասին հարցը կախված է նաև պատասխանող պետության ընդհանուր քաղաքական-իրավական մթնոլորտից, մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության մեխանիզմի սահմանադրական կառուցվածքի յուրահատկություններից: Օրինակ՝ եթե տվյալ երկրի այս կամ այն վարչական, իրավապահ կամ դատական մարմիններին դիմելը որոշակի ժամկետի ավարտից հետո կամ որոշակի պայմանների չպահպանման դեպքում անիմաստ է կամ կարող է չտալ սպասված արդյունքը, ապա նման դեպքերում ՄԻԵԴ-ը պարտադիր չի համարում բոլոր ատյանների սպառումը, քանի որ դրանք փաստացի անկարող են որևէ բան փոխել կամ գոնե կասեցնել արդեն իսկ օրինական ուժ ստացած բողոքարկող որոշումը: Երկրի ներքին ատյաններին դիմելու արդյունավետության պահանջն ամրագրված է Եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածում: ՄԻԵԴ-ը բավականին հաճախ է գալիս այն եզրահանգման, որ այս կամ այն պետությունում բացակայում են մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության արդյունավետ դատական միջոցները: Որպես օրինակ կարող ենք ասել, որ Հայաստանի Հանրապետության Սահմա-

նադրական դատարան դիմելը ՄԻԵԴ-ը չի կարող դիտել որպես խախտված իրավունքի պաշտպանության արդյունավետ միջոց, քանի որ մեր սահմանադրական դատարանն իրավասու չէ որոշել այս կամ այն կայացված որոշման Սահմանադրության համապատասխանության հարցը: Սակայն այն կարող է որոշել տվյալ վեճը լուծելիս կիրառված օրենքների սահմանադրականության հարցը, որոնք էլ պատճառ են դարձել իրավունքի խախտման համար, և արդյունքում այդ օրենքի դրույթը ճանաչվի հակասահմանադրական: Այս դեպքում Սահմանադրական դատարան դիմելը ՄԻԵԴ-ի կողմից արդեն կգնահատվի որպես արդյունավետ պաշտպանության միջոց, իսկ ներքին մարմինները սպառելու պահանջը՝ չկատարված:

Այն դեպքերում, երբ ազգային իրավական համակարգը հնարավորություն է տալիս Սահմանադրական դատարան դիմել անհատական հայցերով, ապա տվյալ դեպքում ևս ՄԻԵԴ-ն այս իրավունքը համարում է խախտված իրավունքների ու ազատությունների վերականգնման պայքարում արդյունավետ միջոցներից մեկը, և, հետևաբար, այդ հնարավորությունն անպայման պետք է սպառված լինի մինչև ՄԻԵԴ բողոք ներկայացնելը:

Այն խնդրի ուսումնասիրման ընթացքում պետք է հստակ տարբերակել, թե որո՞նք են հանդիսանում այն մարմինները, որոնց որոշումները հանդիսանում են վերջնական և ինչ ատյաններ պետք է սպառի դիմումատու մինչև ՄԻԵԴ դիմելը: Եվրոպական կոնվենցիային կից թիվ 7 Արձանագրության Բացատրական զեկույցի համաձայն. «դատական որոշումը համարվում է վերջնական, եթե այն ստացել է *res judicata* ուժ: Այս դեպքում այն վերջնական է, այսինքն՝ բացակայում են այն վերացնելու կամ փոփոխելու սովորական միջոցները կամ կողմերն արդեն իսկ սպառել են դրանք կամ բաց են թողել բողոքարկման համար սահմանված ժամկետները»⁴:

ՄԻԵԴ-ն իր գործունեության ընթացքում

¹ Տե՛ս 1966 թվականի «Քաղաքացու և մարդու իրավունքների մասին» միջազգային պակտին կից Ֆակուլտատիվ արձանագրություն, ՄԱԿ, Նյու Յորք, 1989 թվական:

² Տե՛ս «Տանջանքների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» կոնվենցիա, 1984 թվական:

³ Տե՛ս «Ռասայական խտրականության ցանկացած դրսևորման վերացման մասին» միջազգային կոնվենցիա, 1965 թվական:

⁴ Տե՛ս “Бюллетень Европейского суда по правам человека”, Российское издание N3620056, с. 12.

մշակել է որոշակի չափանիշներ այն հարցի լուծման համար, թե յուրաքանչյուր կոնկրետ դեպքում իրավական պաշտպանության ներպետական որ միջոցները պետք է սպառված լինեն, և արդյո՞ք դիմումատուն կարող էր այդ միջոցների օգտագործման դեպքում իր պահանջի արդարացի բավարարում ստանալ: Նման չափանիշներ են համարվում իրավական պաշտպանության ներպետական միջոցների մատչելիությունը, դրանցից օգտվելու նպատակահարմարությունը և արդյունավետությունը: ՄԻԵԴ-ն ընթացակարգային այս պահանջի պահպանված լինելու հարցը գնահատելիս ելնում է նաև նրանից, որ իրավական պաշտպանության արդյունավետ միջոց են համարվում միայն նրանք, որոնցից իրավախախտման զոհ դարձած անձը կարող է օգտվել ուղղակիորեն՝ առանց միջնորդավորման:

ՄԻԵԴ-ում ձևավորված պրակտիկայի համաձայն՝ սպառված են համարվում ներպետական պաշտպանության միայն այն միջոցները, որոնք գտնվում են անձի տրամադրության ներքո, բավարար են և վերաբերում են ենթադրյալ խախտումների: Բացի դրանից, սպառված միջոցը պետք է լինի այնպիսին, որի օգնությամբ անձը կարող է ենթադրյալ խախտման հետևանքով ստեղծված վիճակը շտկել անմիջականորեն, այլ ոչ թե՝ անուղղակի կերպով. նա պարտավոր չէ դիմել իրեն հասու պաշտպանության այլ միջոցների, որոնց արդյունավետությունը կասկածելի է: Օրինակ՝ եթե ներպետական իրավական համակարգը նախատեսում է իրավունքների ու ազատությունների խախտման վերաբերյալ սահմանադրական դատարան անհատական գանգատ ներկայացնելու հնարավորություն, ապա այդ մարմինը ճանաչվում է իրավական պաշտպանության անհրաժեշտ միջոցներից մեկը, իսկ եթե չի ճանաչվում, ապա անձը պարտավոր չէ, համենայն դեպս, դիմել նաև այդ մարմնին:

Առանձին դեպքերում ՄԻԵԴ-ն օմբուդսմենի ինստիտուտը մարդու իրավունքների պաշտպանության գործում չի ճանաչել որպես իրավական պաշտպանության միջոց դրա նվազ արդյունավետության պատճառով:

ՄԻԵԴ-ն իրավական պաշտպանության

ներպետական միջոցի արդյունավետության հարցը քննության է առնում նաև այն հանձնարարականների տեսանկյունից, որոնք դիմումատուին տվել է նրա փաստաբանը: Այստեղ գործում է այն կանխադրույթը, որ տուժողը պետք է օգտվի իրավաբանական պատշաճ գիտելիքներ ունեցող անձի խորհրդատվությունից: Եթե փաստաբանը համոզված և միանշանակ հայտարարում է, որ պաշտպանության կոնկրետ միջոցի օգտագործումը չունի հաջողության հասնելու ոչ մի հնարավորություն, ապա դիմումատուն կարող է չդիմել այդ միջոցին: Սակայն, եթե իրավախորհրդատուն պաշտպանության տվյալ միջոցի ընտրության վերաբերյալ իր կարծիքը կառուցի կասկածանքի վրա, ապա դիմումատուն պարտավոր է հետևել իրավական պաշտպանության բոլոր ներպետական միջոցներն սպառելու պահանջին⁵:

ՄԻԵԴ-ի պրակտիկան սովորաբար պահանջում է դիմումատուից դատական գործընթացների շրջանակներում սպառել երկրի ներսում բոլոր իրավասու մարմիններին դիմելու հնարավորությունը: Հիմնականում խոսքը գնում է եռաստիճան համակարգի մասին՝ առաջին ատյանի դատարան, վերաքննիչ դատարան (երկրորդ աստիճան) և, վերջապես, վճռաբեկ դատարան (երրորդ աստիճան): Բնականաբար, կախված այս կամ այն պետության դատաիրավական համակարգի առանձնահատկություններից, օրենսդրորեն ամրագրված կարգերից, որոշումների բողոքարկման ընթացակարգից, գործերի բնույթից ու հանգամանքներից, դատական մարմինների քանակից և նրանց առարկայական ընդդատությունից, պարտադիր դատական ատյանների քանակը կարող է տարբեր լինել:

Ինչպես գիտենք Հայաստանի Հանրապետության դատական համակարգը եռաստիճան է: Սակայն օրենքը թույլ է տալիս նաև մասնագիտացված դատարանների ստեղծումը, ինչպիսին, մեր կարծիքով, կարող է դիտվել Ֆինանսական համակարգի հաշտարարի ինստիտուտը, որը քննում է հաճախորդի կողմից Ֆինանսական կազմակերպությունների դեմ բերված բողոքները՝ կապված նման կազմակերպության կողմից մատուցվող ծառայություններ

⁵ Տե՛ս Վ. Հովհաննիսյան, «Մարդու իրավունքների Եվրոպական դատարան, գործունեության առանձնահատկությունները, վճիռների իրավական բնույթը և գանգատների ներկայացման կարգը», Երևան 2002թ., 42-43 էջեր:

րի հետ և որոնք պարունակում են տասը միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջ: Նման մասնագիտացված դատարան կարող է համարվել նաև Առևտրային արբիտրաժը, որը քննում է առևտրային բնույթի բոլոր վեճերը, որոնց վերաբերյալ կողմերն եկել են համաձայնության դիմել ոչ թե ընդհանուր իրավասության դատարան, այլ՝ արբիտրաժ: «Առևտրային» հասկացությունը ներառում է առևտրային բնույթի բոլոր հարաբերությունները՝ ինչպես պայմանագրային, այնպես էլ՝ ոչ պայմանագրային:

Մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության ներազգային դատական ատյանների ամբողջական սպառումը չպետք է հանգի զուտ դրանց ըստ հերթականության դիմելուն, այլև ենթադրում է համապատասխան ընթացակարգերի որոշակի որակի ապահովում: Այսպես օրինակ՝ եթե դիմումատուն վճռաբեկ դատարանի կողմից իր գործի քննության ընթացքում ինքնակամ հրաժարվել է փաստաբանի մասնակցությունից, ինչն անդրադարձել է գործի բացասական ելքի վրա, ապա ՄԻԵԴ-ը կարող է համարել, որ ներազգային իրավական պաշտպանության միջոցները սպառված չեն: Այլ խոսքերով՝ Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության ներազգային մարմինների սպառումը ենթադրում է ակտիվ և համապատասխան որակավորմամբ կողմերի մասնակցություն դատական գործընթացին, այլ ոչ թե պասիվ սպասումներ, թե դատարաններն իրենք կվերականգնեն խախտված իրավունքներն ու ազատությունները:

Նախադեպային իրավունքին համապատասխան՝ դիմումատուն կարող է չկատարել իրավական պաշտպանության բոլոր ներպետական միջոցներն սպառելու մասին պահանջը միայն այն դեպքում, երբ հիմնավորի, որ պատշաճ արդյունավետ միջոցներ գոյություն չունեն: Սակայն հարկ է նկատել, որ դրա ապացուցումն այնքան էլ դյուրին չէ: Դիմումատուն ներպետական պաշտպանության որևէ միջոց անարդյունավետ համարելու և այն չօգտագործելու համար պետք է ունենա բավականին ծանրակշիռ փաստարկներ:

Բացի դրանից, ՄԻԵԴ-ը հաշվի է առնում այնպիսի առանձնահատուկ հանգամանքներ, ինչպիսիք են ներպետական պաշտպանության որևէ միջոցի արդյունավետության վերաբերյալ կասկածը, դիմումատուի կողմից պաշտպանության որևէ այլ միջոցի առկայության մասին իրազեկ լինելը, անվճար իրավաբանական օգնության բացակայությունը, փաստաբանի տված սխալ հանձնարարականները: Յուրաքանչյուր կոնկրետ գործի առանձնահատկությունից ելնելով՝ ՄԻԵԴ-ը որոշում է, թե արդյոք այդ հանգամանքներն իր համար բավականին համոզիչ են, որպեսզի դիմումատուին ազատեն իրավական պաշտպանության բոլոր ներպետական միջոցներն օգտագործելու պարտավորությունից:

Պետք է նկատի ունենալ, որ գանգատն առնչվում է իրավական պաշտպանության ներպետական միջոցներն սպառված չեն, միայն ժամանակավոր խոչընդոտ է: ՄԻԵԴ-ը կարող է կրկին քննության առնել այդ նույն գանգատը, եթե հետագայում՝ դիմումատուի կողմից իրավական պաշտպանության բոլոր ներպետական միջոցներն սպառելուց հետո գանգատը մեկ անգամ ևս ներկայացվի ՄԻԵԴ:

Հատուկ ուշադրության է արժանի այն պայմանը, որի համաձայն ՄԻԵԴ-ը կարող է գործը քննության ընդունել միայն վերջնական որոշման կայացման օրվանից հետո վեց ամսվա ընթացքում: Գանգատի ընդունելիության այս պայմանը բավականին խիստ է, քանի որ ՄԻԵԴ-ը որևէ հիմքով, նույնիսկ ամենահարգելի, իրավունք չունի վերականգնելու բաց թողնված վեցամսյա ժամկետը:

«Վերջնական որոշման» չափանիշն անմիջականորեն կապված է «իրավական պաշտպանության բոլոր ներպետական միջոցներն սպառելու» չափանիշի հետ: Կարելի է խոսել վերջնական որոշման մասին միայն այն դեպքում, երբ անձը ներպետական իրավական համակարգի շրջանակներում սպառել է իրավական պաշտպանության բոլոր միջոցները:

Եվրոպական Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված դիմումի ներկայացման վեցամսյա ժամկետը սկսում է հաշվարկվել սկսած վերջնական որոշման կայացման պահից: ՄԻԵԴ-ի կանոնակարգի 47-րդ

կանոնի 5-րդ կետի համաձայն՝ զանգատի ներկայացման ամսաթիվ է համարվում դիմումատուի առաջին հաղորդագրության ամսաթիվը, որում թեև համառոտ, բայց շարադրված է զանգատի առարկան: Ամսաթիվը, որից սկսվում է ժամանակի հաշվարկը (dies a quo) ոչ միայն այն ամսաթիվն է, երբ ընդունվել է ներպետական որոշումը, այլ նաև այն, թե երբ է դիմումատուն տեղեկացել այդ որոշման մասին և արդյունքում զանգատ ներկայացրել ՄԻԵԴ: Եթե որոշումը կայացվել է դռնբաց դատական նիստում, որին դիմումատուն մասնակցել է, ապա դրա կատարման ամսաթիվը ներպետական մարմինների կողմից վերջնական որոշման կայացման պահն է: Իսկ եթե որոշումը չի հրապարակվել դռնբաց նիստում, վերջնական որոշման կայացման ամսաթիվ է համարվում այդ որոշման հայտարարման ամսաթիվը:

Այս դեպքում հարց կարող է առաջանալ, թե ո՞ր պահից պետք է հաշվարկել վեցամսյա ժամկետն ազգային դատարանի որոշման հրապարակման, թե՞ այդ որոշման պատճենը դիմումատուին հանձնելու պահից: ՄԻԵԴ-ը ելակետային է համարում ազգային դատարանի որոշման պատճենը դիմումատուին հանձնելու պահը:

ՄԻԵԴ-ը հաշվի է առնում նաև այն ժամանակահատվածը, որն անհրաժեշտ է որոշման պատճենը դիմումատուին հանձնելու համար, քանի որ բոլոր պետություններում, մասնավորապես՝ մեծ տարածք ունեցող պետություններում, հաճախ են պատահում թղթերի առաքման ուշացման դեպքեր՝ կապված հեռավոր տարածությունների, փոստային ծառայության աշխատանքի թերությունների կամ օրենսդրական անկատարության հետ: Այսպես օրինակ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241³-րդ հոդվածը սահմանում է, որ. «Վճռաբեկ դատարանի որոշումը պատշաճ ձևով ուղարկվում է բողոք բերած անձին, գործին մասնակցող անձանց և համապատասխան դատարան՝ այն հրապարակելու օրվանից ողջամիտ ժամկետում»: Մեր կարծիքով, տվյալ դեպքում «ողջամիտ ժամկետ» եզրույթի կիրառումն այնքան էլ արդարացված չէ, և օրենսդիրը պետք է կիրա-

ներ միասնական մոտեցում՝ առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ ատյանների համար նախատեսելով միանման ժամկետ, այսինքն՝ վճռի օրինակը հրապարակման կամ հաջորդ օրը պատվիրված նամակով ուղարկվեր դատական նիստին չներկայացած կողմին կամ կողմերին:

ՄԻԵԴ-ը գործն ըստ էության քննելու համար սահմանափակված չէ ժամկետներով: Ինչպես ցույց է տալիս ՄԻԵԴ-ի բազմամյա փորձը, բողոքի չընդունման մասին որոշումը կայացվում է մեկ տարվա ընթացքում, իսկ բողոքներն ըստ էության քննվում են միջինը չորսից հինգ տարվա ընթացքում: Մեր կարծիքով, նման ժամկետները ողջամիտ չեն արդարացի դատավարության իրականացման համար:

Որոշ դեպքերում (օրինակ՝ դիմումատուի ծանր հիվանդության, զառամյալ տարիք ունենալու և այլ դեպքերում) ՄԻԵԴ-ը ձգտում է հնարավորինս կրճատել բողոքների ըստ էության քննության ժամկետները: Այսպես օրինակ՝ «Պրետտին ընդդեմ Միացյալ Թագավորության»⁶ գործով որոշումը կայացվել է 4 ամսվա ընթացքում: Դիմումատուն տառապում էր ծանր, արագ զարգացող պարալիչով, իսկ նրա բողոքը վերաբերում էր էֆթանազիայի կիրառմանը: ՄԻԵԴ-ը վերջնական որոշումն ընդունել է դիմումատուի մահվանից 2 շաբաթ առաջ, որում ասվում էր. մարդու կյանքի իրավունքը երաշխավորող Եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածը չի կարող մեկնաբանվել որպես օգնության տրամադրում ինքնակամ կյանքից հեռանալիս:

Որպիսի բողոքն ընդունվի ՄԻԵԴ-ի կողմից այն պետք է համապատասխանի ևս մի քանի ֆորմալ պահանջների, որոնք նկարագրված են Եվրոպական կոնվենցիայում և ՄԻԵԴ-ի Կանոնակարգում: Մասնավորապես՝ դիմումատուն պարտավոր է ժամանակին պատասխանել ՄԻԵԴ-ի Քարտուղարության կողմից ուղարկված հարցումներին, մշտապես հաղորդի ճշմարիտ տեղեկություններ ներպետական դատական և իրավապահ մարմիններում իր գործի տեղաշարժի մասին: ՄԻԵԴ-ը չի քննում անանուն բողոքներ, դիմումներ, որոնք ներկայացվել են բողոք բերելու իրավունքի չարաշահմամբ:

⁶ Տե՛ս www.europecourt.eu, “Претти против Соединенного Королевства”

Դիմումատուներն իրենց բողոքներում պետք է կոռեկտ լինեն, թույլ չտան վիրավորական արտահայտություններ պետության, պաշտոնատար անձանց, քաղաքացիների, կազմակերպությունների հասցեին: Այս պահանջների չկատարումը կարող է հանգեցնել բողոքն անընդունելի ճանաչելուն և գործը դատարանի օրակարգից հանելուն⁷:

Եվրոպական կոնվենցիայի 35-րդ հոդվածում նախատեսված գանգատի ընդունելիության այն պայմանը, որի համաձայն ՄԻԵԴ-ը քննության չի ընդունում գանգատը, եթե այն արդեն իսկ հանձնվել է միջազգային քննության կամ կարգավորման այլ ընթացակարգի և չի բովանդակում գործին առնչվող նոր տեղեկություններ, ենթադրում է, որ անձը սկզբնապես պետք է գանգատ ներկայացնի ՄԻԵԴ, իսկ այնտեղ քննության արդյունքներից բավարարված չլինելու դեպքում նոր միայն՝ այլ միջազգային մարմին:

ՄԻԵԴ-ն անընդունելի է համարում ցանկացած անհատական գանգատ, եթե գտնում է, որ այն անհամատեղելի է Եվրոպական կոնվենցիայի և դրան կից Արձանագրությունների դրույթների հետ: Այն բոլոր դեպքերում, երբ գանգատը մերժելու հիմք կա, այն կարող է նաև հայտարարվել անհամատեղելի Եվրոպական կոնվենցիայի և դրան կից Արձանագրությունների դրույթների հետ այն հիմնավորմամբ, որ դրանք չեն համապատասխանում գանգատի ընդունելիության պայմաններին:

ՄԻԵԴ-ը կարող է գանգատը համարել անհամատեղելի Եվրոպական կոնվենցիայի դրույթների հետ այն դեպքում, երբ դիմումատուն պնդում է, որ Եվրոպական կոնվենցիայով և դրան կից Արձանագրություններով երաշխավորվող իր իրավունքները խախտվել են, մինչդեռ իրականում սահմանափակվել են Եվրոպական կոնվենցիայով նախատեսված սահմանափակումների կիրառման շրջանակներում⁸:

Որպես կանոն գանգատը մերժելու համար ՄԻԵԴ-ը հղում է անում գանգատի ընդունելիության պայմաններից որևէ մեկի չպահպանմանը, սակայն եթե մերժելու համար հիմ-

նավոր պատճառ չկա, բայց ՄԻԵԴ-ը, այնուամենայնիվ, գտնում է, որ գանգատի մերժումն արդարացված է, գանգատը կարող է համարվել անհամատեղելի Եվրոպական կոնվենցիայի և դրան կից Արձանագրությունների դրույթների հետ:

Եվրոպական կոնվենցիայի 34 և 35 հոդվածների ու ՄԻԵԴ-ի Կանոնակարգի 45 և 47 հոդվածների համաձայն բողոքը պետք է ներկայացվի ՄԻԵԴ-ի կողմից հատուկ մշակված ձևաթղթի օրինակով: Բողոքի տիպային օրինակը կամ ձևաթուղթը պաշտոնապես հաստատված իրավական փաստաթուղթ է, որի ոչ պատշաճ լրացումը կարող է հանգեցնել բողոքի մուտքագրման մերժման: Բողոքում պետք է մանրամասն նշվեն գործի բոլոր փաստական հանգամանքները ըստ ժամանակագրության, դատական ատյանների և այլ իրավապահ մարմինների դիմելու հերթականության ամբողջական նկարագրմամբ, ինչպես նաև հստակ մատնանշելով, թե որ կոնվենցիոն իրավունքներն են խախտվել՝ հղում անելով Եվրոպական կոնվենցիայի կոնկրետ դրույթին: Դիմումին պետք է կցվեն գործին առնչվող բոլոր փաստաթղթերի ու որոշումների, վճիռների պատճենները: Բողոքը պետք է բովանդակի հղումներ Եվրոպական կոնվենցիային և նրան կից Արձանագրություններին, ինչպես նաև հստակ ու առանց տարակարծությունների արտահայտի դիմումատուի պահանջը, նրա կողմից ներկայացվող բողոքի իրավաչափության հիմքերը, փաստարկներն ու ապացույցները, ենթադրվող փոխհատուցման գումարի հստակ հաշվարկը՝ համաձայն Եվրոպական կոնվենցիայի 41-րդ հոդվածի:

Դիմումում անհրաժեշտ է պարտադիր հղում անել Եվրոպական կոնվենցիայի այն հոդվածներին, որոնք, բողոքի հեղինակի կարծիքով, խախտվել են, ինչպես նաև պետք է նշել, թե ինչ պահանջներով է դիմումատուն դիմում ներկայացրել ներպետական մարմիններին, և բողոքի հեղինակը, դիմելով ՄԻԵԴ-ին, նրանից ինչ է ակնկալում: Բացի այդ, դիմումում պետք է նշել, թե տվյալ հարցով ներկայացվել է արդյոք

⁷ Տե՛ս “Международная защита прав человека с использованием некоторых международно-правовых механизмов”, М., 2001, с. 25.

⁸ Տե՛ս Վ. Հովհաննիսյան, «Մարդու իրավունքների Եվրոպական դատարան. Գործունեության առանձնահատկությունները, վճիռների իրավաբանական բնույթը և գանգատների ներկայացման կարգը», Երևան 2002թ., 49-50 էջեր:

բողոք որևէ այլ միջազգային կազմակերպության կամ մարմնի: Եթե այո, ապա անհրաժեշտ է ներկայացնել տվյալ միջազգային ատյանի ընդունած որոշումը:

Հարկ է նշել, որ դիմումին պետք է կցել միայն որոշումների պատճենները, այլ ոչ թե՛ փաստաթղթերի բնօրինակները, քանի որ ՄԻԵԴ ուղարկված փաստաթղթերը դիմումի հեղինակին չեն վերադարձվում:

Բողոքի ներկայացման համար որևէ տուրք կամ վճար չի գանձվում: Եթե դիմումատուն իր նյութական միջոցների սղության պատճառով չի կարող օգտվել համապատասխան իրավաբանական օգնությունից, ապա ՄԻԵԴ-ը գործի քննության որոշակի փուլում կարող է նրան տրամադրել անհրաժեշտ ֆինանսական աջակ-

ցություն: Նման աջակության համար անհրաժեշտ է որպիսի դիմումատուն ՄԻԵԴ-ին ներկայացնի համապատասխան փաստաթղթեր, մասնավորապես՝ իր եկամուտների ու խնայողությունների մասին տեղեկանք: Եթե տվյալ գործով քննություն է ընթանում, ապա ՄԻԵԴ-ը կարող է վճարել նաև Ստրասբուրգ ժամանած դիմումատուի ծախսերը: Այս բոլոր միջոցառումները նպատակ են հետապնդում եվրոպական արդարադատությունը հասանելի դարձնելու նաև նյութապես անապահով անձանց համար և դրանով իսկ կանխել սոցիալական խտրականության հնարավորությունը մարդու իրավունքների խախտումների ենթադրյալ զուհերի նկատմամբ:



ЛИЛИТ ЕРЕМЯН

Соискатель РАУ

ПРИНЦИП ЗАЩИТЫ ПРИРОДНОЙ СРЕДЫ В РАМКАХ МЕЖДУНАРОДНОГО ГУМАНИТАРНОГО ПРАВА

Вопросы охраны окружающей природной среды как в мирное время, так и во время военных конфликтов на международном уровне стали объектом регулирования сравнительно недавно. Принципы и положения экологического права (права окружающей среды), как отдельной подотрасли международного права разрабатываются и изменяются в результате того, что государства приобретают новую информацию об окружающей природной среде и необходимости ее защиты.¹ Так, в 1972 году была принята Стокгольмская Декларация Принципов, содержащая 26 принципов, направленных на обеспечение охраны и улучшения качества окружающей среды.² Однако Декларация устанавливает положения общего характера, которые не имеют специальной цели регулирования вопросов охраны окружающей среды во время военных действий. В то же время в Стокгольмской Декларации устанавливается, что “[ч]еловек и окружающая его среда должны быть избавлены от последствий применения ядерного и других видов оружия массового уничтожения”, подчеркивая тем самым важность осуществления мер со стороны государств для уничтожения таких видов оружия.³ Тем не менее, неоспоримым является тот факт, что военные действия практически всегда имеют разрушительные последствия, представляя собой реальную угрозу не

только для человека, но и для окружающей природной среды и, следовательно, вопросы охраны окружающей природной среды приобретают особую актуальность и значимость, в частности, в контексте вооруженных конфликтов. Во время военных действий ущерб окружающей природной среде может быть причинен непосредственно и преднамеренно, либо ущерб может быть случайным, либо косвенным результатом военного нападения на законный военный объект.

На протяжении долгого времени войны и военные действия причиняли огромный ущерб окружающей среде,⁴ однако, международное сообщество начало серьезно заниматься разработкой правовой базы по вопросу защиты окружающей природной среды в контексте международного гуманитарного права только во второй половине XX века – после вооруженного конфликта во Вьетнаме, во время которого США, в частности, на территории Южного Вьетнама использовала разные средства и методы ведения войны, причиняющие большой вред, в том числе окружающей среде.⁵ В результате специальные гуманитарно-правовые регуляции защиты окружающей природной среды нашли свое отражение в двух международных договорах, принятых практически одновременно: в Конвенции о запрещении военного или любого

¹ Orlando Ruiz-Roque, “The Laws of Armed Conflict and Environmental Protection: Striking a Balance” DTIC Selected, Aug 1995, p. 1

² Декларация Конференции Организации Объединенных Наций по проблемам окружающей человека среды, Стокгольм, 1972г. (Стокгольмская Декларация 1972 г.) (см. на: http://www.un.org/ru/documents/decl_conv/declarations/declarathenv.shtml)

³ Стокгольмская Декларация 1972 г., принцип 26.

⁴ Например, большой ущерб окружающей среде был причинен в результате нападений на Румынские нефтяные месторождения и объекты со стороны союзных войск во время Первой и Второй мировых войн, или разрушение Платин Хуаюанкоы в Китае в 1938 году. См. соответственно: Michael N. Schmitt, “War and the Environment: Fault lines in the Prescriptive Landscape” (Archiv des Völkerrechts, 37. Bd., I.H. 1999), 25, p. 25; William Boothby, *Weapons and the Law of Armed Conflict*, (OSO 2009), p. 87

⁵ Для более подробного исследования действий США и их последствий на территории Вьетнама см. Arthur H. Westing, “Environmental Consequences of the Second Indochina War: A Case Study” (Ambio, Vol. 4, No. 5/6, War and Environment: A Special Issue 1975), pp. 216-222

иною враждебного использования средств воздействия на природную среду (далее в тексте – Конвенция En-Mod)⁶ и в определенных статьях Дополнительного Протокола I от 1977 года (далее в тексте – ДП I).⁷

Анализ положений соотносимых к данной проблематике договоров позволяет утверждать, что, в целом, положения, касающиеся охраны окружающей природной среды во время вооруженных конфликтов можно условно подразделить на две категории:

1) положения, которые непосредственно предусматривают гуманитарно-правовую защиту окружающей природной среды, и

2) положения, косвенно относящиеся и применимые к защите окружающей природной среды.

К первой категории относятся положения Конвенции En-Mod, статьи 35.3 и 55 ДП I, а также статья 2(4) Протокола к Конвенции по конкретным видам оружия 1980 года о запрещении или ограничении применения зажигательного оружия, в соответствии с которой устанавливается запрет на нападения на леса или другие виды растительного покрова с применением зажигательного оружия, кроме случаев, “когда такие природные элементы используются для того, чтобы укрыть, скрыть или замаскировать комбатантов или другие военные объекты, или когда они сами являются военными объектами.”

Косвенно относимыми регуляциями, направленными на защиту окружающей природной среды во время вооруженного конфликта можно считать, например, некоторые регуляции Гаагских положений 1899/1907, направленные на ограничение допустимых средств и методов ведения войны и защиту гражданских объектов (оговорка Мартенса в Преамбуле Гаагской Конвенции IV, ст. 22 и др.); Протокол 1925 года о запрещении применения на войне удушливых, ядовитых или других подобных газов и бактериологических средств; положения ЖК и ДП I,

которые закрепляющие основополагающие принципы и правила МГП в контексте защиты гражданских объектов; Конвенция 1972 года о запрещении разработки, производства и накопления запасов бактериологического (биологического) и токсинного оружия и об их уничтожении; Конвенция о запрещении или ограничении применения конкретных видов обычного оружия, которые могут считаться наносящими чрезмерные повреждения или имеющими неизбирательное действие 1980 года (Конвенция по конкретным видам обычного оружия или КВОО); Конвенция 1993 года о запрещении разработки, производства, накопления и применения химического оружия и о его уничтожении и другие.

В рамках данной работы мы, в основном, сконцентрируем внимание на анализе положений, непосредственно регламентирующих необходимость обеспечения защиты окружающей природной среды во время вооруженных конфликтов, в частности, положений Конвенции En-Mod и ст. 35(3) и 55 ДП I 1977.

Конвенция En-Mod и ДП I, хотя и разрабатывались параллельно и были подписаны государствами практически одновременно (в 1977-ом году), тем не менее, были разработаны для достижения разных целей и, следовательно, в содержательном смысле один договор не повторяет другого.

В соответствии со статьей 1 Конвенции En-Mod государства-участники Конвенции обязуются “не прибегать к военному или любому иному враждебному использованию средств воздействия на природную среду, которые имеют обширные, долгосрочные или серьезные последствия, в качестве способов разрушения, нанесения ущерба или причинения вреда любому другому государству-участнику.” При этом, Конвенция не ограничивает использование средств воздействия на природную среду в мирных целях.⁸

Что касается норм ДП I, непосредственно

⁶ Конвенция En-Mod 1977 года, рекомендована резолюцией 31/72 Генеральной Ассамблеи от 10 декабря 1976 года. Число государств-участников Конвенции – 76; число государств, подписавших Конвенцию – 16 (<http://www.icrc.org/ihl/INTRO/460>)

⁷ ДП I, ст. 35.3 и ст. 55. Число государств-участников ДП I – 173, число государств, подписавших ДП I – 3 (<http://www.icrc.org/applic/ihl/ihl.nsf/Treaty.xsp?documentId=D9E6B6264D7723C3C12563CD002D6CE4&action=openDocument>)

⁸ Конвенция En-Mod, ст. 3.1

предусматривающих защиту окружающей природной среды, статья 35 (3) устанавливает, что “[з]апрещается применять методы или средства ведения военных действий, которые имеют своей целью причинить или, как можно ожидать, причинят обширный, долговременный и серьезный ущерб природной среде.” Одновременно “[п]ри ведении военных действий проявляется забота о защите природной среды от обширного, долговременного и серьезного ущерба. Такая защита включает запрещение использования методов или средств ведения войны, которые имеют целью причинить или, как можно ожидать, причинят такой ущерб природной среде и, тем самым, нанесут ущерб здоровью или выживанию населения” (статья 55 (1) ДП I).

Для содержательного исследования регуляций МГП по защите окружающей природной среды, на наш взгляд, необходимо провести сравнительно-правовой анализ между Конвенцией En-Mod и соответствующими положениями ДП I.

Основными отличиями между положениями Конвенции En-Mod и ДП I, как нам представляется, являются:

1) Временная (темпоральная) сфера применения.

Положения Конвенции En-Mod действуют как в мирное время, так и во время вооруженных конфликтов (МВК или НМВК), а положения ДП I действуют только во время международных вооруженных конфликтов.

2) Территориальная сфера применения.

Положения Конвенции En-Mod устанавливают запрет на военное или иное враждебное использование средств воздействия на природную среду, как способов разрушения, нанесения ущерба или причинения вреда любому другому государству-участнику Конвенции. Для осуществления требований Конвенции необходимо, чтобы соответствующий ущерб (вред) был нанесен хотя бы одному другому государству-участнику Конвенции. Положения же ДП I без указаний каких-либо территориальных ограничений или условий и не проводя различия

между территориями сторон в конфликте или третьих государств, устанавливают общий запрет на применение средств и методов войны, которые направлены на причинение или, как можно ожидать, причинят обширный, долговременный и серьезный ущерб окружающей природной среде.

3) Предмет регулирования.

Конвенция En-Mod устанавливает запрет только на один вид средств ведения войны, а именно, на средства воздействия на природную среду. Средства воздействия на природную среду в Конвенции определяются как любые средства “для изменения путем преднамеренного управления природными процессами — динамики, состава или структуры Земли, включая ее биоту, литосферу, гидросферу и атмосферу, или космического пространства.”⁹

В данном контексте ДП I имеет более широкий спектр действия, регламентируя защиту окружающей природной среды от вреда, нанесенного любым средством или методом ведения войны.

Как утверждают некоторые авторы, Конвенция En-Mod направлена на предотвращение манипуляции природной средой, устанавливая запрет на использование окружающей природной среды в качестве оружия (природная среда - оружие), а соответствующие положения ДП I имеет непосредственной целью - защитить окружающую природную среду от разрушительных последствий, причиненных любым средством или методом ведения войны (природная среда - жертва).¹⁰

4) Степень регламентируемой защиты.

Конвенция En-Mod устанавливает защиту от преднамеренного воздействия на окружающую природную среду (статья 2), тогда как ДП I регламентирует защиту и от причинения непреднамеренного и случайного вреда (ущерба) окружающей природной среде, причинение которого, однако, можно было бы прогнозировать (фраза “как можно ожидать” в статье 35(3)).

5) Правовая пороговая величина вреда (ущерба) окружающей природной среде

⁹ Конвенция En-Mod, ст. 2

¹⁰ Yoram Dinstein, *The Conduct of Hostilities under the Law of International Armed Conflict* (2010 CUP, 2nd edn.), p. 210; A.P.V. Rogers, *Law on the Battlefield* (2nd edn. MUP 2004) 169-170

Ни Конвенция En-Mod, ни ДП I не предусматривают абсолютную защиту окружающей природной среды от враждебных нападений, и существует определенный уровень ущерба, причинение которого неизбежно во время вооруженных конфликтов.¹¹ На первый взгляд, кажется, что оба договора предусматривают одинаковый правовой пороговый уровень вреда, причиняемого природной среде. В соответствующих положениях обоих договоров употребляются практически одинаковые термины “обширный”, “долговременный”/“долгосрочный”, а также термин “серьезный” при определении запрещенного уровня ущерба окружающей природной среде.¹² Однако такое предположение не соответствует действительности и предусмотренный Конвенцией En-Mod нижний предел причиняемого вреда природной среде, необходимый для применения договорных положений, отличается от предусмотренного ДП I по двум параметрам:

а) В Конвенции En-Mod эти три термина перечислены альтернативно, с применением логической дизъюнкции (“обширный, долгосрочный *или* серьезный”). Таким образом, для регламентации нарушения требований Конвенции достаточно наличие хотя бы одного из указанных последствий как воздействие на природную среду. При этом Конвенция не запрещает экологические изменения, которые причиняют обширные, долгосрочные или серьезные повреждения *per se*, а только в той мере, в которой они используются с целью причинить вред другому государству.¹³

ДП I же использует эти три термина кумулятивно, с применением правил логической конъюнкции (“обширный, долговременный *и* серьезный”). Для того, чтобы деяние квалифицировалось как нарушение положений ДП I необхо-

димо, чтобы применяемые средства или методы ведения войны имели целью причинить или, как можно ожидать, могут причинить ущерб природной среде, являющийся одновременно обширным, долговременным и серьезным.¹⁴

б) Считаю необходимым отметить, что хотя в соответствующих положениях обоих инструментов используются практически идентичные три термина,¹⁵ тем не менее, смысл, который им придается, и их интерпретация отличаются друг от друга. Конвенция En-Mod не содержит определений этих терминов, однако, они определяются в “Отчете Комитета по разоружению” 1976 года, где, в частности, термин “обширный” интерпретируется в качестве территории, охватывающей как минимум несколько сотен квадратных километров; термин “долгосрочный” – как период времени в несколько месяцев или приблизительно один сезон, а термин “серьезный” интерпретируется как причиняющий серьезные или существенные нарушения или вред жизни человека, природным и экономическим ресурсам или другим активам.¹⁶ ДП I, как и Конвенция En-Mod, не содержит определений этих терминов. В комментариях к ДП I также не содержится четких определений указанных понятий, за исключением термина “долговременный” интерпретируемый как “несколько десятилетий”. В комментариях к ДП I четко указывается, что соответствующие положения двух рассмотренных международных договоров не повторяют друг друга и не противоречат друг другу.¹⁷ Интерпретация указанных выше терминов в контексте Конвенции En-Mod применима исключительно к данной Конвенции и не предназначена для толкования этих или подобных им терминов, употребляемых в каком-либо другом международном договоре.¹⁸

Анализ вышеизложенного приводит нас к

¹¹ Dinstein, *supra n. 10*, p. 210; Karen Hulme, “Nature in War: Towards More Comprehensive Protection of the Environment in Armed Conflict” Speech (January 2014) at: <http://vimeo.com/86885861>

¹² Конвенция En-Mod ст. 1, ДП I, ст. 35 (3) и 55

¹³ Yves Sandoz et al, *Commentary to the Additional Protocol I of the Geneva Conventions* (1987), para. 1452

¹⁴ Commentaries to AP I, *supra n. 13*, para.1457, Dinstein, *supra n. 10*, p.210

¹⁵ За небольшим исключением: в ст. 1 Конвенции En-Mod используется термин “долгосрочный”, а в ст. 35 (3) и 55 используется термин “долговременный”.

¹⁶ Report of the Conference of the Committee on Disarmament: Volume I, GA official records: 31st session supplement no. 27 (a/31/27) (UN New York, 1976) p. 91

¹⁷ Commentaries to AP I, *supra n. 13*, paras 1450-54, 2136

¹⁸ Report of the Conference of the Committee on Disarmament, *supra n. 16*, p. 91

выводу о том, что ввиду используемых формулировок соответствующих положений в двух рассмотренных договорах, становится проблематичным применение принципа защиты природной среды во время вооруженного конфликта.

С одной стороны, в контексте Конвенции En-Mod, представляется сложным доказать умысел и цель государства, заключающееся в преднамеренном управлении природными процессами для воздействия на природную среду в качестве способов разрушения или нанесения ущерба другому государству-участнику Конвенции. С другой стороны, во-первых, в контексте ДП I используемые термины не определены и, следовательно, непонятно - какой ущерб окружающей природной среде запрещается ДП I, и во-вторых, кумулятивное перечисление этих терминов, на наш взгляд, в любом случае, устанавливает слишком высокий минимальный уровень ущерба окружающей природной среде, только при котором можно говорить о нарушении либо потенциальном нарушении требований ДП I. С точки зрения обзора правомерности выбора и применения средств ведения войны представляется практически невозможным установление с достаточной уверенностью вероятности того, что то или иное средство ведения войны нанесет "обширный, долговременный (десятилетия) и серьезный" вред окружающей природной среде.¹⁹

Таким образом, следует отметить, что положения ДП I, рассмотренные выше, имеют важное значение для защиты окружающей природной среды во время вооруженных конфликтов. Более того, положение, устанавливающее защиту окружающей природной среды, закреплено наряду с основополагающим принципом МГП (признанным нормой обычного права), в соответствии с которым, запрещается применение средств или методов войны, способных

причинить чрезмерные повреждения или излишние страдания (статья 35 ДП I).²⁰ В этом случае возникает вопрос: имеет ли принцип защиты природной среды от обширного, долговременного и серьезного вреда характер нормы обычного права? Согласно выводам исследования МККК положения о запрещении применения методов или средств ведения международных вооруженных конфликтов, имеющие цель причинить или, которые, как можно ожидать, причинят обширный, долговременный и серьезный ущерб природной среде, равно как и запрет на использование разрушений природной среды в качестве средства ведения международных вооруженных конфликтов, являются положениями обычного права.²¹ Однако, на наш взгляд, подобное утверждение является проблематичным. Международный обычай – это спонтанно сложившееся в международной практике правило поведения (определенная, единообразная и продолжительная практика), которое субъектами международного права признается юридически обязательным (*opinio juris*).²² В случае с рассматриваемой нормой, неоспоримым является факт, что регламентация защиты окружающей природной среды во время вооруженных конфликтов в рамках ДП I была в то время совершенно новой тенденцией.²³ При этом, официальная позиция таких государств, как США, Великобритания и Франция, заключается в отрицании того, что данная норма имеет характер обычного права. В свою очередь, Международный Суд ООН в Консультативном заключении по делу о ядерном оружии также косвенно отрицает обычно-правовой характер норм статей 35 (3) и 55 ДП I. Так, Суд, признавая значение указанных регуляций, констатировал, что положения статей 35 (3) и 55 вносят весомые ограничения в применении средств и методов войны для государств-участников ДП I.²⁴ Если

¹⁹ Michael N. Schmitt, "War and the Environment: Fault lines in the Prescriptive Landscape" (Archiv des Völkerrechts, 37. Bd., 1. H. 1999) 25, 43 and 47

²⁰ Jean-Marie Henckaerts and Louise Doswald-Beck, *Customary International Humanitarian Law*, Volume 1: Rules (2005 CUP) 237-244

²¹ *Ibid.*, стр. 151, правило 45.

²² Статут Международного Суда ООН, ст. 38. 1. b), Քոչարյան Վ. (խմբ.՝ Վ. Հովհաննիսյան), *Միջազգային իրավունք: Ստանդարտային ձեռնարկ*, (ԵՊՀ հրատ. 2002) էջեր 24-25

²³ Henckaerts and Doswald-Beck, *supra n. 20*, стр. 152; Dinstein, *supra n. 10*, p. 205.

²⁴ Advisory Opinion on the *Legality of the Threat or Use of Nuclear Weapons*, ICJ (1996) para. 31

бы Суд придерживался мнения о том, что указанные нормы имеют характер обычного права, то он регламентировал бы обязательность их применения всеми государствами, а не только государствами-участниками ДП I.²⁵ Среди квалифицированных специалистов по международному праву нет единого мнения по поводу обычно-правового характера применения статей 35 и 55 ДП I во время вооруженных конфликтов.²⁶

Все вышеуказанное позволяет нам прийти к выводу, что нормы, отраженные в статьях 35 (3) и 55 ДП I, по крайней мере, на сегодняшний день, скорее не являются нормами обычного права. Однако, очевидно, существует тенденция «кристаллизации» соответствующих норм в обычай в международном праве.

Что касается немеждународных правовых конфликтов, практически не оспаривается то обстоятельство, что запрет на применение методов или средств ведения войны, имеющие цель причинить или, которые, как можно ожидать, причинят обширный, долговременный и серьезный ущерб природной среде не является нормой обычного права.²⁷

Проблематичным и не совсем верным представляется также утверждение в Исследовании МККК относительно того, что запрет на использование разрушений природной среды в качестве средства ведения международных вооруженных конфликтов, считается положениями обычного права. Ведь формат “природная среда – оружие” присущ не ДП I, а Конвенции En-Mod и регулируется именно этой Конвенцией.²⁸

Таким образом, можно заключить, что положения ДП I о защите природной среды во время вооруженных конфликтов и положения En-Mod скорее, не являются нормами обычного права, будучи обязательными лишь для государств участников соответствующих междуна-

родных договоров. Одновременно, однозначно признается недопустимость “нападений на природную среду” в силу признания ее гражданским объектом. Следовательно, в контексте защиты природной среды применение принципа избирательности, имеющего обычно-правовой характер, как дополнительной гарантии, представляется нам неоспоримым.

Анализ некоторых положений национального законодательства РА по имплементации своих международно-правовых обязательств

Одним из основных направлений деятельности РА, как социально-правового государства, является экологическая функция, то есть функция по охране окружающей среды,²⁹ предусмотренная Конституцией РА в рамках статей 10, 33.2 и 48 (пункт 10). Так, в соответствии со статьей 10 Конституции РА государство обязано предпринять необходимые меры по обеспечению охраны и воспроизводства окружающей природной среды, а также рационального использования природных ресурсов.

Осуществление политики, которая направлена на обеспечение экологической безопасности нынешних и будущих поколений является одной из основных задач государства (статья 48 (10) Конституции РА).

В рамках национального законодательного регулирования ограничений средств и методов ведения военных действий следует уделить особое внимание охране окружающей природной среды. РА является участником целого ряда международных договоров, касающихся защиты окружающей природной среды,³⁰ из которых в контексте МГП особый интерес представляют, в частности, ДП I и Конвенция En-Mod, подробно рассмотренные выше. **Для реализации международных договоров требуется осуществление государством соответствующим**

²⁵ Венская Конвенция о Праве Международных Договоров (ООН 1969) ст. 38, Dinstein, *supra n. 10*, p. 206.

²⁶ Marco Roscini, “Protection of Natural Environment in Time of Armed Conflict” (2008) p. 8 (at: http://papers.ssrn.com/sol3/papers.cfm?abstract_id=1351888)

²⁷ Henckaerts and Doswald-Beck, *supra n. 20*, стр. 156-157.

Второй Дополнительный Протокол 1977 года к Женевским Конвенциям 1949 года не содержит положений аналогичных статьям 35 (3) и 55 ДП I.

²⁸ A.P.V. Rogers, *Law on the Battlefield* (2nd edn. MUP 2004) 167

²⁹ Իսկոյան Ա. (Խմբ. Գ. Հարությունյան, Ա. Վաղարշյան), Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ (Եր. «Իրավունք» 2010) էջեր 135-136

³⁰ Իսկոյան Ա., Բնապահպանական համաձայնագրեր, օրենքներ, ծրագրեր (Երևան 2004) էջեր 61-63

щих мер, направленных на обеспечение эффективного исполнения своих международных обязательств.³¹

УК РА косвенно регулирует защиту окружающей природной среды в рамках статьи 387 “Применение запрещенных средств и методов ведения военных действий” и непосредственно регулирует в рамках статьи 394 “Экоцид”.

Так частью 1-ой статьи 387 предусматривается уголовное наказание за применение запрещенных международным договором средств и методов войны в военных действиях. С этой точки зрения интересно отметить, что хотя данным положением непосредственно не устанавливается недопустимость применения средств или методов войны, которые могут причинить обширный, долговременный и серьезный ущерб природной среде, однако, указанная недопустимость вытекает из сопоставления формулировки данной статьи и статьи 35 (3) ДП I.

В уголовных кодексах ряда государств предусматривается более конкретное регулирование **с непосредственным установлением уголовной ответственности за причинение окружающей среде ущерба определенной степени и определенного характера в рамках вооруженных конфликтов.**³²

УК РА также предусматривает уголовную ответственность в виде лишения свободы на срок от 10 до 15 лет за “умышленное массовое уничтожение растительного или животного мира, отравление атмосферы, земли или водных ресурсов, а также совершение иных деяний, вызвавших экологическую катастрофу.”

УК РА закрепляет данную статью в рамках

главы о “Преступлениях против мира и безопасности человечества” ввиду того, что преступление направлено против экологической безопасности людей и зачастую может носить транснациональный характер. Следует отметить, что аналогичная статья содержится и в уголовных кодексах еще нескольких государств.³³

Если общее положение статьи 387 применимо в целях обеспечения защиты окружающей природной среды в контексте вооруженных конфликтов, то статья 394 “Экоцид” относится как к деяниям, совершенным в контексте вооруженного конфликта, так и к деяниям, совершенным вне контекста вооруженного конфликта. В тексте статьи 394 непосредственно закрепляется обязательность наличия умысла при совершении преступления. Так, экоцид может быть совершен как с прямым умыслом, так и с косвенным умыслом, когда лицо, совершающее преступление, сознает общественную опасность своего деяния, предвидит возможность наступления общественно-опасных последствий и не желает, но сознательно допускает их наступление.³⁴

При анализе статьи “Экоцид” следует также обратиться к понятию “экологическая катастрофа.” Данное понятие является оценочным. В экологическом энциклопедическом словаре “экологическая катастрофа” определяется как “резкое или кумулятивное обострение противоречий между природой и обществом, которое влечет за собой возникновение чрезвычайных ситуаций, грозящих дестабилизацией или разрушением природной и социальной систем и поэтому требующих незамедлительного реагирования...”³⁵ УК РА не устанавливает какого-либо определения

³¹ Վլադիմիր Հովհաննիսյան, *Միջազգային սայմանագրերի կնքման և կապարման րեսական և գործնական մի քանի հարցեր* (Երևան 2001) էջ 93

³² Например, Criminal Code of Spain, art. 610; Criminal Code of Croatia, art.158 (2); Criminal Code of Montenegro, art.428 (2); Criminal Code of Switzerland, art. 264 g. At: <http://www.legislationline.org/documents/section/criminal-codes>

Такой же подход наличествует в регуляциях Римского Статута, в соответствии со статьей 8 iv) которого военным преступлением считается “умышленное совершение нападения, когда известно, что такое нападение явится причиной ... обширного, долгосрочного и серьезного ущерба окружающей природной среде, который будет явно несоизмерим с конкретным и непосредственно ожидаемым общим военным превосходством”, см.: [http://www.un.org/ru/law/icc/rome_statute\(r\).pdf](http://www.un.org/ru/law/icc/rome_statute(r).pdf).

³³ См., например, УК РФ, ст. 358; УК Грузии, ст.409; Criminal Code of Moldova, art.136; Criminal Code of Ukraine, art.441

³⁴ Ս. Առաքելյան, Ա. Գաբրիելյան, Հ. Խաչիկյան, et al, Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս., Եր.: ԵՊՀ իրաւ., 2009, էջ 198; Комментарий к УК РФ, отв. ред. В.М. Лебедев (2008) комментарий к статье 358 УК РФ “Экоцид”, стр. 871

³⁵ Экологический энциклопедический словарь. - М.: Изд. Дом “Ноосфера”, (научно ред. Совет: В.И. Данилов – Данильян et al) 1999, стр. 752

или хотя бы критериев определения рассматриваемой категории. В качестве таких критериев могут быть, например,

- серьезное нарушение экологического баланса в природной среде, повлекшее уничтожение или резкое уменьшение числа определенных видов животных или растений,³⁶ или

- значительное разрушение, повреждение или утрата экосистемы на определенной территории, ставящее под реальную угрозу мирное использование данной территории,³⁷ или

- необратимое, обширное и серьезное негативное изменение (ущерб) экосистемы на значительной территории, которое как можно ожидать повлечет уничтожение либо значительное уменьшение числа каких-либо видов животных или растений, либо, которое, как можно ожидать, причинит ущерб здоровью или выживанию населения на данной территории.

В любом случае, нам представляется важным конкретизация того, какие именно последствия могут приравниваться к экоциду в рамках статьи 394 УК РА. В то же время представляется уместным комплексное определение понятия “экологическая катастрофа” в специальном рамочном законе РА “Об экологической политике”, необходимость и актуальность разработки и принятия которого были подчеркнуты правительством РА еще в 2011 году.³⁸

Из анализа УК РА можно также прийти к выводу, что уголовное законодательство Армении не регулирует положения, установленные Конвенцией En-Mod, а именно, в УК отсутствует соответствующая норма, устанавливающая ответственность за военное или любое иное враждебное использование средств воздействия на окружающую природную среду, “которые имеют обширные, долгосрочные или серьезные последствия, в качестве способов разрушения, нанесения ущерба или причинения вреда любому

другому государству-участнику” Конвенции En-Mod.³⁹ В то же время, как было подробно проанализировано выше формулировки положений Конвенции En-Mod и статьи 35 (3) ДП I принципиально разные и, следовательно, требуют применения отдельных мер по имплементации в рамках национального законодательства. Вышесказанное свидетельствует о том, что для эффективной имплементации международного обязательства РА, вытекающего из Конвенции En-Mod, на наш взгляд, необходимо установить отдельное положение в УК РА, предусматривающее ответственность за использование природной среды в качестве оружия.

Таким образом, с учетом вышесказанного, нам представляется важным обсуждение вопросов о:

- а) закреплению в рамках УК РА конкретного положения, устанавливающего ответственность за применение во время вооруженных конфликтов средств или методов ведения военных действий, “которые имеют своей целью причинить или, как можно ожидать, причинят обширный, долговременный и серьезный ущерб природной среде”;

- б) конкретизации критериев определения последствий, при наступлении которых деяние должно приравниваться к экоциду в рамках статьи 394 с тем, чтобы диспозиция статьи была более конкретной и измеряемой, а также комплексное определение понятия “экологическая катастрофа” в специальном рамочном законе РА “Об экологической политике”;

- в) предусмотрении уголовным кодексом РА ответственности за использование природной среды в качестве оружия, что способствовало бы эффективной имплементации международного обязательства РА, вытекающего из Конвенции En-Mod.

³⁶ Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք; Հատուկ մաս./ Եր.: ԵՊՀ հրատ., 2009, էջ 1075.

³⁷ Juliette Jowit citing Polly Higgins in “British campaigner urges UN to accept ‘ecocide’ as international crime” (April 2010) at: <http://www.theguardian.com/environment/2010/apr/09/ecocide-crime-genocide-un-environmental-damage>

³⁸ Քաղվածք Հայաստանի Հանրապետության կառավարության նիստի արձանագրությունից (23 հունիս 2011) N 24 «Էկոլոգիական քաղաքականության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի հայեցակարգային մոտեցումներին հավանություն տալու մասին, Հավելված

³⁹ Конвенция En-Mod, ст. 3.1

ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի
իրավագիտության ամբիոնի հայցորդ, ՀՀ ԱՆ
ԴԱՀԿ ծառայության Երևան քաղաքի
Աջափնյակ և Դավթաշեն բաժնի պետ

**ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՈՒՄ ԻՐԱՎԱՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԲՆՈՒՅԹԸ ԵՎ ԴՐԱՆՅՑ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԱՐԴԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ**

Դատական, իսկ վերջին շրջանում՝ նաև ուրոշ վարչական ակտերի հարկադիր կատարման գործառույթը վստահված է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կազմում գործող դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը (այսուհետ՝ Ծառայություն): Այդ գործառույթն իրականացվում է վարչական վարույթի հատուկ տեսակի՝ կատարողական վարույթի շրջանակում: Կատարողական վարույթը, ըստ որոշ իրավագետների, ներկայումս իրենից ներկայացնում է իրավունքի համալիր համակարգի ինքնուրույն ճյուղերից մեկի՝ կատարողական իրավունքի կարգավորման առարկան: Նկատենք, որ իրավական պետության հիմնական ասպեկտներից մեկը հանդիսանում է իր իսկ սահմանած համապարտադիր վարքագծի կանոնների անշեղ կատարումը և, ըստ անհրաժեշտության, դրանց հարկադիր կիրառումը:

Քանի որ կատարողական վարույթի զարգացման հեռանկարների կանխատեսումն ունի գիտագործնական զգալի նշանակություն, սույն հոդվածում կանդիդատական քաղաքականության հիմնական ասպեկտներից մեկը հանդիսանում է իր իսկ սահմանած համապարտադիր վարքագծի կանոնների անշեղ կատարումը և, ըստ անհրաժեշտության, դրանց հարկադիր կիրառումը:

1998 թվականի մայիսի 5-ին Հայաստանի Հանրապետության բարձրագույն օրենսդիր մարմնի՝ Ազգային ժողովի կողմից ընդունվեցին, իսկ 1999 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտան Հայաստանի Հանրապետության դա-

տական ակտերը կյանքի կոչող, կատարողական վարույթի հարաբերությունները կարգավորող երկու հիմնարար նորմատիվ իրավական ակտերը՝ «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» (այսուհետ՝ Օրենք ծառայության մասին) և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» (այսուհետ՝ Օրենք) ՀՀ օրենքները: Դատական ակտերի կատարման ապահովումը տարանջատվեց դատական իշխանության ոլորտից և հանձնվեց գործադիր իշխանության մարմնին:

Արդար դատաքննության հիմնասյուններից է համարվում այն մոտեցումը, ըստ որի՝ ամենաօրինական և հիմնավորված դատական ակտը ոչինչ չարժե, եթե այն կյանքի կոչելու համար բացակայում են համապատասխան իրավական լծակներն ու ընթացակարգերը, ինչպես նաև այդ գործառույթն իրականացնող մարմինները: ԱՄՆ 20-րդ Նախագահ Ջեյմս Գարֆիլդը նշել է. «Օրենքը չի կարող օրենք լինել, եթե դրա թիկունքում չկա հարկադրելու ընդունակ ուժ¹»:

Դատական և այլ իրավասու մարմինների ակտերը, որոնք կամովին չեն կատարվում և ենթակա են հարկադիր կատարման, կյանքի են կոչվում Օրենքով սահմանված կարգով Ծառայությունում որպես գործունեության տեսակ իրականացվող որոշակի ընթացակարգով, որը հանդես է գալիս «կատարողական վարույթ» վերտառությամբ: Կատարողական վարույթը կոչված է ողջ իրավակիրառ գործունեությունն ուղղորդելու դատական կամ այլ իրավասու մարմնի ընդունած և օրինական ուժ ստացած ակտի նյութաիրավական նպատակի ապահովմանը:

¹ Տե՛ս Անատոլի Ավագյան, «Կատարողական իրավունքի ձևավորման և զարգացման տնտեսական-կիրառական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում», Երևան 2005թ., մենագրություն, էջ 104:

● ՕՐԻՆԱԿԱՆՆՈՒԹՅՈՒՆ № 86 2015

Ըստ հայ իրավագետ Ռ. Գ. Պետրոսյանի՝ կատարողական վարույթը խախտված կամ վիճարկվող սուբյեկտիվ նյութական իրավունքների կամ օրինական շահերի պաշտպանությանն ուղղված կատարողական փաստաթղթերի հարկադիր կատարումը և այդ կապակցությամբ կատարողական վարույթի մասնակիցների գործունեությունը կարգավորող իրավական նորմերի համակարգ է²: Կատարողական վարույթը՝ որպես «հարկադիր կատարման իրավունքի» առարկա, հայրենական արդի իրավունքի համալիր համակարգի զարգացող օրենսդրական ճյուղերից է և վերջերս ձեռք է բերել էլ ավելի նշանակալից արժեք ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ նրա սահմաններից դուրս:

Յոթ հիմնադիր երկրների մասնակցությամբ 1952 թվականին Փարիզում կայացած հարկադիր կատարողների առաջին համագումարում ստեղծված՝ Դատական կատարողների միջազգային միությունն արդեն ունի 73 անդամ երկիր, ինչը վկայում է այդ ինստիտուտի նկատմամբ նաև միջազգային պատշաճ վերաբերմունքի մասին: ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայությունը Դատական կատարողների միջազգային միության հետ համագործակցում է դեռևս 2010 թվականից: 2013 թվականի նոյեմբերին Փարիզում կայացած Դատական կատարողների միջազգային միության խորհրդի նիստում միության նախագահ Լեո Նետենը Ծառայությանն առաջարկել է համագործակցությունը շարունակել արդեն իսկ միության անդամի կարգավիճակով՝ հաշվի առնելով Ծառայության ունեցած հաջողությունները: Նախատեսվում է, որ 2015 թվականին Ծառայությունը կդառնա Դատական կատարողների միջազգային միության լիիրավ անդամ:

Ծաղկածորում 2014 թվականի հոկտեմբերի 13-14-ը կայացավ «Կատարողական վարույթի խնդիրների ավանդական և նորարարական լուծումները» խորագրով միջազգային 2-րդ գիտագործնական համաժողովը, որին մասնակցել են ինչպես Դատական կատարողների միջազգային միության, այնպես էլ թվով 18 երկրների համապատասխան կառույցների պատվիրակությունները:

Դատական կատարողների միջազգային միության կարևորագույն նախաձեռնություններից է 2006 թվականին մեկնարկած հարկադիր կատարման համընդհանուր օրենսգրքի ստեղծման գործընթացը: Ենթադրվում է, որ այն հավակնոտ և համարձակ ծրագիր է, որը կարող է կարևորագույն չափանիշ հանդիսանալ ինչպես Միության անդամ պետությունների, այնպես էլ հարկադիր կատարման համաշխարհային իրավակիրառ պրակտիկայի համար:

Կատարողական վարույթում առաջացող իրավահարաբերությունների բնույթի վերաբերյալ վեճերն իրավաբանական գրականության մեջ վերջնականապես չեն դադարել: Այդ անորոշությունը բացասաբար է անդրադառնում հարկադիր կատարման կառուցակարգերի ձևավորման, օրենսդրական բարեփոխումների արդյունավետության վրա: Կատարողական վարույթի օրենսդրական լուծում չստացած հարցերի իրավակիրառ պրակտիկան հաճախ հանգեցնում է ամբողջ իրավապահ համակարգի խոցելիությանը:

Կատարողական վարույթի էության և իրավահարաբերությունների բնույթի վերաբերյալ տեսաբանների ու ժամանակակից գիտության արտահայտած կարծիքները տարբեր են և ոչ միանշանակ: Հայտնի է, որ «իրավահարաբերություն» եզրույթն իրավաբանական ուղղվածություն ունի և իրենից ներկայացնում է որոշակի խումբ հասարակական հարաբերությունների մեջ ընդգրկված սուբյեկտների փոխադարձ իրավունքներ և պարտականություններ, որոնք ծագում, փոփոխվում կամ դադարում են պետության կողմից նախապես սահմանված վարքագծի համապարտադիր կանոնների հիման վրա: Այլ կերպ՝ իրավահարաբերություններն իրենցից ներկայացնում են կամայական հասարակական հարաբերություններ, որոնք առաջանում են իրավունքի նորմերի հիման վրա և որոնց մասնակիցներն ունեն պետության կողմից ապահովված սուբյեկտիվ իրավունքներ և իրավաբանական պարտականություններ³:

Հետևաբար, կատարողական իրավահարաբերությունները կատարողական վարույթի

² Տե՛ս Ռ. Գ. Պետրոսյան, «ՀՀ քաղաքացիական դատավարություն», Երևան 2012թ., էջ 549:

³ Տե՛ս Хропанюк В. Н., «Теория государства и права». Москва, 1995, с. 307.

վարման ընթացքում ծագող, փոփոխվող կամ դադարող իրավահարաբերություններն են, որոնք, կախված կատարողական վարույթը կանոնակարգող իրավանորմերի համապարփակ համակարգից, ինչպես նաև ուսումնասիրվող նյութի բովանդակությունից, կարելի է պայմանականորեն բաժանել երեք խմբի՝

ա) քաղաքացիական դատավարության փուլ (կամ մաս).

բ) վարչական իրավունքի կամ վարչական վարույթի մաս.

գ) իրավունքի ինքնուրույն ճյուղ, որը դեռևս չի կայացել, իսկ անվանումը հստակ չէ:

Այն տեսակետի աջակիցները, որոնք պնդում են, որ կատարողական վարույթը քաղաքացիական դատավարության մաս է, վկայակոչում են այն, որ կատարողական վարույթը հանդիսանում է քաղաքացիական դատավարության եզրափակիչ փուլը: Օրինակ՝ ռուս իրավագետ՝ Լ. Ֆ. Լեսնիցկայան համարում է, որ դատական ակտի հարկադիր կատարման մասին ինքնուրույն օրենքի ընդունումը դեռևս չի նշանակում, որ այն դադարում է լինել քաղաքացիական դատավարության փուլ⁴:

Մ. Ս. Շաքարյանը նշում է, որ չպետք է շփոթել իրավունքի ճյուղը և օրենսդրության ճյուղը, սակայն միևնույն ժամանակ նա կատարողական վարույթը դասում է տարբեր իրավական ճյուղերի շարքին, այդ թվում՝ քաղաքացիական դատավարության և որպես իր իսկ տեսության փաստարկ նա նշում է, որ՝

ա) կատարողական վարույթի հարուցման հիմք են հանդիսանում դատական որոշումները,

բ) դատարանը հանդիսանում է կատարողական վարույթի սուբյեկտ՝ օժտված այս փուլում մի շարք կարևոր միջամտություններ իրականացնելու լիազորություններով,

գ) կատարողական վարույթի ընթացքում դատարանը իրավասու է քննել հարկադիր կատարողի դեմ բերված բողոքները⁵:

Որպես ասվածի հակափաստարկ՝ անհրաժեշտ է նշել, որ ներկայումս կատարողական վարույթի հարուցումն ուղղակի կախված չէ

միայն դատական ակտերից (որոշումներ, վճիռներ, դատավճիռներ, կարգադրություններ): Մասնավորապես, Օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ հարկադիր կատարման միջոցների կիրառման հիմքը (ասել է թե, կատարողական վարույթի հարուցման հիմքը) նույն օրենքով սահմանված կարգով տրված կատարողական թերթն է:

Իսկ նույն Օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝ կատարողական թերթը տրվում է ոչ միայն դատարանի վճիռների, դատավճիռների, որոշումների և դատարանի արձակած վճարման կարգադրությունների հիման վրա, այլ նաև արբիտրաժային տրիբունալների վճիռների, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում օտարերկրյա դատարանների և արբիտրաժային տրիբունալների վճիռների և որոշումների, Հայաստանի Հանրապետության անդամակցությամբ (մասնակցությամբ) գործող միջազգային դատարանի (արբիտրաժի) դատական վճիռների կամ որոշումների, Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումների հիման վրա:

Այս առումով նորույթ է անբողոքարկելի վարչական ակտերի ինստիտուտը: Օրենսդիրն Օրենքի 2-րդ հոդվածով սահմանել է, որ հանրային իշխանության վարչական մարմինների անբողոքարկելի վարչական ակտերը ևս Ծառայության կողմից Օրենքով սահմանված կարգով ենթակա են հարկադիր կատարման «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ գլխով սահմանված կարգով⁶:

Վերոշարադրյալ իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ կատարողական վարույթի հարուցման հիմքը հանդիսանում է Օրենքով սահմանված կարգով տրված կատարողական թերթը կամ Հայաստանի Հանրապետության վարչական մարմինների անբողոքարկելի դարձած վարչական ակտերը:

Հանրային իշխանության՝ վարչարարություն իրականացնող իրավագոր մարմինների և տվյալ իրավահարաբերության այլ սուբյեկտ-

⁴ Տե՛ս Лесницкая Л.Ф., “Комментарий к Федеральному закону “Об исполнительном производстве””, М.: Юридический дом «Юстицинформ», 1999, с. 3-4.

⁵ Տե՛ս “Гражданское процессуальное право России” - под редакцией М. С. Шакарян. 2010., с. 52.

⁶ Տե՛ս ՀՀ Պաշտոնական տեղեկագիր 28.12.2013թ., 73 (1013), հոդված 1186.3

ների՝ մասնակիցների միջև ծագած վեճերն ըստ էության լուծող ակտերն ընդունվում են (կամ կայացվում, կամ ճանաչվում) տվյալ հասարակական հարաբերությունները կարգավորելու համար նախատեսված որոշակի օրենքով սահմանված ընթացակարգով՝ հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի պահանջները: Ակնհայտ է, որ այս դեպքում հարկադիր կատարման ենթակա իրավագործ մարմնի անբողոքարկելի դարձած վարչական ակտերը չեն հանդիսանում դատարանի պատշաճ ընթացակարգով քննված քաղաքացիական կամ վարչական դատավարության արդյունք:

Այսպիսով, թեև օրենսդիրը կատարողական վարույթի հարուցման հիմքում դրել է միայն դատարանի կողմից տրված կատարողական թերթը, այնուամենայնիվ, հանրային իրավական դրամական պահանջները, այն է՝ Հայաստանի Հանրապետության պետական կամ համայնքային բյուջե պարտադիր կարգով վճարման ենթակա այն դրամական գումարները, որոնք «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով դարձել են անբողոքարկելի վարչական ակտեր, օրենսդրությամբ սահմանված ժամկետում կամովին չկատարվելու դեպքում, ենթակա են հարկադիր կատարման առանց որևէ դատավարական ընթացակարգի քննության:

Անհրաժեշտ է նկատել, որ վարչարարության արդյունքում իրավական դրամական պահանջներ գանձելու օրենսդրի այս նոր մոտեցումը զուրկ չէ բացթողումներից, մասնավորապես՝ փոփոխության չի ենթարկվել Օրենքի այն իրավանորմը, որը սահմանում է, որ հարկադիր կատարման միջոցների կիրառման հիմքը սույն Օրենքով սահմանված կարգով տրված կատարողական թերթն է: Հետևաբար, հարկ է համապատասխան փոփոխության ենթարկել Օրենքի 4-րդ հոդվածը:

Ավելին, «առանց վարչական վարույթ իրականացնելու և առանց պատշաճ ծանուցման, վարչական տուգանքներ կիրառելը և դրանց չափերը բազմապատկելը խորը հակա-

սության մեջ է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ: Այն զուրկ է որևէ ողջամիտ տրամաբանությունից և անխուսափելիորեն ձևավորելու է խաթարված իրավական մշակույթ⁷:

Հավելենք, որ ներկայումս միանգամայն իրավաչափորեն վիճահարույց է համարվում նաև վարչական ակտերի հարկադիր կատարման ինստիտուտը, ուստի՝ այդ առնչությամբ տարաբնույթ օրինագծերի պաշտոնական շրջանառությունը դեռևս ընթացքի մեջ է:

Անդրադառնալով կատարողական վարույթի հասկացությանը՝ ցիտենք ռուս տեսաբան Ա. Կ. Սերգունին. «Կատարողական վարույթը հանդիսանում է որոշակի գործընթացի եզրափակիչ փուլ, որտեղ իրացվում է իշխանության իրավագործ մարմնի կողմից հաստատված որևէ սուբյեկտիվ իրավունք, ինչպես նաև կատարողական վարույթն ունի սկզբունքներ, որոնք համընկնում են քաղաքացիական դատավարության որոշ սկզբունքների, մասնավորապես՝ օրինականության, կողմերի իրավահավասարության, օրենքի առջև բոլորի իրավահավասարության, թարգմանչի մասնակցությամբ մայրենի լեզվով հաղորդակցվելու, ինչ որ չափով նաև մրցակցության և բանավորության սկզբունքները⁸»:

Վերջինիս հետ համակարծիք է նաև Վ. Մ. Շերստյուկը, ըստ որի՝ կատարողական վարույթը հանդիսանում է քաղաքացիական իրավունքի պաշտպանության ընթացակարգի բաղադրիչ մասը, ինչպես նաև այդ իրավունքի իրացման վերջին փուլը⁹:

Սակայն ռուս իրավագետների մեկ այլ խումբ՝ Օ. Վ. Իսաենկովը, Ա. Ն. Բալաշովը, Ի.Ն. Բալաշովը, գտնում են, որ դատական և այլ մարմինների ակտերի օրենքով նախատեսված կատարումը կատարողական վարույթի հատուկ սուբյեկտների՝ հարկադիր կատարողների իրավապահ գործունեությունն է և, ի տարբերություն դատական գործունեության, հարկադիր կատարողը չի լուծում իրավունքի վեճը, այլ կատարում է այն պահանջները, որոնք նախապես որոշվել են դատական պրոցեսում կամ

⁷ Տե՛ս <https://www.facebook.com/gevorg.danielyan.9/posts/628134603935698>.

⁸ Տե՛ս «Гражданское процессуальное право России» - под редакцией М. С. Шакаряна. 2010., с. 349.

⁹ Տե՛ս «Гражданский процес» - под редакцией М. К. Треушников, Москва, 2003. с. 546.

Օրենքով նախատեսված այլ իրավասու մարմինների որոշումներում: Հարկադիր կատարողների խնդիրը հանդիսանում է կատարման ենթակա պահանջի էությունը չփոխելով կատարողական վարույթի հատուկ լծակների միջոցով հարկադրաբար դրանք կատարելը:

Անհրաժեշտ է նկատել, որ տեսաբանների որոշ խումբ կատարողական վարույթի տեղը քաղաքացիական դատավարությունում հիմնավորել են ընդամենը կատարողական վարույթի սկզբունքների և քաղաքացիական դատավարության սկզբունքների համադրման և նմանեցման արդյունքում: Սակայն, ինչպես արդեն նշեցինք, Ծառայությունը հանդիսանում է վարչական մարմին, ուստի որպես վարչական մարմին, կատարողական վարույթի վարման ընթացքում պարտավոր է առաջնորդվել նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ գլխով նախատեսված սկզբունքներով, որոնք նույն օրենքի 2-րդ հոդվածի ուժով համընդհանուր են բոլոր վարչական մարմինների համար:

Ի տարբերություն այդ օրենքով ամրագրված սկզբունքների, քաղաքացիական դատավարության սկզբունքներն իրենց բնույթով ավելի պոզիտիվ են և հիմնված են իրավահարաբերության կողմերի իրավահավասարության և ազատ կամահայտնության վրա, իսկ կատարողական վարույթում դրանք իրավազոր-կարգադիր են: Հետևաբար, կատարողական վարույթի և քաղաքացիական իրավունքի որոշ սկզբունքների ձևական նմանությունը բնավ չի կարող առիթ հանդիսանալ տարբեր իրավահարաբերություններ կարգավորող երկու ոլորտների համատեղման համար:

Ընդհանուր առմամբ քաղաքացիական դատավարության իրավունքը՝ որպես ՀՀ իրավական համակարգի ինքնուրույն իրավունքի ճյուղ, դատավարական նորմերի համակցություն է, որը քաղաքացիական գործերով արդարադատություն իրականացնելիս կարգավորում է դատավարության մասնակիցների և ՀՀ բոլոր ատյանի դատարանների միջև ծագած հասարակական (դատավարական) հարաբերությունները, բայց միանշանակ՝ ոչ դատական ատյաններում որոշված (վճռված) դատական

ակտերի հարկադիր կատարումն ապահովող հասարակական հարաբերությունները:

Ըստ իրավագետ Յուրի Ստեփանի Ղամբարյանի՝ «Քաղաքացիական դատավարությունը քաղաքացիական իրավունքի հարկադիր իրացման կարգն է և հանգում է ինչպես իրավունքի պաշտպանության մարմինների, այնպես էլ այդ պաշտպանությունից օգտվող կամ որևէ կերպ դրա հետ առնչվող անձանց գործողությունները որոշող նորմերի համակցության¹⁰»:

Մինչդեռ, կատարողական վարույթի փաստացի տարանջատումը դատական իշխանությունից և մասնավորապես՝ քաղաքացիական դատավարությունից իրականացվել է Հայաստանի Հանրապետության հարկադիր կատարման ինստիտուտի ստեղծմամբ, որը կոչված է ապահովելու Օրենքով նախատեսված դատական և այլ մարմինների կամովին չկատարված ակտերի հարկադիր կատարումը:

Թեև քաղաքացիական դատավարության և կատարողական վարույթի մեջ առկա է ուղիղ կապ, սակայն նշված ոլորտների շրջանակում ծագող իրավահարաբերությունները, տվյալ դեպքում չեն համընկնում, քանի որ կատարողական վարույթում առկա է մասնակիցների որակապես այլ կազմ, որոնցից շատերը չեն հանդիսանում քաղաքացիական դատավարության սուբյեկտ, ինչպես նաև տարբեր են նրանց խնդիրները: Եթե կատարողական վարույթը համարենք քաղաքացիական դատավարության փուլ, ապա այս դեպքում խախտվում է քաղաքացիական դատավարության իրավունքի իրավական ամբողջությունը, որպես իրավունքի համալիր ճյուղի՝ բացակայում է նրա մասերի ընդհանրությունը: Կատարողական վարույթը հանդես է գալիս որպես առանձին ինստիտուտ և ոչ թե քաղաքացիական դատավարության իրավունքի ընդհանուր կամ հատուկ մասի բաղադրիչ: Ի դեպ, Վ. Մ. Հովհաննիսյանն իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու իր ատենախոսությամբ արտահայտել է հետևյալ նմանատիպ տեսակետը. «Կատարողական իշխանությունը կատարողական վարույթում իրականացվում է պետության կողմից, վարչական կառավարման ձևով և կարգավորվում է ինչպես իրեն հատուկ

¹⁰ Տե՛ս «Гражданский процес» - под редакци М. К. Треушникова, Москва, «Курс лекций, читанных профессор академии Ю. С. Гамбаровым в 1894-1895гг» - 2003, с. 93.

իրավանորմերով, այնպես էլ վարչական իրավունքի նորմերով, ինչի արդյունքում այլ իրավաճյուղերի իրավանորմերը ինտեգրվում են կատարողական վարույթի միասնական համակարգում¹¹»:

Այս տեսակետի առնչությամբ կարելի է նաև հղում անել ռուս իրավագետ Վ. Խազիկովային, ըստ որի՝ վարչական իրավագործությունը պետք է դիտել որպես հրապարակային իշխանության գործադիր մարմնի ենթաօրենսդրական, իրավակիրառ, իրավապահ բնույթի կառավարչական գործունեության մաս, որն իրականացվում են օրենքով ամրագրված վարչաիրավական վարույթների շրջանակում, այդ թվում՝ առանձնացնելով պետական հարկադրանքի և պահպանության, դաստիարակչական, կարգավորիչ գործառույթների կատարման գործունեությունը¹²:

Ըստ մեկ այլ ռուս իրավագետ Ե. Ա. Կորյակինի՝ «Վարչական իրավագործությունը պետական իրավասու մարմնի (պաշտոնատար անձանց) վարչա-ընթացակարգային գործունեություն է, որն իրականացվում է արտադատական կարգով վարչաիրավական վեճեր քննելու, ուսումնասիրելու և լուծելու նպատակով, որոնք առաջանում են պետական կառավարման հարթությունում (պետական իշխանության իրացում), մասնակիցների վարքագծի իրավական գնահատականի և անհրաժեշտության դեպքում մեղավոր կողմի նկատմամբ գործող օրենսդրությամբ նախատեսված իրավական պատասխանատվության իրականացմամբ¹³:

«Իրավագործություն» եզրույթը բազմիմաստ է: Ընդհանուր բնութագրմամբ՝ «վարչական իրավագործությունը» համարվում է պետական, ենթաօրենսդրական, իրավակիրառ, իրավապահ գործունեության ինքնուրույն տեսակ, որին հատուկ է գործերի լուծման մրցակցային ընթացակարգ, օրենսդրությամբ սահմանված իրավական վեճի առկայություն (իրավախախտում) և վարչական ակտի ընդունում: Վարչա-

կան իրավագործությունը պետական կամ հասարակական իշխանության սուբյեկտի իրավական հատկությունն է իրականացնելու իշխանական կարգադրիչ գործառույթներ իր լիազորությունների շրջանակում, օրենսդրությամբ սահմանված ժամկետներում և կարգով, որի առաջնային նպատակն է իրականացնել հանրային կառավարում, իսկ ածանցյալը՝ ուսումնասիրելու և լուծելու հանրային իրավահարաբերության վարչաիրավական վեճերը¹⁴:

Այն, որ կատարողական վարույթի շրջանակում որևէ ենթաօրենսդրական ակտ չի կայացվում, որևէ վեճ չի լուծվում և որևէ իրավախախտում չի քննվում, ակնհայտ է (բացառությամբ հայտնաբերված իրավախախտման արձանագրման), հետևաբար, կատարողական վարույթում ընդհանուր վարչական իրավագործության մասին խոսք լինել չի կարող: Սակայն պետական իշխանության համակարգում Ծառայության զբաղեցրած տեղից, հարկադիր կատարողի և կատարողական վարույթի մասնակիցների իրավահարաբերության բնույթից, հարկադիր կատարման ծառայողների լիազորությունների տնօրինչական բնույթից, ինչպես նաև վերջիններիս կողմից իրենց լիազորությունների շրջանակում հանրային իրավահարաբերություններին ուղղված ակտ՝ որոշում կայացնելու իրավունքից ելնելով (ընդհանուր բնորոշմամբ հարկադիր կատարողի որոշումը համարվում է վարչական ակտ), կարելի է միանշանակ եզրակացնել, որ Ծառայությունը՝ որպես վարչական մարմին, իրականացնում է վարչական իրավագործություն իրեն հատուկ քաղաքացիական և վարչական եղանակների խառը ընթացակարգերով:

Վերոշարադրյալից բխում է, որ կատարողական վարույթը հանդիսանում է վարչական իրավագործության իրականացման յուրահատուկ գործընթաց՝ վարչական վարույթի ինքնուրույն և հատուկ տեսակ՝ օժտված վարչա-տնօրինչական բնույթի լիազորություններով, իրավապաշտ-

¹¹ Տե՛ս Оганесян В. М., “Исполнительное производство в Российской Федерации: административно-правовая природа и правовой режим: Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук”. - Москва, 2007, с. 16.

¹² Տե՛ս Хазикова В., “К вопросу о понятии “административная юрисдикция””. Журнал/Арбитражный и гражданский процесс/2008, № 11, с. 43-45.

¹³ Տե՛ս Корякин Е. А., “Административно-юрисдикционная деятельность как элемент административного процесса в государственном управлении” - Журнал/Государственная власть и местное самоуправление/2007, № 10, с. 56.

¹⁴ Տե՛ս Ռ. Գ. Պետրոսյան, «« քաղաքացիական դատավարություն: Դասագիրք», Երևան 2012թ., էջ 24:

պան գործունեության և գործառույթի իրականացման առանձնահատուկ մեթոդներով, որի արդյունքում՝ միաժամանակ օժանդակում է արդարադատության իրականացմանը:

Ծառայությունը, ըստ էության, հանդես է գալիս որպես գործադիր իշխանության մարմին՝ օժտված ինքնուրույն գործառույթներով և լիազորություններով. այն դատական իշխանության աշխատակազմի հատված չէ, ինչն էլ հանդիսանում է առաջին էական առանձնահատկությունը և հիմնավորումը առ այն, որ կատարողական վարույթը որևէ դատավարության փուլ կամ մաս չի կարող լինել:

Ներկայումս հարկադիր կատարողը հանդես է գալիս որպես կատարողական վարույթում Ծառայության մասին Օրենքով հստակ սահմանված լիազորություններով օժտված, ինքնուրույն սուբյեկտ: Դատարանը չի հանդիսանում հարկադիր կատարողի վերադաս և չի տալիս որևէ հանձնարարություն, այլ միայն կատարողական վարույթի ընթացքում իրականացնում է որոշակի դատավարական վերահսկողություն:

Վերոշարադրյալ հեղինակների կարծիքների համադրությունը և վերլուծությունն իրավագիտորեն հանգեցնում է այն դատողության, որ թեև առկա է ուղիղ կապ կատարողական վարույթի և քաղաքացիական դատավարության իրավունքի միջև, սակայն միևնույն ժամանակ պետք է ընդգծել կատարողական վարույթի ինքնուրույնությունը՝ որպես կատարողական իրավունքի գործառույթը կյանքի կոչող՝ Օրենքով սահմանված հարկադրանքի տարրն իրականացնող և ապահովող գործընթաց: Ինչն էլ իր հերթին հանգեցնում է հանրային իրավունքի ինքնուրույն ճյուղ ձևավորելու արդի միտումներին:

Ռուս իրավագետ, տեսաբան Ե. Ա. Կարիմովան նշում է, որ իրավունքի յուրաքանչյուր ճյուղին բնորոշ է իր գործառույթը, կարգավորման իր ռեժիմը, ուստի՝ միևնույն իրավանորմը չի կարող միաժամանակ կարգավորել (կամ վերահսկել) երկու տարբեր հասարակական հարաբերություններ: Հետևաբար, միևնույն պահանջը չի կարող ներառվել իրավունքի երկու

տարբեր ոլորտներում, այստեղից հետևում է, որ կատարողական վարույթը չի կարող լինել քաղաքացիադատավարական իրավունքի մաս: Կատարողական վարույթի իրավանորմերը չեն կարող հանդես գալ և միաժամանակ կարգավորել քաղաքացիադատավարական հարաբերությունները: Կատարողական վարույթը՝ որպես իրավունքի ինքնուրույն ճյուղ, «դատավար-կատարողական իրավունքի» հիմք, պետք է դիտարկել որպես միջճյուղային իրավական երևույթ, որն ունի իր ինքնուրույն կառուցվածքը¹⁵:

Նմանատիպ կարծիք են հայտնում նաև մի շարք ռուս տեսաբաններ և իրավագետներ, մասնավորապես՝ ըստ Մ. Ա. Գուրևիչի՝ «Կատարողական վարույթը չի հանդիսանում դատավարական իրավունքի մաս և դրա նկատմամբ հանդես է գալիս որպես «օտար սեպ»: Նրա կարծիքով, կատարողական վարույթն արդարադատության հետ կապված է այնպես, ինչպես արբիտրաժը կամ նոտարական իրավապահ գործունեությունը¹⁶»:

Ըստ ռուս իրավագետ Ի. Օ. Բուռնակովայի՝ հարկադիր կատարման ծառայությունը պատկանում է և պետական իշխանությանը, և կառավարման (գործադիր) մարմիններին, ուստի՝ դատական ակտերի հարկադիր կատարողը պետական գործադիր իշխանության պաշտոնատար անձ է: Հետևաբար, դատական համակարգից կատարողական վարույթի տարանջատումից հետո չի կարելի այն դիտել որպես դատական համակարգի մաս: Եվ չնայած կարգավորող իրավանորմերի որոշակի նմանությանը կատարողական վարույթը քաղաքացիական դատավարությունից առանձին իրավունքի ճյուղ է՝ պայմանավորված հարկադիր կատարման հասարակական հարաբերությունների վարչաիրավական կարգավորմամբ:

Մ. Կ. Տրեուշնիկովը կատարողական վարույթի հասկացությունը մեկնաբանում է որպես օրենքով նախատեսված իրավագոր մամինների ակտերի հարկադիր կատարում, ուղղված վիճարկված կամ խախտված սուբյեկտիվ նյութական իրավունքների կամ օրենքով պահպանվող շահերի իրական պահպանության ապա-

¹⁵ Տե՛ս «Исполнительное производство: процессуальная природа и цивилистические основы» - под редакцией Д. Х. Валева, М. Ю. Чельшева., Москва, Журнал «Статус» 2007, с. 12.

¹⁶ Տե՛ս Гурвич М. А., «Советское гражданское процессуальное право» - Москва, 1964. с. 26.

հովմանը: Նա նաև տարանջատում է կատարողական վարույթը դատավարությունից՝ նշելով կատարողական իրավունքի ինքնուրույնությունը որպես նաև իրավագործ մարմինների ակտերի հարկադիր կատարման կարգ, այլ ոչ թե միայն դատական աստիճանների որոշումների, կարգադրությունների և վճիռների կատարման կարգ¹⁷:

Այսպիսով, Ծառայության ստեղծմամբ ականա հիմք է դրվել քաղաքացիական իրավունքների պաշտպանության կառուցակարգի բաղկացուցիչ (եզրափակիչ) մասը կազմող, քաղաքացիական դատավարության իրավունքը լրացնող և շարունակող «կատարողական իրավունք» նոր ճյուղի ձևավորմանը, որն ունի հանրային իրավական բնույթ, քանի որ կատարողական վարույթի մասնակիցների համապարտադիր վարքագիծը գերազանցապես իրականացվում է պետության պատվիրանների միջոցով:

Ներկայումս կատարողական վարույթն այնպիսի իրավական կարգավորման համալիր ինստիտուտ է, որն ունի իրեն հատուկ կատարողա-դատավարական ձև, իր մեջ միավորում է իրավունքի տարբեր ճյուղերին վերաբերող իրավանորմեր, ինչն էլ որոշում է քաղաքացիական հարաբերության սուբյեկտների իրավունքի հարկադիր կատարմանն ուղղված, պետական իշխանության լիազոր մարմնի իրավասությունը:

Մասնավորապես՝ կատարողական թերթ տալը, վճռի կատարման շրջադարձը, դատական ակտի կատարման հետաձգումը կամ տարածամկետումը, կատարման եղանակի և կարգի փոփոխումը, կատարողական թերթի պարզաբանումը, հարկադիր կատարողի գործողությունների դեմ բողոքների դատավարական քննությունը (և այլն) կազմում են քաղաքացիական դատավարության օրենսդրության մաս: Գրավադրված գույքի վրա բռնագանձում տարածելը, հարկադիր աճուրդների կազմակերպումը և դրա արդյունքում առքուվաճառքի պայմանագրեր կնքելը կազմում են քաղաքացիական օրենսդրության մաս: Ինչ վերաբերվում է հարկադիր կատարման կազմակերպմանն առնչ-

վող նորմերին, ապա դրանց ճնշող մեծամասնությունը վարչաընթացակարգային բնույթ ունեն, և քանի որ այս բոլոր նորմերն իրացվում են կատարողական միասնական վարույթում, ուստի՝ այն հավակնում է լինել իրավունքի ինքնուրույն ճյուղ՝ «կատարողական իրավունք» վերտառությամբ:

Ինչպես հայտնի է, իրավական նորմերով կարգավորվող յուրաքանչյուր հասարակական հարաբերություն ունի իր կարգավորման առարկան և մեթոդը, ինչն էլ ընդգծում է տվյալ իրավունքի ճյուղի առանձնահատկությունը, դրա տեղն ու դերն իրավունքի ընդհանուր համակարգում: Իրավունքի համակարգը բաղկացած է իրավունքի այնպիսի ճյուղերից, որոնք առաջին հերթին տարբերվում են իրավական կարգավորման առարկայով ու մեթոդով: Ընդ որում, իրավունքի յուրաքանչյուր ճյուղի առարկան այն հասարակական հարաբերություններն են, որոնք կարգավորվում են տվյալ ճյուղի նորմերով:

Ելնելով վերոգրյալից փորձենք պատասխանել այն հարցին, թե ի՞նչ է «կատարողական իրավունքի» կարգավորման ինքնուրույն առարկան և մեթոդը:

Հայաստանի Հանրապետության դատական ակտերը, արբիտրաժային տրիբունալի վճիռները, ֆինանսական հաշտարարի որոշումները, ՀՀ միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում օտարերկրյա դատարանների և արբիտրաժային տրիբունալների քաղաքացիական և տնտեսական գործերով վճիռները և որոշումները, ինչպես նաև քրեական գործերով օտարերկրյա դատարանների դատավճիռներն ու որոշումները՝ վնասի հատուցման և գույքային այլ բռնագանձումների մասով, ՀՀ անդամակցությամբ (մասնակցությամբ) գործող միջազգային դատարանի, ինչպես նաև միջազգային արբիտրաժի քաղաքացիական և տնտեսական գործերով վճիռները և որոշումները, ՀՀ վարչական մարմինների անբողոքարկելի դարձած վարչական ակտերը (այսուհետ՝ Ակտեր) կամովին չկատարվելու դեպքում ենթակա են այլընտրանքային կատարման՝ հարկադիր կատարման, Օրենքով սահմանված կարգով:

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, № 86 2015

¹⁷ Տե՛ս «Гражданский процес: Учебник. 2-е издание» - под редакцией М. К. Треушников, Москва, «Издательский Дом Спарк – Городец», 2007, с. 584.

Վերոնշյալ բոլոր Ակտերի գոյությունը պայմանավորված է որևէ խումբ հասարակական հարաբերությունները կարգավորող իրավական նորմերի վիճարկմամբ կամ արդեն իսկ խախտմամբ, որոնք տվյալ իրավահարաբերությունը կարգավորող օրենքով սահմանված պատշաճ ընթացակարգով քննվել և լուծվել են պետության կամ որևէ իրավազոր այլ մարմնի կողմից իր իսկ իրավազորության սահմաններում: Սակայն այս բոլոր Ակտերն ինքնաբերաբար չեն կարող իրագործվել հատկապես այն դեպքում, երբ դրանք կամովին չեն կատարվում: Հետևաբար, այստեղ ակամա ծագում է այլընտրանքային կատարման անհրաժեշտությունը, որը Հայաստանի Հանրապետությունում Օրենքով վերապահված է Ծառայությանը:

Վերոնշյալ Ակտերի հարկադիր կատարման անհրաժեշտությամբ պայմանավորված պետության լիազոր մարմնի՝ Ծառայության, և հարկադիր կատարման ենթակա Ակտի մասնակիցների միջև (պարտապան և պահանջատեր) ծագում են համապատասխան իրավահարաբերություններ, որոնք կարգավորվում են Օրենքի միջոցով, որը սահմանում է հատուկ ընթացակարգով վարվող «կատարողական վարույթ», ինչը վկայում է այն մասին, որ տվյալ պարագայում առկա է «կատարողական իրավունքի» կարգավորման յուրօրինակ առարկան ներկայացնող՝ հասարակական հարաբերությունների այն շրջանակը, որը ծագում, փոփոխվում և դադարում է ի կատարումն հարկադիր կատարման ենթակա Ակտի հիման վրա հարուցված կատարողական վարույթում: Վերջինիս հատուկ է նաև կարգավորման յուրօրինակ մեթոդ՝ Օրենքով սահմանված հարկադիր կատարման միջոցներ:

Այսպիսով, ընդհանրացնելով վերոշարադրյալը, փորձենք սահմանել, որ «կատարողական իրավունքի» կարգավորման առարկան են հանդիսանում այն հասարակական հարաբերությունները, որոնք ծագում, փոփոխվում և դադարում են ի կատարումն իրավազոր որևէ մարմնի հարկադիր կատարման անհրաժեշտություն ստացած Ակտի առնչությամբ: «Կատարողական իրավունքի» կարգավորման առարկան հանդիսացող հասարակական հարա-

բերություններն իրացվում են Օրենքով սահմանված կարգով հարուցված կատարողական վարույթի շրջանակում և ուղղված են Ակտով ճանաչված (սահմանված կամ հրապարակված) սուբյեկտիվ նյութական իրավունքների վերականգմանը:

Ուսումնասիրելով իրավագետների արտահայտած մեկնաբանությունները և տարաբնույթ կարծիքները՝ կարելի է նաև փորձել ձևակերպել կատարողական վարույթի ընդհանուր սահմանումը. կատարողական վարույթը կատարողական իրավունքի նորմերով կարգավորվող, իրավազոր մարմինների կայացված (կամ ընդունված), կամովին չկատարված Ակտերի, Օրենքով սահմանված հարկադիր կատարման միջոցների կիրառման ընթացակարգ է, որն իրականացվում է պետական կառավարչական ձևերով և ուղղված է կատարողական հարաբերության սուբյեկտների խախտված կամ վիճարկվող նյութական իրավունքի կամ օրենքով պահպանվող շահի արդյունավետ պաշտպանությանը»:

Աներկբա է, որ կատարողական վարույթի կարգավորման շրջանակում ընդգրկված հարաբերությունները բազմաբնույթ են և դրանով իսկ պայմանավորված ունեն բարդ կառուցակարգ, ինչն էլ իր հերթին ոլորտի և նրա խնդրի բացահայտման հարցադրումը դարձնում է ոչ միանշանակ և հաճախ նաև վիճահարույց: Սակայն կատարողական վարույթի զարգացման վեկտորը, արդի միտումները պետք է ուղղել քաղաքացիական և վարչական իրավունքի սկզբունքների համադրմամբ, սեփական սկզբունքների վերարտահանման, բացահայտման և սահմանման ուղղությամբ:

Կարծում ենք, կատարողական ինստիտուտի զարգացումը միանգամայն հավակնում է ձևավորել իրավունքի ինքնուրույն ճյուղ, օրենքով սահմանված ընթացակարգով ստեղծել և ընդունել նորմատիվ իրավական ակտերի համակարգված շտեմարան՝ «Կատարողական օրենսգիրք», ինչը կարող է հանդիսանալ իրականացված արդարադատության իրական գոյության կարևորագույն ասպեկտներից մեկը և կատարողական իրավունքի զարգացման երաշխիքը:

ՏԻԳՐԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
մագիստրատուրա 1-ին կուրսի ուսանող

**ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՆԿԱՏԱՄԲ ՆՇԱՆԱԿՎՈՂ ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ
ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՊԱՏԺԱՏԵՍԱԿՆԵՐԸ**

Անչափահասների քրեական պատասխանատվության ինստիտուտին բնորոշ են մի շարք առանձնահատկություններ, որոնք վերջինիս առանձնացնում են քրեական պատասխանատվության ընդհանուր չափորոշիչներից և պահանջում առկա խնդիրներին տալ ինքնատիպ ու արդյունավետ լուծումներ:

Անչափահասների քրեական պատասխանատվության հիմքում ընկած է այն հանգամանքը, որ 14-ից 18 տարեկան անձինք հասել են հոգեֆիզիոլոգիական զարգացվածության որոշակի մակարդակի, երբ գիտակցում են սեփական արարքների հանրային վտանգավորությունը և բնույթը, ինչպես նաև ընդունակ են ղեկավարելու դրանք, ուստի՝ պատասխանատու են կատարած արարքների համար:

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 24-ի 1-ին մասի համաձայն՝ քրեական պատասխանատվության ենթակա է այն անձը, ում 16 տարին լրացել է նախքան հանցանք կատարելը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ այն անձինք, որոնց 14 տարին լրացել է մինչև հանցանք կատարելը, ենթակա են քրեական պատասխանատվության այն հանցագործությունների համար, որոնց սպառիչ ցանկը տրված է 24 հոդվածի 2-րդ մասում (սպանություն, դիտավորությամբ ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառել, մարդուն առևանգել, բռնաբարություն, ավազակություն, գողություն, շորթում, խուլիգանություն և այլ հանցագործություններ): Օրենսդրի կողմից նշված հանցագործությունների համար 14-16 տարեկան անչափահասներին քրեական պատասխանատվության ենթարկելու և նրանց նկատմամբ պատիժ նշանակելու հնարավորության նախատեսումը հիմնավորում է այդ տարիքում անչափահասների կողմից օրենսգրքով նշված կոնկ-

րետ արարքների հանրային վտանգավորության աստիճանն ու բնույթը գիտակցելու հանգամանքը:

Անչափահասների նկատմամբ կիրառվող պատիժների համակարգը նախատեսված է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի գլուխ 14-ում՝ «Անչափահասների քրեական պատասխանատվության և պատժի առանձնահատկությունները»: Ազատազրկման հետ կապված պատժատեսակներից անչափահասների նկատմամբ ըստ ՀՀ քրեական օրենսգրքի կարող է կիրառվել միայն կալանքն ու որոշակի ժամկետով ազատազրկումը: Անչափահասների նկատմամբ ազատազրկման և այլ պատիժների նշանակման հարաբերակցությունը հետևյալն է. 2010 թվականին՝ 161 և 15, 2011 թվականին՝ 95 և 15, 2012 թվականին՝ 76 և 11, 2013 թվականին՝ 69 և 14¹: Ըստ էության, պատժի համակարգում ընդգրկված պատժատեսակներից գործում է միայն ազատազրկում պատժատեսակը, որովհետև մյուս պատժատեսակներն օրենսդրական ոչ հստակ կարգավորման պատճառով արդյունավետ չեն: Իսկ ազատազրկում պատժատեսակն անհամեմատ ավելի խիստ և ոչ նպատակահարմար պատժատեսակ է անչափահասների համար. ուղղված է անչափահասին հասարակությունից մեկուսացնելուն՝ հաշվի չառնելով վերջինիս տարիքով պայմանավորված հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունները: Ազատազրկման պայմաններում դեռևս չկայունացած անչափահասի սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները հնարավոր է այնպիսի փոփոխությունների ենթարկվեն, որ անչափահասի կողմից կրկին հանցագործություն կատարելու հավանականությունը մեծանա:

Միջազգային մի շարք փաստաթղթեր սահ-

● ՕՐԻՆԱԿԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ № 86 2015

¹ Տե՛ս <http://www.court.am>:

մանում են այն հիմնական դրույթներն ու չափորոշիչները, որոնք պետք է հիմք դառնան բոլոր երկրներում անչափահասների նկատմամբ ազատագրված հետ կապված պատժատեսակների նշանակման, արդարադատության արդյունավետ իրականացման համար՝ հաշվի առնելով նրանց մտավոր և ֆիզիոլոգիական զարգացվածության աստիճանն ու առանձնահատկությունները: ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1985 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 40/33 բանաձևով հաստատված «Պեկինյան կանոնների» 17 կանոնի 2-րդ ենթակետի համաձայն՝ անչափահասի անձնական ազատության սահմանափակման մասին որոշումը պետք է ընդունվի միայն հարցի մանրազնին քննարկումից հետո, և սահմանափակումը հնարավորության սահմաններում պետք է հասցնել նվազագույնի, իսկ 3-րդ ենթակետի համաձայն՝ անչափահաս իրավախախտին պետք է ազատագրվել, եթե միայն նա մեղավոր չի ճանաչվում այլ անձի դեմ բռնությամբ լուրջ արարք գործելու կամ բազմաթիվ լուրջ իրավախախտումներ կատարելու մեջ, ինչպես նաև ներգործության ուրիշ համապատասխան միջոցների բացակայության դեպքում:

Կալանք: Պատիժների համակարգում այս պատժատեսակի ընդգրկման գաղափարը քրեական իրավունքի տեսության մեջ քննարկվել է դեռ շատ վաղուց: Մեր օրենսդիրը ընդունելի է համարել այն և ամրագրել ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 57-ում, որի համաձայն՝ «Կալանքը ուղղիչ հիմնարկում անազատության մեջ պահելու ձևով հասարակությունից խիստ մեկուսացման պայմաններում դատապարտյալին պահելն է: Կալանքը կարող է նշանակվել ոչ մեծ և միջին ծանրության հանցանքների համար սույն օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված դեպքերում՝ տասնհինգ օրից մինչև երեք ամիս ժամկետով և միայն այն դեպքում, երբ կալանավորումը որպես խափանման միջոց չի կիրառվել»: Դրա էությունը կայանում է նրանում, որ դատապարտյալը պահվում է հասարակությունից խիստ մեկուսացման պայմաններում: Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 88-ի՝ այն կարող է նշանակվել դատավճիռը կայացնելու պահին 16 տարին լրա-

ցած անչափահասի նկատմամբ՝ 15 օրից մինչև 2 ամիս ժամկետով:

Ընդհանուր առմամբ այս պատժատեսակը հանցագործի նկատմամբ բարոյապես ներգործելու միջոց է, հատկապես եթե նա առաջին անգամ է հայտնվել մեղադրյալի աթոռին²: Այս կարծիքի հետ մասնակի ենք համաձայն. այն արդյունավետ միջոց է, եթե գործ ունենք չափահաս հանցագործի հետ: Կալանք պատժատեսակն առանձնանում է իր բացառիկ խստությանը. ինչպես գիտենք, կալանքի և փակ ուղղիչ հիմնարկներում պատիժ կրող դատապարտյալի համար նախատեսվում են պատժի կրման նույնանման պայմաններ, բայց կալանքի դեպքում սահմանափակումներն ավելի շատ են, օրինակ՝ դատապարտյալների հետ մասնագիտական կրթություն չի իրականացվում, տեսակցություններ չի թույլատրվում, բացառությամբ ծնողների հետ և այլն: Նույնիսկ եթե նկատի ունենանք, որ կալանքի դատապարտված անչափահասներին, ի տարբերություն չափահասների, թույլատրվում է ամսվա մեջ մեկ անգամ չորս ժամ տևողությամբ տեսակցություն ունենալ ծնողների հետ, ինչպես նաև օգտվել օրեկան երկու ժամ տևողությամբ զբոսանքի իրավունքից, այնուամենայնիվ, կարծում ենք, որ այս պատժատեսակի պայմաններն անչափահասների համար շատ խիստ են, չեն համապատասխանում միջազգային չափանիշներին և զուտ պատժիչ բնույթ ունեն: Գտնում ենք, որ անչափահասների հետ ոչ միայն պետք է մասնագիտական կրթություն իրականացվի, այլև ապահովվի հոգեբանների ու մանկավարժների հետ նրանց շփումները: Հաշվի առնելով մեկուսացման խստությունը և առաջնորդվելով մարդասիրության սկզբունքով՝ անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ այս պատժատեսակն ամբողջությամբ պետք է դուրս մղվի անչափահասների նկատմամբ նշանակվող պատիժների համակարգից, քանի որ էականորեն կարող է ազդել դեռևս չձևավորված հոգեբանություն ունեցող անչափահասի վրա՝ առաջացնելով հակակրանք հասարակության նկատմամբ, որը հանցածին նշանակություն կարող է ունենալ: Այս տարիքում չկան վարքի ճիշտ և սխալ հասկացություններ. կա վարք, որն «ինձ դուր է

² Ст'я Зубков А.И., “Уголовно-исполнительное право России”- М., 1997, с. 442.

գալիս», և վարք, որն «ինձ դուր չի գալիս»: Ճիշտ է այն վարքը, որը «ես հավանում եմ և ինձ դուր է գալիս», և սխալ է այն վարքը, որն «ինձ դուր չի գալիս և ես չեմ հավանում»: Եվ հուզականության այս ֆոնի ազդեցությամբ է, որ անձը գնում է տարաբնույթ վարքի³: Ուստի պատիժ նշանակելիս պետք է հաշվի առնել հենց այս հանգամանքը, որը, գտնում ենք, ամբողջովին անտեսվում և արհամարհվում է կալանքի կիրառմամբ:

Այսպիսի «շոկային» միջոց անչափահասի նկատմամբ կիրառելը, մեր կարծիքով, արդարացված չէ: Առաջին անգամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անչափահասը ոչ մի դեպքում նման վերաբերմունքի չպետք է արժանանա: Եթե մի պահ պատկերացնենք, որ այս պատժատեսակը շարունակում է մնալ անչափահասների նկատմամբ նշանակվող պատիժների համակարգի բաղկացուցիչ մասը, ապա պետք է նախատեսել այս պատժատեսակի կիրառման այլ պայմաններ: Նախ, կարծում ենք, որ դրա ժամկետները պետք է կրճատել: Եվրոպական երկրների մեծ մասում անչափահասի նկատմամբ կիրառվող կալանքի ժամկետը մեկ ամսից ավելին չէ: Բացի այդ, կալանքը կրելու ընթացքում անչափահասը չի զրկվում ուսման կամ աշխատանքի հնարավորությունից: Դեռ ավելին, որոշ երկրներում կալանքը կիրառվում է որպես «կալանք միայն ժամանցի ընթացքում»:

Այսպես, Գերմանիայի Դաշնային Հանրապետության օրենսդրությամբ անչափահասի նկատմամբ կիրառվող կալանքը կարող է լինել կարճաժամկետ՝ շաբաթվա մեջ 2-ից 4 օր, կամ երկարաժամկետ՝ 1-ից 4 շաբաթ տևողությամբ: Կալանքը լայնորեն կիրառվում է նաև Իսպանիայում, Իտալիայում, Անգլիայում: Իսպանիայում կալանքը կիրառվում է միայն հանգստի օրերին, կալանքի նվազագույն ժամկետը մեկ հանգստյան օրն է, առավելագույնը՝ քսանչորս հանգստյան օրը:

Բացի կալանքի ժամկետը կրճատելուց կարևոր է նաև, որ այդ ընթացքում անչափահասի հետ որոշակի աշխատանք իրականացվի՝ կրթա-

կան ծրագրեր, հանրօգուտ աշխատանքների ներգրավում, դաստիարակչական, հոգեբանական ներգործություն:

Գտնում ենք, որ ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 86-ում որպես պատժատեսակ պետք է նախատեսվի ազատության սահմանափակումը՝ կախված հանցագործության բնույթից, որոշակի վայրերի և հաստատությունների, ինչպես նաև որոշակի անձանց հետ շփվելու իրավունքից զրկելով, որի իմաստը դատապարտյալին առանց հասարակությունից մեկուսացնելու որոշակի ժամկետում նրա նկատմամբ հսկողություն իրականացումն է: Այս պատժատեսակի նախատեսումը հնարավորություն կտա ավելի քիչ դեպքերում ազատագրվման ձևով պատժատեսակը կիրառել: Սա հատկապես արդարացի քայլ է այն անչափահասների նկատմամբ, ովքեր ենթակա են բացասական ազդեցությունների. երևույթ, որն անխուսափելի է հասարակությունից մեկուսացնելու հետ կապված ցանկացած պատժի կիրառման պայմաններում: Համաձայն «Պեկինյան կանոնների» 19 կետի՝ «անչափահասին որևէ ուղղիչ հիմնարկում ներփակելը միշտ պետք է ծայրահեղ միջոց լինի՝ նվազագույն ժամկետով կիրառված»: Ուստի՝ կարծում ենք, որ համապատասխան պատժատեսակի նախատեսումը լավագույն լուծումն է կալանք պատժատեսակի փոխարինման գործում, եթե առաջնորդվում ենք միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներով:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր 2010 թվականի նոյեմբերի 5-ի թիվ ԵԱԲԴ/0164/01/09 որոշման մեջ նշել է, որ հանցանք կատարած անձի նկատմամբ նշանակված պատիժը համարվում է արդարացի, եթե դատարանը ճիշտ է գնահատում գործի բոլոր հանգամանքները, հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, **հանցավորի անձը բնութագրող տվյալները**, ինչպես նաև պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները⁴: Դեռ ավելին, ՀՀ վճռաբեկ դատարանն իր մի շարք որոշումներում, անդրադառնալով պա-

³ Տե՛ս «Անչափահասների հանցավորության հոգեբանություն. հոգեբան Արշակ Գասպարյան» հոդվածը, <http://www.psy-mag.am/article/dossier/anchapahasneri-hancavorutyan-hwgebanutyun-hwgeban-arshak-gaspary.html>:

⁴ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԱԲԴ/0164/01/09 քրեական գործով 2010թ. նոյեմբերի 5-ին կայացրած որոշումը:

տիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներից մարդասիրական պատժի նշանակմանը, փաստել է, որ այն ունի երկու կողմ.

1. մարդասիրություն հասարակության նկատմամբ, որի էությունը տուժողի, հասարակության և պետության շահերի պաշտպանությունն է, և

2. **մարդասիրություն հանցանք կատարած անձի նկատմամբ**, այսինքն՝ մարդկային վերաբերմունք նրա անձի նկատմամբ, հարգանք պատվի և արժանապատվության նկատմամբ, **Ֆիզիկական և բարոյական տանջանքների բացառում**⁵:

Համակարգային վերլուծության ենթարկելով ՀՀ վճռաբեկ դատարանի վերոնշյալ նախադեպային որոշումները՝ կարող ենք եզրահանգել, որ անչափահասների նկատմամբ նշանակվող պատիժները պետք է լինեն անհամեմատ ավելի մեղմ՝ պայմանավորված նրանց անձի առանձնահատկություններով, որպեսզի պատիժ նշանակելիս կենսագործվի մարդասիրության սկզբունքը:

Ազատագրկում: Անչափահասների նկատմամբ նշանակվող ամենախիստ պատժատեսակը որոշակի ժամկետով ազատագրկումն է՝ չնայած առկա որոշակի առավելություններին: Այս պատժատեսակի կիրառման դեպքում անչափահասները կտրված են լինում սովորական տնային պայմաններից, դպրոցից կամ շրջապատից, ինչն անկասկած բացասական ազդեցություն է թողնում նրանց բարոյահոգեբանական ձևավորման վրա: Անչափահասի ազատագրկումը պատժի ծայրահեղ միջոց է, որը կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ դատարանի կարծիքով ոչ մի այլ միջոց չի կարող դրական արդյունք տալ⁶:

Մինչև 2004 թվականի օրենսդրական փոփոխությունը, ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 89-ի 1-ին մասի համաձայն՝ անչափահասի նկատմամբ ազատագրկում կարող էր նշանակվել միայն միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների համար: Փաստորեն ոչ մեծ ծանրության հանցանք կատարելու դեպքում անչափահասը ենթակա չէր ազատագրկման: Սա կարևոր դրույթ

էր, որը հետագայում վերացվեց, ինչի հետ այնքան էլ համամիտ չենք: Անչափահասների պարագայում պետք է առավելագույնս խուսափել ազատագրկման ձևով պատիժ նշանակելուց: Այսօր արդեն ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 89-ի 2-րդ մասի համաձայն՝ ազատագրկումն անչափահասների նկատմամբ նշանակվում է՝

1. ոչ մեծ ծանրության հանցագործության համար՝ առավելագույնը 1 տարի ժամկետով, իսկ միջին ծանրության համար՝ առավելագույնը 3 տարի ժամկետով,

2. մինչև 16 տարին լրանալը կատարած ծանր կամ առանձնապես ծանր հանցանքի համար՝ առավելագույնը 7 տարի ժամկետով,

3. 16 մինչև 18 տարին լրանալը կատարած ծանր կամ առանձնապես ծանր հանցանքի համար՝ առավելագույնը 10 տարի ժամկետով:

Մեր կարծիքով անչափահասների համար ազատագրկման ձևով նախատեսված այս պատժատեսակի չափերը պետք է փոփոխության ենթարկվեն. նախ՝ անհրաժեշտ է բացառել ոչ մեծ ծանրության հանցագործության համար ազատագրկման ձևով պատժի նշանակումը: Ինչ վերաբերում է միջին ծանրության հանցագործություններին, ապա ազատագրկման ձևով պատիժ պետք է նախատեսվի միայն բացառիկ դեպքերում, եթե այլ պատժատեսակներով հնարավոր չէ ուղղել անչափահասին և դա ամրագրված լինի ոչ միայն օրենսգրքով, այլ նաև կյանքի կոչվի իրավակիրառ պրակտիկայում: Մասնավորապես, առաջին անգամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անչափահասի նկատմամբ, անկախ տարիքից, որոշակի ժամկետով ազատագրկում չպետք է նշանակվի: Ծանր կամ առանձնապես ծանր հանցանքների համար գտնում ենք, որ ճիշտ է ազատագրկման ձևով պատիժ նախատեսելը, սակայն պետք է տարբերել այդ հանցագործություններն իրարից և դրանց համար առավելագույն պատիժը նույն չափով չսահմանել՝ հաշվի առնելով միայն հանցագործի տարիքը: Անհրաժեշտ է սահմանափակել հանցանք կատարած անչափահասների նկատմամբ ազատագրկման ձևով պատիժ նշանակելու հնարավորու-

⁵ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/0042/01/11 քրեական գործով 2011թ. դեկտեմբերի 22-ին կայացրած որոշումը:

⁶ Տե՛ս «ՀՀ քրեական իրավունք: Ընդհանուր մաս»: Եր., - Եր.համլս. հրատ., 2009թ., էջ 529:

թյունները: Տվյալ հանգամանքն անհրաժեշտ է ուղղակի նախատեսել քրեական օրենսգրքում:

«Քրեական օրենսգրքի հոդված 90-ի 2-րդ մասի համաձայն՝ մինչև 16 տարին լրանալը միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարած անձանց նկատմամբ ազատազրկումը ըստ հանցագործությունների համակցության, չի կարող գերազանցել 7 տարին, իսկ 16 մինչև 18 տարին լրացածներինը՝ 10 տարին: Դատավճիռների համակցության դեպքում պատիժը չի կարող գերազանցել 12 տարին:

Իրավակիրառ պրակտիկայում որոշակի խնդիրներ են առաջանում անչափահասների նկատմամբ ազատազրկումը որպես պատժատեսակ նշանակելու առավելագույն շեմի որոշման կապակցությամբ: «Քրեական օրենսգիրքը, ի տարբերություն Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգրքի, չի սահմանել անչափահասների նկատմամբ ազատազրկման ձևով նշանակվող պատիժների նվազագույն շեմը, որի ամրագրման դեպքում այս խնդիրը շատ հմտորեն կշրջանցվեր: Օրինակ՝ եթե 14 տարին լրացած անձը կատարում է «Քրեական օրենսգրքի հոդված 104-ի 2-րդ մասով նախատեսված արարք, որի համար որպես պատիժ սահմանված է ազատազրկում տասներկուսից քսան տարի ժամկետով կամ ցմահ ազատազրկում, սակայն միևնույն ժամանակ «Քրեական օրենսգիրքը սահմանում է, որ 14-16 տարեկան հասակում հանցանք կատարած անչափահասների նկատմամբ ազատազրկման ձևով պատժատեսակը չի կարող գերազանցել 7 տարին, իսկ 16-18 տարեկան անչափահասների դեպքում՝ 10 տարին (հասկանալի է, որ անչափահասների նկատմամբ ցմահ ազատազրկում չի կարող նշանակվել): Այսինքն՝ դատարանը, այլ ելք չունենալով, պետք է պատիժ նշանակի՝ օրենքով նախատեսված առավելագույն ժամկետով, որը միևնույն է նվազ է, քան «Քրեական օրենսգրքի հատուկ մասով սահմանված հանցակազմի սանկցիայի նվազագույն շեմը: Հաստատապես կարող ենք փաստել, որ այդ դեպքում նշանակված պատիժն

արդարացի չի լինի և չի համապատասխանի արարքի հանրային վտանգավորությանը և հանցանք կատարող անձին: Ուստի, հաշվի առնելով վերոնշյալը, իրավակիրառ պրակտիկայում դատարանները կիրառում են «Քրեական օրենսգրքի հոդված 64-ը և նշանակում օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ: Սակայն գտնում ենք, որ այս հարցը պետք է վերջնականապես լուծվի օրենսդրի կողմից, որն իր արտահայտությունը պետք է գտնի «Քրեական օրենսգրքում, այլ ոչ թե յուրաքանչյուր կոնկրետ դեպքում դատարանը, արդարացի պատիժ նշանակելու գաղափարից ելնելով, շրջանցի օրենքով սահմանված կարգը: Առաջարկում ենք որպես նվազագույն պատժաչափ սահմանել «Քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածի սանկցիայով նախատեսված որոշակի ժամկետով ազատազրկման ստորին շեմի կետը:

Արտասահմանյան մի շարք երկրների քրեական օրենսդրություններում անչափահասների նկատմամբ ազատազրկում պատժատեսակը կիրառելու լուրջ սահմանափակումներ են նախատեսված: Այսպես, Անգլիայում անչափահասների նկատմամբ ազատազրկումը դասական իմաստով չի կիրառվում: Անգլիայի «Քրեական արդարադատության մասին» 1988 թվականի օրենքի համաձայն՝ անչափահասների նկատմամբ կարող է նշանակվել ազատությունից զրկելու հետ կապված մեկ պատժատեսակ՝ երիտասարդ հանցագործների համար նախատեսված հաստատությունում տեղավորելը: Գերմանիայի «Երիտասարդների արդարադատության մասին» օրենքի 18-րդ պարագրաֆի առաջին մասի համաձայն՝ անչափահասների նկատմամբ նշանակվող ազատազրկման նվազագույն ժամկետը 6 ամիսն է, իսկ առավելագույն ժամկետը՝ 5 տարին: Միայն այն հանցագործությունների դեպքում, որոնց համար քրեական օրենսգրքով նախատեսված է 10 տարուց ավելի ժամկետով ազատազրկում, անչափահասը կարող է դատապարտվել առավելագույնը 10 տարի ժամկետով ազատազրկման:

Արամ Վարդևանյան

ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահի խորհրդական,
Հայ-Ռուսական համալսարանի քրեական իրավունքի և քրեական
դատավարության իրավունքի ամբիոնի դասախոս,
իրավաբանական գիտությունների թեկնածու

Սամվել Յուզբաշյան

Երևանի կայազորի զինվորական դատախազության
դատախազ, իրավաբանական գիտությունների թեկնածու

Որոշ խնդիրներ քրեական գործով վարույթը կասեցնելու մասին որոշման բողոքարկման մեխանիզմների վերաբերյալ

Գիտական հոդվածի շրջանակներում քննարկվում են քրեական գործով վարույթի կասեցման քրեադատավարական ինստիտուտի հիմնահարցերը: Հեղինակների կողմից առաջ քաշված հիմնախնդիրը կայանում է նրանում, որ գործող օրենսդրական կարգավորումները ամբողջությամբ չեն երաշխավորում տուժողի իրավունքը՝ բողոքարկելու քրեական գործով վարույթի կասեցման մասին որոշումը: Իրականացվում է նաև ՀՀ և ՌԴ քրեական օրենսդրության համեմատա-իրավական ուսումնասիրություն: Հեղինակները օրենսդրական առաջարկ են կատարում ՀՀ և ՌԴ քրեադատավարական օրենսդրությունների կատարելագործման վերաբերյալ:

Բանալի բառեր. քրեական գործով վարույթը կասեցնելու մասին որոշում, տուժող, քննիչ, որոշումը բողոքարկելու իրավունք:

Арам Вардеванян

Советник председателя конституционного суда РА,
преподаватель кафедры уголовного права и уголовно-
процессуального права Российско-Армянского (Славянского)
университета, кандидат юридических наук

Самвел Юзбашян

Военный прокурор Ереванского гарнизона
кандидат юридических наук

Некоторые проблемы относительно действующих механизмов обжалования решения о приостановлении производства по уголовному делу

В рамках данной научной статьи рассматриваются проблемные вопросы уголовно-процессуального института приостановление производства по уголовному делу. Проблема выдвинутая авторами заключается в том, что, действующие законодательные регулирования не полностью гарантируют право потерпевшего на обжалование решения о приостановлении производства по уголовному делу. Проводится также сравнительно-правовое исследование уголовных законодательств РФ и РА. Авторы предлагают законодательные предложения усовершенствования уголовно-процессуальных законодательств РА и РФ.

Ключевые слова: решения о приостановление производства по уголовному делу, потерпевший, следователь, право на обжалование решения.

Aram Vardevanyan

Adviser to the president of the Constitutional court of RA,
lecturer at the department of criminal law and criminal
procedural law at the Russian-Armenian (Slavonic)
university, doctor of philosophy in law

Samvel Yuzbashyan

Prosecutor at the Yerevan garrison military
prosecutor's office, doctor of philosophy in law

**Some issues about the mechanisms for the appeal of the decision
on suspending the criminal case**

The article discusses issues regarding the criminal procedural institute of the suspension of the criminal case. The issue that the Authors raise is that the current regulations of the Criminal Procedural Code do not guarantee the right of the injured person to appeal the decision on suspension of the criminal case. Comparative legal analysis between the legislation of Republic of Armenia and that of Russian Federation is presented in the article. Based on the carried out research, the authors make necessary recommendations aiming at the development of the legislation of RA and RF.

Keywords: decision on suspension of the criminal case, injured person, investigator, the right to appeal the decision.

* * *

Երեմիա Ասատրյան

ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ին կից
Քրեաբանության կիրառական հիմնախնդիրների գիտահետազոտական կենտրոնի պետ

Արամ Սիրեկանյան

ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ին կից
Քրեաբանության կիրառական հիմնախնդիրների գիտահետազոտական կենտրոնի քրեաբան

**Սեռական բնույթի հանցագործությունների վիկտիմիզացիայի և վիկտիմայնության
առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում**

Հանցավորության և դրա առանձին տեսակների պատճառական համալիրի, հանցավորությանը նպաստող գործոնների ուսումնասիրությունը, ինչպես նաև հանցագործությունների դեմ պայքարի պրակտիկան ցույց են տվել, որ հանցավոր վարքագծի պատճառական մեխանիզմում էական դեր է կատարում տուժողը: Հանցագործությունից տուժողի անձնային առանձնահատկությունները, հանցագործությունից առաջ և դրա ընթացքում նրա դրսևորած վարքագիծը շատ դեպքերում նպաստում են հանցանքի կատարմանը, հանցավորի մեջ ձևավորում են հանցանք կատարելու դիտավորություն կամ հեշտացնում են հանցանքի կատարումը: Որոշ դեպքերում տուժողի վարքագիծը պրովոկացիոն բնույթ է կրում, երբ նա իր հակաիրավական կամ հակաբարոյական վարքագծով հրահրում է իր նկատմամբ հանցանքի կատարումը: Հոդվածում խոսվում է սեռական բնույթի հանցագործությունների կրիմինալոգիական և վիկտիմոլոգիական գործոնների, այդպիսի հանցագործություններից տուժողների անձնային, հոգեբանական որոշ առանձնահատկությունների, հանցագործության կատարման մեխանիզմում տուժողի դերի և վարքագծի առանձնահատկությունների մասին:

Բանալի բառեր. հանցավորություն, կրիմինալոգիա, վիկտիմոլոգիա, վիկտիմիզացիա, սեռական բնույթի հանցագործություններ, տուժող, բռնություն:

Еремия Асатрян

Начальник Научно-исследовательского центра прикладных проблем криминологии при ГНКО “Национальное бюро экспертиз” НАН РА

Арам Сиреканян

Криминалист Научно-исследовательского центра прикладных проблем криминологии при ГНКО “Национальное бюро экспертиз” НАН РА

Особенности виктимизации и виктимности преступлений сексуального характера в Республике Армения

Изучение причинного комплекса преступности и отдельных ее видов и факторов влияющих на преступность, а также практика борьбы с преступностью, показали, что потерпевший имеет важную роль в причинно-следственном механизме преступного поведения. Личностные особенности жертвы, ее поведение до и во время преступления во многих случаях способствует совершению преступления, в преступнике формулируют намерение совершить преступление или облегчают совершение преступления. В некоторых случаях поведения жертвы очень провоцирует, когда он своим аморальным или противоправным поведением вызывает совершения преступления против него. В статье говорится о криминологических и виктимологических факторах *преступлений сексуального характера, об особенностях личностных и психологических качеств потерпевших* в таких преступлениях, *об особенностях роли и поведения потерпевшего в механизме преступления.*

Ключевые слова: преступность, криминология, виктимология, виктимизация, преступление сексуального характера, потерпевший, насилие.

Yeremia Asatryan

Head of the Scientific Research Center of Applied problems in Criminology adjacent to “National Bureau of Expertises” SNPO NAS, RA

Aram Sirekanyan

Criminologist at the Scientific Research Center of Applied problems in Criminology adjacent to “National Bureau of Expertises” SNPO NAS, RA

The specifics of the victimization and victim-proneness in the crimes of sexual nature in RA

The study of crime, its causal complex of its separate types, and the factors fostering crime, as well as the practice of struggling against crime have shown that the victim has an essential role in the criminal behavior of causal mechanism. Victim’s personal peculiarities, before the crime and during it, his/her behavior in many cases contribute to the commitment of a crime, develop in a criminal an intent to commit a crime or facilitate commitment of crime. In some cases victim’s behavior is very provocative, when his illegal or immoral behavior provokes commitment of a crime against him. *The article discusses the criminological and victimological factors of the crimes of sexual nature, some features of personal and psychological qualities of victims of such crimes, and the features of the role and behavior of victims in the mechanism of crime.*

Keywords: crime, criminology, victimology, victimization, crimes of sexual character, victim, violence.

Արևհատ Հովհաննիսյան

իրավաբանական գիտությունների թեկնածու

Բնական իրավունքի հայեցակարգն ըստ հին Հունաստանի իմաստասերների

Բնական իրավունքի տեսությունն անցել է զարգացման բավականին երկար ճանապարհ՝ սկսած անտիկ աշխարհից, երբ մեծագույն հին հունական փիլիսոփաները արտահայտում էին կարծիք այն մասին, որ մարդկանց կողմից ստեղծված գրված օրենքների հետ միասին գոյություն ունեն «մարդկանց սրտերում աստվածային գիտակցությամբ հաստատված չգրված օրենքներ»: Այլ խոսքերով, բացի մարդկանց կողմից ստեղծված և պետության գոյությամբ պայմանավորված օրենքների, կան նաև մարդկանց կամքից անկախ գոյություն ունեցող իրավունքներ, որոնք կազմում են բնական իրավունքը:

Համաձայն Արիստոտելի՝ «Բնական իրավունքն ամենուր ունի միևնույն իմաստը և կախված չէ նրա ճանաչված կամ չճանաչված լինելուց»:

Համաձայն բնական իրավունքի հայեցակարգի, արդարությունը, ազատությունը, հավասարությունը կազմում են իրավունքի միջուկը, պայմանավորում են իրավաստեղծ և իրավակիրառ ընթացակարգերը: Մարդու իրավունքների աղբյուրը ոչ թե պետական օրենքներն են, այլ մարդկային բնույթն է:

Բանալի բառեր. բնական իրավունք, չգրված օրենքներ, համընդհանուր հավասարություն, արդարություն, ազատություն, անկախություն

Ареват Оганисян

Кандидат юридических наук

Концепция естественного права согласно древнегреческих мыслителей

Теория естественного права прошла довольно длительный путь развития - начиная с античного мира, когда величайшие древнегреческие философы выражали мнение о том, что наряду с письменными законами, созданными людьми, существуют “неписанные законы, навечно встроенные в сердца людей божественным разумом”. Другими словами, кроме законов, обусловленных существованием государства и созданных людьми, есть также права, существующие независимо от воли людей, которые составляют естественное право.

Согласно Аристотелю: “Естественное право везде имеет одинаковый смысл и не зависит от его признания или непризнания”.

Согласно концепции естественного права, справедливость, свобода, равенство, составляют ядро права, обуславливают правосоздающие и правоприменяющие процессы. Источником прав человека являются не государственные законы, а человеческая природа.

Ключевые слова: естественное право, неписанные законы, всеобщее равенство, справедливость, свобода, независимость

Arevhat Hovhannisyán

Ph.D in Laws

Concept of natural law according to ancient Greek thinkers

The theory of natural law has gone through a long period of development starting from the ancient world, when the ancient Greek philosophers were of the opinion that, along with the written laws created by humans, there were permanent unwritten laws embodied in human hearts with divine rational. In other words, except the laws created by humans and related to the existence of state, there are also laws independent from the will of peoples, which form natural law.

According to Aristotle, the natural law has the same meaning everywhere and does not depend on whether it is recognized or not.

According to the concept of natural law, justice, liberty and equality constitute the core of the law, and determine the processes of creating and applying laws. The source of human rights is not the law of the state but the nature of humankind.

Keywords: natural law, unwritten laws, universal equality, justice, freedom, independence.

Մարինե Գյուրջյան

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի
իրավագիտության ամբիոնի հայցորդ

Մարդու իրավունքների եվրոպական դատարանին ուղղված դիմումների բովանդակությանը և ձևին ներկայացվող պահանջները

Եվրոպական իրավունքի արագընթաց զարգացման պայմաններում ՄԻԵԴ օրեցօր առավել հասանելի է դառնում այն անձանց համար, ովքեր ցանկանում են իրենց խախտված սահմանադրական իրավունքների ու ազատությունների պաշտպանությունն իրականացնել միջազգային ատյանների մակարդակով:

Սակայն այս կամ այն բողոքը քննության ընդունելուց առաջ ՄԻԵԴ-ն ուսումնասիրում է դիմումը՝ բովանդակությանը և ձևին ներկայացվող պահանջների պահպանման տեսանկյունից: Դիմումի «ընդունելիության» հասկացությունը ոչ միայն տեսական, այլև գործնական հասկացություն է, որից էլ կախված է ՄԻԵԴ-ի արդարադատական գործունեության բնույթն ու ուղղվածությունը: Այս հասկացությունն իր մեջ ներառում է նախապայմանների մի խումբ առանց որոնց պահպանման ոչ մի դիմում քննության չի կարող ընդունվել:

Բանալի բառեր. մարդ և քաղաքացի, իրավունքներ և ազատություններ, մարդասիրություն, համընդհանրություն, գերակայություն:

Марине Гурджян

Соискатель кафедры юриспруденции
Академии государственного правления РА

Критерии к содержанию и форма заявления в Европейский суд по правам человека

В условиях быстрого развития Европейского права, ЕСПЧ с каждым днем становится все более доступным для тех лиц, кто желает осуществить защиту своих нарушенных конституционных прав и свобод на международном уровне. Но перед тем, как принять ту или иную жалобу, ЕСПЧ изучает заявление с точки зрения требований, предъявляемых к содержанию и форме заявлений. Понятие “приемлемости” заявления-это не только теоретическое, но и практическое понятие, от которого зависит сущность и направление правовой деятельности ЕСПЧ. Данное понятие содержит группу условий, без соблюдения которых не одно заявление не может быть принято на обсуждение.

Ключевые слова-человек и гражданин, права и свободы, человеколюбие, всеобщность, верховенство.

Marine Gyurjyan

Postgraduate student at the Public Administration
Academy of the Republic of Armenia, Chair of Law

Criteria Applying on the Content and Form of an Applications to the European Court of Human Rights

With the rapid development of European law, the ECHR day by day is becoming more accessible to those who wish to implement the protection of their violated constitutional rights and freedoms in international instances. However, before taking a particular complaint for examining, the ECHR examines the application in terms of the requirements for the form and content of applications. The concept of “admissible” statement is not only theoretical but also practical concept, on which depends the nature and direction of the legal activities of the ECHR. This concept comprises a group of conditions, without those not a single application can be accepted for discussion.

Keywords: man and citizen, rights and freedoms, humanity, universality supremacy.

Лилит Еремян
Соискатель РАУ

Принцип защиты природной среды в рамках международного гуманитарного права

В статье проанализированы некоторые аспекты международно-правового регулирования охраны окружающей природной среды в контексте международного гуманитарного права, а также проведен анализ некоторых положений национального законодательства РА по имплементации своих международно-правовых обязательств в данной сфере.

Ключевые слова: международное гуманитарное право, принцип защиты окружающей природной среды, имплементация международно-правовых обязательств.

Լիլիթ Երեմյան
ՀՌՀ հայցորդ

Շրջակա բնական միջավայրի պաշտպանության սկզբունքը միջազգային հումանիտար իրավունքում

Հոդվածում ներկայացված են միջազգային հումանիտար իրավունքի համատեքստում շրջակա միջավայրի պաշտպանության միջազգային իրավական կարգավորման որոշ հիմնախնդիրները, ինչպես նաև տվյալ ոլորտում իր միջազգային-իրավական պարտավորությունների իրականացմանն ուղղված ՀՀ ներպետական օրենսդրության որոշ դրույթների վերլուծությունը:

Բանալի բառեր. միջազգային հումանիտար իրավունք, շրջակա միջավայրի պաշտպանության սկզբունք, միջազգային-իրավական պարտավորությունների իմպլեմենտացիա:

Lilit Yeremyan
PhD student at RAU

The Principle of Protection of Natural Environment in the Framework of International Humanitarian Law

Current article dwells on certain aspects of international legal regulation of protection of natural environment in the framework of International Humanitarian Law, as well as the analysis of relevant provisions of Armenian national legislation aimed at proper implementation of international obligations in the mentioned field.

Keywords: International Humanitarian Law, principle of protection of natural environment, implementation of international-legal obligations.

Արմեն Հարությունյան

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության
ամբիոնի հայցորդ, ՀՀ ԱՆ ՊԱՀԿ ծառայության,
Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն բաժնի պետ

**Կատարողական վարույթում իրավահարաբերությունների
բնույթը և դրանց զարգացման արդի միտումները**

Դատական, իսկ վերջին շրջանում նաև որոշ վարչական ակտերի հարկադիր կատարման գործառույթը վստահված է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կազմում գործող դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը: Այդ գործառույթն իրականացվում է վարչական վարույթի հատուկ տեսակի՝ կատարողական վարույթի շրջանակում: Կատարողական վարույթը, ըստ որոշ իրավագետների, ներկայումս իրենից ներկայացնում է իրավունքի համալիր համակարգի ինքնուրույն ճյուղերից մեկի՝ կատարողական իրավունքի կարգավորման առարկան:

Քանի որ կատարողական վարույթի զարգացման հեռանկարների կանխատեսումն ունի գիտագործնական զգալի նշանակություն, սույն հոդվածում անդրադարձ է կատարվել Հայաստանի Հանրապետության իրավունքի համալիր համակարգում կատարողական վարույթում ծագող իրավահարաբերությունների բովանդակությանը, տեղին ու դերին առնչվող հարցադրումներին՝ օգտագործելով քաղաքացիական և վարչական հարաբերությունների համեմատական և համադրման մեթոդը:

Բանալի բառեր. Կատարողական իրավունք, կատարողական վարույթ, վարչական վարույթ, վարչական և դատական ակտեր:

Армен Арутюнян

Соискатель Кафедры юриспруденции
Академии государственного управления РА
Начальник отдела Ачапняк и Давидашен города Еревана
Службы принудительного исполнения судебных актов
Министерства юстиции РА

**Характер Правовых Отношении в Исполнительном Производстве и
Современные тенденции их Развития**

Судебные, а в последнее время также некоторые административные функции принудительного исполнения возложены на органов Службы принудительного исполнения судебных актов при Министерстве юстиции Республики Армения. Эта функция реализована в рамках особого вида административного производства - исполнительного производства. Исполнительное производство, по мнению некоторых юристов, в настоящее время представляет собой предмет регулирования исполнительного права - одной из самостоятельных отраслей сложной системы права.

Поскольку прогнозирование перспективы развития исполнительного производства имеет большое научно-практическое значение, эта статья ссылается на запросы, связанные с содержанием, местом и ролью правоотношений, возникающих в рамках исполнительного производства сложной системы права Республики Армения, с использованием метода сравнения и сопоставления гражданских и административных отношений.

Ключевые слова: исполнительное право, исполнительное производство, административное производство, административные и судебные акты.

Armen Harutyunyan

Postgraduate student at the Public Administration Academy of the Republic of Armenia, Chair of Law; Head of Yerevan City Ajapnyak and Davtashen Department of Service of the Compulsory Enforcement of the Judicial Acts of the Ministry of Justice of the Republic of Armenia

The nature of legal relations in the enforcement proceedings and current trends of their development

The function of compulsory enforcement of judicial acts, also some administrative acts, has recently been conferred on the Service Compulsory Enforcement of the Judicial Acts under the Ministry of Justice of the Republic of Armenia. This function is performed within the framework of a specific type of administrative proceedings – enforcement proceedings. According to some law specialists, enforcement proceedings are currently the subject matter of the enforcement law – an individual field of the complex system of law.

As the prediction of the developments in prospects of enforcement proceedings has scientific and practical significance, this article touches upon the issues on the content, place and role of legal relations emerging in the enforcement proceedings within the complex system of law in the Republic of Armenia, by using the method of comparison and synthesis of civil and administrative relations.

Keywords: enforcement law, enforcement proceedings, administrative proceedings, administrative and judicial acts.

* * *

Տիգրան Ղազարյան

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրա 1-ին կուրսի ուսանող

Անչափահասների նկատմամբ նշանակվող ազատագրկման հետ կապված պատժատեսակները

Անչափահասների նկատմամբ կիրառվող պատիժների համակարգում ազատագրկման հետ կապված պատժատեսակներից նախատեսվել են միայն կալանքը և որոշակի ժամկետով ազատագրկումը: Այս պատժատեսակները անհամեմատ ավելի խիստ և ոչ նպատակահարմար են անչափահասների նկատմամբ կիրառելու համար, ուղղված են անչափահասին հասարակությունից մեկուսացնելուն՝ հաշվի չառնելով վերջինիս տարիքով պայմանավորված հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունները: Ազատագրկման պայմաններում դեռևս չկայունացած անչափահասի սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները հնարավոր է այնպիսի փոփոխությունների ենթարկվեն, որ անչափահասի կողմից կրկին հանցագործություն կատարելու հավանականությունը մեծանա:

Միջազգային մի շարք փաստաթղթեր սահմանում են այն հիմնական դրույթներն ու չափորոշիչները, որոնք պետք է հիմք դառնան բոլոր երկրներում անչափահասների նկատմամբ ազատագրկման հետ կապված պատժատեսակների նշանակման, արդարադատության արդյունավետ իրականացման համար՝ հաշվի առնելով նրանց մտավոր և ֆիզիոլոգիական զարգացվածության աստիճանն ու առանձնահատկությունները:

Բանալի բառեր. անչափահաս, ազատագրկում, կալանք, քրեական պատասխանատվություն, 14-16 տարեկան, մարդասիրության սկզբունք, պատիժ, արդարադատություն, երիտասարդ:

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 86 2015

Тигран Казарян

студент первого курса магистратуры
юридического факультета ЕГУ

Связанные с назначениями видов наказания несовершеннолетних

В системе наказаний, используемых в отношении несовершеннолетних из всех наказаний, связанных с лишением свободы предусматриваются только арест и лишение свободы на определенный срок. Эти виды наказания гораздо более жесткие и не подходят для использования в отношении несовершеннолетних, направлены на изоляцию несовершеннолетнего от общества без учета психофизиологических особенностей последнего. В условиях лишения свободы социально-психологические особенности несовершеннолетнего могут подвергнуться таким изменениям, которые повышают вероятность совершения преступления со стороны несовершеннолетнего.

Ряд международных документов устанавливают те основные положения и нормы, которые должны стать основой для всех стран для назначения наказания, эффективного осуществления правосудия в связи с лишением свободы в отношении несовершеннолетних, с учетом степени и особенностей их умственного и физиологического уровня.

В статье предлагаются конкретные мероприятия, направленные на совершенствования системы наказаний несовершеннолетних.

Ключевые слова: несовершеннолетний, приговор, лишение свободы, арест, уголовная ответственность, 14-16 лет, принцип гуманности, наказание, справедливость, молодой.

Tigran Ghazaryan

LL.M 1st year student, YSU

Types of Punishment Related to Imprisonment Given to Minors

In the applied system of punishment towards the juveniles only detention and imprisonment for a term are envisaged as punishments connected with the deprivation of liberty. These punishments are much more strict and not expedient to apply towards juveniles, they are directed to isolate the juvenile from the society not taking into account his/her psycho-physiological peculiarities conditioned with the latter's age. Under the conditions of imprisonment the social-physiological peculiarities of immature juvenile may be changed in a way strengthening the possibility of committing a crime once again by the juvenile.

A number of international documents define the main provisions and criteria which should serve as bases for the application of punishments connected to imprisonment towards the juveniles and effective implementation of justice in all countries taking into account the mental and physiological level of development and peculiarities.

Keywords: juvenile, imprisonment, detention, criminal liability, 14-16 year-old, principle of humanity, punishment, justice, young.



ՀՀ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԳԵՍՈՒՄ ՏՊԱԳՐՎՈՂ ՀՈՂՎԱԾՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ԴԱՅԱՆՑՆԵՐԸ

Հանդեսում տպագրվող հոդվածները պետք է կրեն գիտագործնական կամ ուսումնամեթոդական բնույթ: Հոդվածը պետք է վերաբերվի իրավագիտության ոլորտին, իսկ բացառիկ դեպքերում՝ մեծ հետաքրքրություն վայելող, գիտագործնական մեծ արժեք ներկայացնող ուսումնասիրություններին:

Հոդվածը ներկայացվում է թղթային՝ տպագիր, և էլեկտրոնային (Microsoft Word) տարբերակներով: Թղթային տարբերակը ներկայացնել Հանդեսի խմբագրություն՝ ՀՀ, ք. Երևան, Վ.Սարգսյան 5 հասցեով, իսկ էլեկտրոնային տարբերակն ուղարկել orinakanutyun@prosecutor.am հասցեով:

Հոդվածը պետք է պարունակի վերնագիր (մինչև 20 բառ) և շարադրվի 8-10 էջերի սահմաններում:

- Հոդվածին կից պետք է նաև երեք լեզուներով (հայերեն, ռուսերեն և անգլերեն) ներկայացնել՝
- ա) Սեղմագիր (Абстракт, Abstract),
 - բ) Բանալի բառեր (Ключевые слова, Keywords),
 - գ) հեղինակի մասին հակիրճ տեղեկություն:

Սեղմագիրը 300-500 բառի սահմաններում պետք է պարունակի հոդվածի համառոտ շարադրանքը: Բանալի բառերի քանակը յուրաքանչյուր լեզվով չպետք է հինգից պակաս լինի:

Եթե հոդվածի հեղինակը գիտական աստիճան չունի, ապա հոդվածի հետ միասին պետք է ներկայացնի կարծիք (այսուհետ՝ Կարծիք)՝ տվյալ հոդվածի՝ գիտականորեն հիմնավորված լինելու, գիտական նորույթի, հոդվածում բարձրացված խնդրի ու դրա արդիականության մասին: Իրավագիտության ոլորտին վերաբերվող հոդվածների դեպքում Կարծիք կարող է տալ իրավաբանական գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող անձը, կամ իրավագիտության ոլորտում մեծ հեղինակություն վայելող իրավաբանը: Գիտության այլ ոլորտներին վերաբերվող հոդվածների դեպքում Կարծիք կարող է տալ այդ գիտության թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող անձը, ինչպես նաև այդ գիտության ոլորտում մեծ հեղինակություն վայելող մասնագետը:

Հոդվածի հայերեն տեքստը շարադրել GHEA Grapalat, ռուսերեն տեքստը՝ Baltica Cyrillic, իսկ անգլերեն տեքստը՝ Times New Roman տառատեսակներով: Հոդվածի յուրաքանչյուր էջ պետք է լինի A4/201x297 մմ/ չափի և ունենան լուսանցքներ՝ ձախից՝ 30մմ, աջից՝ 10մմ, վերևից՝ 20մմ, ներքևից՝ 25մմ: Հոդվածի հիմնական տեքստը շարադրել 12 տառաչափով, միջտողային հեռավորությունը՝ 1.5, իսկ վերնագրերը՝ 14 տառաչափով և մուգ (Bold):

Այն դեպքում, երբ հեղինակն օգտվում է այլ անձանց, գիտնականների աշխատանքներից և այլ աղբյուրներից, այդ մասին պետք է պատշաճ ձևով նշում կատարվի տեքստում և/կամ հղումը տրվի ծանոթագրության միջոցով՝ յուրաքանչյուր էջում: Ծանոթագրության մեջ ներառել հետևյալ տվյալները՝ հեղինակ(ներ)ի ազգանուն(ներ)ը, անուն(ներ)ը, նյութի լրիվ անվանումը, հրատարակության տեղը, հրատարակչությունը, քաղաքը, տարեթիվը, հատորը, էջը: Օտարալեզու աղբյուրները չեն թարգմանվում: Ինտերնետային աղբյուրներից օգտվելու դեպքում ծանոթագրության մեջ պետք է նշվի ինտերնետային հասցեն, և հղում կատարելու վերջին ամսաթիվը: Արգելվում է այլ հեղինակների կարծիքը, միտքը, աշխատանքը ներկայացնել իբրև սեփական, օգտագործել ուրիշի գաղափարը, միտքը, վերլուծությունը առանց հղում կատարելու:

Հանդեսում տպագրվող հոդվածներն ամբողջությամբ արտահայտում են հեղինակների դիրքորոշումներն ու վերլուծությունները և հնարավոր է չհամընկնեն ՀՀ դատախազության դիրքորոշման հետ: ՀՀ դատախազությունը պապատասխանավորություն չի կրում հոդվածի հեղինակի արտահայտած կարծիքի համար:

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 86 2015